全国百佳图书出版单位
时代出版传媒股份有限公司
安徽人民出版社

Հրատարկությունն իրագործվել է
Անհույի ժողովրդական հրատարակչատան/ՉԺՀ/
թույլտվությամբ և աջակցությամբ:

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

中国民俗文化丛书——民居卷；董强 编著

DONG QIANG

RESIDENCE

Translator - Khoren GASPARYAN

Stepanakert 2017

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

ԿԱՑԱՐԱՆՆԵՐ

Թարգմանիչ՝
Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ստեփանակերտ 2017

ՀՏԴ 391/398:93/94
ԳՄԴ 63.5+82.3+63.3
Ք 530

«Գեղarm» հանդեսի մատենաշար

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ
Ք 530 Կացարաններ: Թարգմ. անգլերենից՝ Խ. Գասպարյան:
Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հրատ., 2017, 100 էջ:

Չինական ֆոլկլորին նվիրված հնգհատորյա շարքի «Կացարաններ» գրքում ներկայացված են Չինաստանում բնակվող ազգությունների բնակատեղիները, դրանց առաջացման պատմությունը, ազգային առանձնահատկություններն ու տարբերությունները, ինչպես նաև այդ ազգությունների յուրատեսակ սովորույթներն ու ավանդույթները՝ կապված կրոնական հավատալիքների, նիստուկացի եւ կենսական այլ երեւույթների հետ: Գիրքը կհետաքրքրի պատմաբաններին, բանահյուսությամբ և ազգագրությամբ զբաղվող մասնագետներին:

ISBN 978-9939-1-0493-5

ՀՏԴ 391/398:93/94
ԳՄԴ 63.5+82.3+63.3

© Anhui People's Publishing House
Գրքի հեղինակային իրավունքը պատկանում է
Անհույի ժողովրդական հրատարակչատանը (ՉԺՀ)

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար, 2017/

ԼՅՈՍԱՅԻՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԻ ՔԱՐԱՆՁԱՎԱՅԻՆ ԺԱՅՌԱՓՈՐ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԸ

Շենսին, որը նաև անվանում են Սանցին եւ հայտնի է որպես չինական քաղաքակրթության ծննդավայր, գտնվում է Չինաստանի հյուսիս-արևմուտքում: Բացառիկ աշխարհագրական միջավայրը, կլիման, ազգային սովորույթները ձևավորում են երկարատև անզուգական հմայք ունեցող բնակելի ճարտարապետական կառույցներ, որոնց թվում են մեզ ծանոթ քարանձավային կամ ժայռափոր կացարանները:

1. Քարանձավաբնակության (տրոգլոդիտիզմի) առաջացումը

Քարանձավային կացարանները՝ Լյոսային բարձրավանդակի մարդկանց սովորական տները, լայնորեն տարածված են Դեղին գետի (Խուանխեի) միջին կամ ստորին հոսանքներում: Յուրահատուկ այդ բնակավայրերը կառուցված են տեղաբնիկ մարդկանց կողմից տեղական շինանյութով՝ լյոսով (բաց դեղնավուն, փխրուն, ոչ շերտավոր, միատարր կրաքարային նստվածքային ապար - ծ. թ.), որն ունի հետևյալ հատկանիշները՝ հեշտ կտրվող է, պահպանում է ջերմությունը, ամուր է և դիմացկուն: Իրենց ձևով քարանձավային կացարանները ենթադրաբար կապված են նախնադարյան մարդկանց կենսական սովորույթների հետ: Ըստ որոշ համապատասխան հնագիտական գտածոների՝ Յանշաոյի քարեդարյան մշակույթի ավերակները 5000 տարվա պատմություն ունեն. դրանք պեղումների ժամանակ հայտնաբերվել են Բանպոյում՝ Սիանի մերձակայքում, որ գտնվում է Դեղին գետի միջին հոսանքում: Ցեղախմբերի մարդիկ ապրում էին քարանձավներում և գետնադամբարաններ էին փո-

րում պարզ գործիքներով՝ կառուցելով քարանձավային կացարանների նախատիպը: Պատմական տվյալները ցույց են տալիս, որ ամենավաղ քարանձավային կացարանները հյուսիսային Շենսիում կառուցվել են Չժոու գահատոհմի դարաշրջանում՝ կիսադամբարանի ձևով: Եվ դրանք



աստիճանաբար վերածվել են գետնադամբարանի կամ, ինչպես սովորաբար անվանում են, հողե թրծավառարանի՝ համաձայն Ցին և Հան գահատոհմերի ժողովրդական բանահյուսության: Շինանյութերը կատարելագործվել էին Մին գահատոհմի գահակալության կեսերից: Թրծավառարանի պատերի կառուցման, դրա հուսալիությունն ու կայունությունն ուժեղացնելու համար սկսեցին օգտագործել քարեր: Ցին գահատոհմի վերջին շրջանում և Չինաստանի Հանրապետության առաջին տարիներին մարդիկ պատրաստում էին հողե թրծավառարաններ ըստ նմուշօրինակների և քարեր էին դնում քարանձավային կացարաններ կառուցելիս, ինչը այդ կացարաններին ամրություն, գեղեցկություն և զարդարուն տեսք էր տալիս: Այսօր, մարդկանց կենսամակարդակի զգալի զարգացման հետ, ավանդական քարանձավային կացարանը հազիվ թե բավարարի ավելի բարձր կենսամակարդակ ունենալու մարդկանց ձգտումը: Այնպիսի գիտական կատարելագործումներ, ինչպիսիք են լուսամուտներ լայնացնելը և թրծավառարանների տակ բարձակներ դնելով դրանք բարձրացնելը, որ թափանցիկ և լուսավոր տարածություն է ստեղծում և ընդլայնում է բնակելի տարածքը, տունը դարձնում է ավելի գրավիչ ու գործառական: Քարանձավային նոր կացարանները, բաժանված սենյակներով և երկհարկ կառուցվածքով, ի հայտ են եկել շատ վայրերում: Օդանցքները, որ օդը թարմացնելու հնարավորություն են ստեղծում քարանձավային կացարանում, տեղադրված են որոշ ժայռափոր տների պատուհանների վերևի մասում: Զարդարելու ժամանակ մարդիկ հաջողությամբ օգտվում էին նոր շինանյութերից, ինչպիսիք են, օրինակ, գունագեղ կղմինդրը և նրբագեղ պաստառը, որոնք կենսունակություն էին հաղորդում քարանձավային հին կացարաններին:

2. Շենսյանի քարանձավը

Քարանձավային կացարանի պարզ և բնական ձևավորումը ներդաշնակվում է շրջապատի հետ: Ավելին, այն մշտնջենական քարանձավի իր հռչակը ձեռք է բերել ձայնամեկուսացման և ջերմապահպանման շնորհիվ:

Դատելով արտաքին տեսքից ու դիրքից՝ հյուսիսային Շենսիի քարանձավները բաժանվում են հարթ հատակ ունեցող, լեռնային և այլ տիպերի: Ի տարբերություն այլ շինությունների, քարանձավային տներն ունեն շրջակա միջավայրի պահպանության առավելությունը, կառուցված են ռելիեֆին համապատասխան, առանց խաթարելու տեղանքն ու դրա տեսքը և չափազանց շատ մշակվող հողատարածք զբաղեցնելու: Արդյունավետ և ոչ ծախսատար է՝ քարանձավներ կառուցել՝ օգտագործելով լյոս և քարեր: Դռներն ու լուսամուտները սովորաբար փայտե շրջանակ ունեն և տեղադրված են առջևի մասում: Երկու լուսամուտները տեղադրված են աջ կողմում, իսկ փայտե դուռը տեղադրված է մեջտեղում: Քարանձավային կացարանների լուսամուտները հիմնականում երկու տեսակի են, այն է՝ փոքր քառակուսի լուսամուտ՝ մոտ մեկ քառակուսի մետր, և կլոր լուսամուտ՝ երեքից չորս քառակուսի մետր: Լուսամուտները ծածկված են բամբակե թղթով, որը սենյակը դարձնում է պայծառ, կոկիկ, ջերմ և օդափոխվող: Դռները կարող են լինել փայտաշեն կամ քարակառույց: Հարուստ ընտանիքների տների նախաշեմին քարե առյուծներ են դրված: Քարանձավային կացարանների դռներն ամրացված չեն: Փոխարենը բացվածքներ են թողնվել, երբ շինության պատերը հետագայում վերափոխվել են դռների: Մեկ ընտանիքն ապրում է մեկ առանձին քարանձավային կացարանում՝ առանձնացված բակով, որտեղ կա քարե գլանիկ, ուտելիքի դարակներ, երկանաքարեր և անասնագոմեր: Չինական ունաբի և ճերմակ ակացիայի նման բուսատեսակները տանտերն աճեցնում է բակում, և դրանք շրջակայքին խաղաղ ագարակատան շուք են հաղորդում՝ ներկայացնելով հյուսիսային Շենսիի մարդկանց տեղական ճաշակը:

Ներսից նայելիս՝ տիպիկ քարանձավային կացարանը սովորաբար վերևում գմբեթաձև տեսք է ընդունում, որ յոթից ութ մետր խորություն ունի, երեք մետր լայնություն, երեք մետր բարձրություն, իսկ ամենախոր մասում ավելի քան քսան մետր խորք ունի: Աջ կողմում, հենց դռնից ներս մտնելիս, կարելի է տեսնել ջեռուցվող մեծ *կանգը*, որ կառուցված է հում կավից կամ քարե սալերից: Ջեռուցվող *կանգը*, որպես քարանձավի անբաժան ու կարևոր մաս, ցրտից պաշտպանող և ջերմամեկուսիչ տեղ է ցուրտ եղանակներին: Առօրյա կյանքում ջեռուցվող *կանգը* ծառայում է որպես մի հարմարավետ պարզ անկողին կամ կանանց համար ասեղնագործությամբ զբաղվելու, երեխաների համար կարդալու և գրելու, ինչպես



նաև տանտերերի կողմից հյուրերին հյուրասիրելու տեղ: Մարդիկ սովորաբար տուն մտնելուց հետո դրա վրա հանգստանում են կամ խաղում: Ջուր եռացնելու կամ ուտելիք պատրաստելու համար սովորաբար մի հին վառարան է հարմարեցված *կանգի* վերջնամասում, որի հետ այն կապված է, այդտեղից ծուխը, որ առաջանում է ուտելիք պատրաստելիս, դուրս է գալիս *կանգի* տակ ընկած և պատի ներսում գտնվող անցուղով, ապա ելնում է քարանձավային տան վրա գտնվող ծխնելույզով. այս կերպ ջեռուցման համակարգ է ստեղծվում, և խնայվում է վառելափայտը: Քարանձավի ներսում նկուղ է փորված, որտեղ պահվում է կարտոֆիլ, բողկ, կաղամբ և այլն: Դա շատ օգտակար է մասնավորապես ցրտաշունչ ձմռանը: Քարանձավային տան ետնամասում սովորաբար տեղադրված են մի քանի մեծ տակառ կամ ճենապակյա սափորներ: Իսկ կիսակլոր վերնամասով

թունելային դռներն ապահովում են քարանձավի ներսում համացանց ունենալու հնարավորությունը: Հյուսիսային Շենսիի բնակչությունը սիրում է *կանգի* շուրջբոլորը պատերը պաստառապատել *կանգվեյցիով՝* նկարազարդ թղթով կամ կոլլաժով: Այս գործնական զարդարման մեթոդը նպատակ ունի տունը գեղեցկատես դարձնելու: Ոմանք նույնիսկ պատերի պաստառներին նկարում են իրենց առօրյա կյանքի մասին պատմող պատկերներ, և այս նկարչությունը դարձել է հյուսիսային Շենսիի ազգային մեծ ինքնատիպություններից մեկը:

3. Տեսակներ և առանձնահատկություններ

Քարանձավային կացարանների բազմաթիվ տեսակներ կան: Ըստ տեղանքի և կառուցման մեթոդների տարբերությունների՝ դրանք լինում են յա թրծավառարան, կեն թրծավառարան, ֆուտու թրծավառարան, գու թրծավառարան և այլն:

Սովորական յա թրծավառարանը հիմնականում գտնվում է արևոտ ուղղահայաց ժայռի վրա, քամուց հեռու: Եվ այն ներսից դեպի դուրս է փորվում կարճ ժամանակում, քանի որ դա հասարակ փորելու գործընթաց է: Քարանձավային կացարանի այս տեսակը կարող է միայն կողք կողքի լինել, ոչ թե իրար շուրջ խմբավորվել: Դուռ չկա, իսկ պատուհանները տեղակայված են ժայռի մակերևույթին, սահմանափակ տարածության մեջ: Մինչդեռ կեն թրծավառարանը հատելու ժամանակ պետք է մեծ քառակու-

սի հորանցք փորվի, որի չորս պատերին հետո մի քանի հորանցքեր են փորվում: Եվ հորանցքերից մեկում մի կոր, դեպի վար թեքվող թունել է փորվելու, որպեսզի մարդիկ կարողանան անցնել գետնի միջով: Ըստ իրենց գործառույթների դրանք դասակարգվում են հետևյալ կերպ՝ տանտիրոջ թրծավառարան, հյուրի թրծավառարան, խոհանոցի թրծավառարան, անասունների թրծավառարան և այլն: Ֆուտու թրծավառարանի տեսակը, որն ընդլայնում է ներքին տարածքը և ներսում երկու հարկանի շինություն է, կառուցվում է թե՛ քարափին, թե՛ գետնի տակ: Գու թրծավառարանը, ամենատարածված արհեստական շինությունը, որ կառուցվում է աղյուսով, քարով ու հում կավով, ունի մեկ կամ երկու հարկ, և մի քանի այդպիսի կառույցների համադրությունից ստեղծվում է բակ: Այն բավականին ամուր է, և մարդիկ այդտեղ կարող են ապրել տասնամյակներ կամ նույնիսկ հարյուրամյակներ, այդուհանդերձ՝ դրսի պատերը երեք կամ հինգ տարին մեկ հարկավոր է ցեխով ծեփել:

Շինանյութերի տարբերություններին համապատասխան՝ քարանձավային կացարանները կարող են նաև լինել հողե թրծավառարաններ, աղյուսե թրծավառարաններ, քարե թրծավառարաններ և այլն: Հողե թրծավառարանն այն կացարանն է, որ հողե ժայռի մեջ է փորվում: Դռներն ու լուսամուտները տեղադրելուց հետո շրջանակն ամբողջական է դառնում: Դա ամենահին ճարտարապետական ոճն է: Թեև կառուցվում է առանց որևէ դժվարության, այն շատ լավ պահում է ջերմությունը: Կարելի է կրակ անել սենյակում կերակուր պատրաստելու համար՝ առանց վախենալու, որ այն կփլուզվի, հողի ամուր հյուսվածքի և հյուսիսարևմտյան տարածաշրջանի չոր կլիմայի պատճառով, չնայած որ այդ կացարանն այնքան ամրակուռ չէ, որքան աղյուսե կամ քարե կացարանը: Քարից կառուցված քարե կացարանը հիմնականում մեծ դռներ ու լուսամուտներ ունի: Հարթ պատը պատրաստված է հեծանի նման ՝ վերևում կիսակլոր լուսամուտով և ներքևում քառակուսի դռներով, ինչն այն դարձնում է ամուր, ցնցումադիմացկուն, հրակայուն և գործնական: Հողե և քարե կացարանների հետ համեմատած՝ աղյուսաշեն աղյուսե կացարանը փոքր-ինչ ավելի քիչ ջերմապահպանիչ է, բայց ավելի նրբագեղ տեսք ունի:

4. Կենցաղային տաբու-արգելքներ

Հյուսիսային Շենսիի ազգային սովորության ազդեցությամբ՝ ժայռափոր կացարաններում ապրող մարդկանց համար շատ տաբու-արգելքներ կան: Օրինակի համար՝ արգելվում է այդ կացարանների մոտ ճայթռուկներ պայթեցնել: Ժողովրդական բանահյուսության համաձայն՝ ցուլը կա-

րող է ահաբեկվել դրանից և աչքերը բացել, և ապա քարանձավային կացարանը կփլուզվի: Քարանձավային կացարանի առջևի կամ ետևի բակում *ցյան չոնշի* և *հոու չոնշի* կոչվող ուղիղ ճանապարհներ կառուցելը համարվում է տանտիրոջ համար կորուստ կամ դժբախտություն: Կացարանի դռան առջևում թթենիներ տնկելը նույնպես արգելք է հանդիսանում, քանի որ «թթենի» նշանակող չինարեն հիերոգլիֆը նույն կերպ է հնչում, ինչպես «թաղում» նշանակող հիերոգլիֆը՝ *սան*: Առջևում գտնվող տների կամ բակերի շարքերը չպետք է ավելի բարձր լինեն ետևում գտնվողներից, քանի որ դա կոչվում է *դաո ցզայչժուան* և տանտիրոջ համար անբարենպաստ է համարվում: Արգելք է հանդիսանում նաև աջ կողմի բակերի կամ տների՝ ձախ կողմի բակերից կամ տներից ավելի բարձր լինելը: Ժողովրդական հավատալիքների համաձայն՝ ձախը ներկայացնում է Կանաչ Վիշապին, մինչդեռ աջը՝ Սպիտակ Վագրին, և այսպիսի ասացվածք կա, թե ավելի նախընտրելի է թողնել, որ Կանաչ Վիշապը բավականին վեր բարձրանա, քան թողնել, որ Սպիտակ Վագրն իր գլուխը բարձրացնի: Կացարանի վերևից ինչ-որ բան նետելը նույնպես արգելվում է, քանի որ կարծում են, թե դա խանգարում է տեղական Երկրի աստծուն: Ավելին, երբեք չպետք է ցած նետել սև բուրդ կամ թաղիք, այլապես սև ուրվականը կանարգի բակը: Նաև դատարկ դույլ չպետք է բերվի բակ կամ խոհանոց, այլապես բարիքն ու հացահատիկը կպակասեն: Երբեք չպետք է կառուցվեն զույգ թվով տներ, քանի որ չորս կամ վեց թվերը կարող են ձախողել նպատակների կատարումը: Չինական գիտունածառի կամ ճապոնական ստիֆնոլոբիումի փայտից դռներ պատրաստելն արգելվում է, քանի որ այդ ծառի հիերոգլիֆը երկու տարրից է բաղկացած, որ նշանակում են՝ ուրվականը կանգնած է դռան ետևում, ինչը դժբախտություն է համարվում: Արգելք է նաև կեսգիշերին աքաղաղի կանչելը, քանի որ դա նշանակում է, թե ազգի հետ ինչ-որ վատ բան կպատահի: Փափուկ կեղևով ձու ածող կամ աքլորի պես կանչող հավերը արգելք են. դա նշանակում է, որ ընտանիքում անախորժություն և անհանգստություն կլինի: Եթե նման բան է լինում, պետք է այդ հավի գլուխը կտրեն հենց դռան շեմին: Քարանձավային կացարանի վերևից միզելը խստիվ արգելվում է. դա վիրավորանք է տեղական Երկրի աստծո հասցեին:

ՍԻՀԵՅՈՒԱՆԸ ՅԱՆ ՉԺԱՈ ՀԱՐԹԱՎԱՅՐՈՒՄ

Սիհեյուանը բնակատեղիի ավանդական մի տեսակ է, որ սովորաբար գտնվում է Հյուսիս-Չինական հարթավայրում, ամենաշատը հայտնի է Պեկինում: Դրանք կոչվում են նաև չինական քառանկյուններ, որ նշանակում է ներքնաբակ՝ շրջապատված չորս շենքերով՝ հյուսիսում, հարավում, արևելքում և արևմուտքում: Փակ ներքնաբակում համերաշխ ու ներդաշնակ կյանքով ապրում են մեկ կամ մի քանի ընտանիք՝ ձևավորելով սիհեյուանի մշակույթը՝ իրեն բնորոշ ինքնատիպ առանձնահատկություններով:

1. Սիհեյուանի պատմությունը

Վկայագրերի համաձայն՝ սիհեյուանն իր պատմությամբ ծագում է դեռ Շան և Չժոու ժամանակաշրջաններից:

Որպես ներկայումս հայտնի ամենավաղ ճարտարապետական նմուշ՝ պատմական տեղանքը, որ պեղել են Շենսի նահանգի Ցիշան գավառում, ունի ուղղանկյուն հարթ մակերես և դռնատեղ, նախասենյակ, ետնասենյակ՝ հարավից դեպի հյուսիս ընկած կենտրոնական առանցքի երկայնքով: Պեղված պատմական մնացուկներից, ինչպիսին Հան գահատոհմի կավագործական տունն է, կարող ենք պատկերացում կազմել Հան գահատոհմի ժամանակ սիհեյուանի ճարտարապետական ձևի զարգացման մասին: Ավանդական գեոմանտիկ՝ երկրագուշակ նախանշանի, համեմատաբար համապարփակ Ին-Յան և հինգ տարրերի կարգավորման ազդեցությամբ Հան գահատոհմի ժամանակ ձևավորվել է տեղական սիհեյուանի տեղանքի և դիրքի ընտրությունը, որոնք հիմնականում դրել են սիհեյուանի ամբողջական ու անբաժանելի կառուցվածքի հիմքերը:

Սույ և Տան գահատոհմերի ժամանակները սիհեյուանի զարգացման մեծ փոփոխությունների շրջան էին: Լանգյուանի օրինակի հատակագիծը հիշեցնում է ներքնաբակ՝ գխավոր կառույցով՝ կենտրոնական առանցքի երկայնքով և մենաստան՝ շուրջբոլորը բոլոր կողմերից իրար միացող շենքերով: Լանգվուի օրինակը, որ առաջացել է Տան գահատոհմի ուշ շրջանում, աստիճանաբար փոխարինեց Լանգյուանի օրինակին: Յուան գահատոհմի գահակալության տարիները սիհեյուանի համար ծաղկման շրջան էին: Յուան գահատոհմի գահակալության վաղ շրջանում, նպատակ ունենալով ընդլայնել իր մայրաքաղաքի սահմանները, արքունիքը խրախուսում էր առևտրականներին՝ քաղաքացիական շինարարություններ կատարել Դադուում: Յուան գահատոհմի կայսր Հուբիլայի կամ Կուբլա Խանի կողմից հրովարտակներ էին արձակվում, որ քաղաքացիները, հատկապես հարուստ վաճառականները և պաշտոնեական ազնվականությունը պետք է տներ կառուցեին Դադու քաղաքի կենտրոնական մասերում, և ով որ զբաղվեր տնաշինությամբ, կարող էր ունենալ ութ ակր ցանքատարածքի չափով հողային սեփականություն: Ազնվականների, ինչպես նաև հասարակ մարդկանց մի մեծ զանգված տեղափոխվեց Դադու քաղաք և բազմաթիվ սիհեյուաններ կառուցեց՝ պետական հսկողության ներքո, որը միաժամանակ ձևավորեց նաև սիհեյուանի շենքերի խումբը Պեկինում: Մին և Ցին գահատոհմերի գահակալության շրջանում սիհեյուանի կառույցները հասան կատարելության, և ամուր հիմքեր դրվեցին: Այդ գահատոհմերի ժամանակ հաստատվեցին կայուն կանոններ ու պարտադիր որոշումներ, մասշտաբներ և գույներ՝ ֆեոդալիզմին համապատասխան:

2. Սիհեյուանի կառուցվածքը

Կանոնավոր սիհեյուանի հատակագիծը չինական «□» հիերոգլիֆի ձևն ունի: Փակ ներքնաբակը գտնվում է կենտրոնում՝ շրջապատված հիմնական սենյակով (հյուսիսային սենյակ), *դաոզուոյով* (հարավային սենյակ), արևելյան թևով և արևմտյան թևով: Դա փակ բնակատեղ է, ու միայն մեկ դարպաս է դեպի դուրս նայում: Եվ ներսում ապրող մարդիկ վայելում են իրենց մեծ ներփակ առանձնությունը փակ դարպասի ետևում: Ընտանեկան միջոցառումներ կարող են իրականացվել նաեւ մեծ տարածության մեջ:

Երբ մտնում եք սիհեյուան, առաջին բանը, որ աչքի է զարնում, մուտքի գլխավոր դարպասն է, որի ձևը ներկայացնում է տանտիրոջ սոցիալական կարգավիճակն ու հարստությունը: Կան դարպասների տարբեր տիպեր, ինչպես, օրինակ, պալատի դարպասը, գուանլյան դարպասը, ռույի դարպասը և այլն: Դարպասի դիրքը շատ բացառիկ և կարևոր նշանակություն ունի: Դրանց մեծ մասը տեղակայված է սիհեյուանի հարավարևելյան անկյունում, բացառությամբ պալատի դարպասի, որ տեղակայված է հարավային կենտրոնական առանցքի գծի վրա: Դարպասներն ունեն երկու սև լաքապատ տախտակե դռներ՝ երկու արույրե բռնակներով, և դարպասի երկու կողմում էլ իրար հակասող երկտող բանաստեղծություններ են փակցված: Այն շատ գեղեցիկ տեսք ունի, երբ տոների կամ նշանավոր օրերի ժամանակ զարդարվում է հեծանից կախված լապտերներով:

Երբ դռնով ներս եք մտնում, կարող եք տեսնել սիհեյուանի ամենակարևոր զարդարանքը՝ պատի նրբագեղ էկրանաձև վահանակը, որ սովորաբար փայլեցված աղյուսներով է պատված: Դրանցից մի քանիսը գեղեցիկ նախշերով են, որ սոճու կամ կռունկի տեսք ունեն, և կամ դրանց վրա փորագրված գեղագրություն է: Այն դեկորատիվ տեսարաններ է պատկերում դարպասի և՛ ներսի, և՛ դրսի կողմերում և պաշտպանում է տանտիրոջ

մասնավոր կյանքն ու առանձնությունը: Պատի վահանակը պարունակում է ավանդական գեոմանտիկ՝ երկրագուշակ նախանշանների հայեցակարգը: Հնագույն ժողովուրդները հավատում էին, որ մարդու հոգին հայտնվում է որպես նախանշան նրա մահից հետո: Եվ գիշերը դրսում քայլելիս կարելի է հանդիպել անտուն ուրվականների: Եվ չար ու վատ նախանշան է համարվում, եթե ուրվականները տուն մտնեն: Դրա համար էլ դարպասից ներս պատի էկրանաձև վահանակն է տեղադրված, որպեսզի ուրվականները տեսնեն իրենց արտացոլումը և չհամարձակվեն ներս մտնել:

Պատի էկրանաձև վահանակից արևմուտք գտնվում է առաջին բակը, որ կոչվում է առջևի բակ կամ նախաբակ, որտեղ դեպի հյուսիս նայող տների շարքն է, և *դաոզուո* կոչվող կամ հարավային սենյակը: Եվ դա հիմնականում ծառայում էր որպես հյուրերի սենյակ, ընթերցասենյակ կամ շենքի մուտքի դարպաս հյուրերի ու ծառաների համար: Կենսապահովման հարմարությունները, ինչպես, օրինակ, խոհանոցն ու լոգարանները, հարմարեցված են բակում՝ մարդկանց ամենօրյա կենցաղային հոգսերը հոգալու համար: Նախաբակն ու ետնաբակը բաժանված են ներքնաբակի պատով, որի մեջ տեղադրված է երկրորդ դուռը: Դա կոչվում է նաև չժուիհուա դուռ, քանի որ պատրաստված է ժանեզարդ դռան սահմանված կարգի համաձայն: Ինչպես ասացվածքում է նշվում՝ «Այն մարդը, որ երբեք դուրս չի ելնում, չի անցնի ո՛չ առջևի դռան, ո՛չ երկրորդ դռան միջով», որտեղ երկրորդ դուռը կոչվում է չույհուա դուռ: Նրբաճաշակ չույհուա դուռը շքեղ է ու գեղեցիկ, բայց պարզ է ու վայելչատես իր երկթեք տանիքով, և այն միացնում է նաև նախաբակը ետնաբակին: Չույհուա դուռը, իր երկու կողմերում ներքնաբակի պատերի հետ միասին, բաժանում է ներսի բակը դրսի բակից՝ ձևավորելով երկու առանձին ներքնաբակ:

Անցնելով չույհուա դռնով՝ մտնում եք ետնաբակ, որը սիհեյուանի կենտրոնն է և որն զբաղեցնում է բավականին բաց տարածություն: Եվ հարավահայաց գլխավոր սենյակը, որ կոչվում է *տան* (հիմնական սենյակ)

գտնվում է բաց, ընդարձակ տարածության գլխավոր առանցքից դեպի հյուսիս: Հիմնական սենյակը, որպես սիհեյուանի կենտրոն, ամենամեծ սենյակն է: Երկու կողմերում ընկած կողմնային սենյակները կառուցված են մեծ սիհեյուանում օժանդակ օգտագործման համար: Ետնաբակի արևելյան և արևմտյան կողմերի կցասենյակները սովորաբար պատրաստված են կրտսեր սերունդների համար: Արևելյան թևը, չժուիհուա դուռը, արևմտյան թևը և գլխավոր սենյակը միացված են ծածկապատշգամբով, որը ձգվում է ետնաբակի շուրջը՝ տանտիրոջը պաշտպանելով քամուց, անձրևից և արևահարվելուց, ինչպես նաև զովանալու, հանգստի և տեսարաններ դիտելու համար հարմարավետ տեղ ապահովելով: Գլխավոր սենյակի ետևում՝ մեծ ներքնաբակում ետնակողմի տների շարք է կառուցված: Եվ հարավահայաց փոքրիկ տներ են կառուցված ետնակողմի տների բակում, որոնք օգտագործվում են որպես պահեստասենյակներ, ինչպես նաև սպասուհու բնակվելու սենյակ:

Ետնաբակի կենտրոնական մասում գտնվում է համաչափ ու ընդարձակ, փակ մի ներքնաբակ: Տեղակայված լինելով սիհեյուանի համընդհանուր հատակագծի կենտրոնում՝ այն լուսավորման, օդափոխման, մարդկանց երթևեկի, զովացման, հանգստի և տնային գործեր կատարելու հիմնական վայրն է: Այդտեղ ծառեր են տնկված, ծաղիկներ են աճեցնում և պահում են ոսկե ձկնիկներ: Բակի բուսականությունը շատ լավ է արտահայտում չինական ավանդական մշակույթը: Օրինակ՝ ունաբի ծառեր կամ նռնենիներ տնկելը նշանակում է «ինչքան շատ որդիներ, այնքան շատ օրհնություն», իսկ եղրևանին կամ բալապտուղ խնձորենին ցույց են տալիս տանտիրոջ գեղարվեստական բարձր ունակություններն ու ձեռքբերումները, իսկ սոճիները կամ ծաղկած սալորենիները նշան են այն բանի, որ տանտերը խիստ սկզբունքային, ազնիվ ու բարոյական անձնավորություն է:

3. Սովորույթներ և արգելքներ

Սիհեյուանը, որպես չինական ազգային ճարտարապետության օրինակ, չինական ավանդական սովորույթների, էթիկական կամ բարոյական սկզբունքների և նահապետական տոհմային համակարգի մարմնավորում է: Այն բաժանված է ներքին և արտաքին բակերի, և սենյակներն այնպես են խմբված, որ առաջնորդն ապրում է հյուսիսային սենյակներում, դրանց հաջորդում են երկու թևերը և ապա հյուրերի համար պատրաստված *դաոզուոն*, և վերջում սպասուհու համար նախատեսված սենյակները, որ մարմնավորում են բարի հայրերի և նրանց շառավիղ որդիների նահապետական գաղափարը, ամուսնական զույգերի միջև փոխսատարումը և հարգանքը ավագ սերնդի նկատմամբ: Հյուսիսային սենյակները հիմնականում պատրաստվել են տարեցների, արևելյան և արևմտյան թեւերը՝ երիտասարդ սերունդների, հարավային սենյակները՝ հյուրերի և ծառաների համար: Կանոնավոր դասավորվածությունը ներկայացնում է միջանձնային հարաբերությունը և նահապետական բարքերը ավանդական պատշաճությամբ և որոշակիորեն արտացոլում է ֆեոդալական բարոյականության համակարգը: Սիհեյուանի ճարտարապետական հատակագիծը համապատասխանում է «Մարդու և Բնության միջև ներդաշնակության» գաղափարին: Դա մի գեղեցիկ տուն է, որ համատեղում է կառուցման ճիշտ ժամանակը, աշխարհագրական պայմանները, շինարարության համար ընտիր նյութերը և ձեռքի նրբաճաշակ աշխատանքը: Այն խաղաղ է և նրբագեղ, բնության գրկում հաշտ ու ներդաշնակ ապրելու հարմարավետ վայր մարդու համար:

Սիհեյուանի հետ կապված հատուկ արգելք–տաբուները տարբեր են ու բազմազան: Օրինակի համար, եթե նկատի ունենանք Պեկինի ներքին բակը, տեղաբնիկ պեկինցին կարծում է, որ բակի դարպասի առջևում երբեք չպետք է տնկել սպիտակ ակացիայի ծառ: Ասում են, թե այդ ծառերից հաճախ ցած թափվող՝ «կախված ուրվականներ» կոչվող որդերի մի տեսակ կա: Տանտերերը խիստ մտահոգվում են, երբ անցնող մարդկանց կողմից լսում են չարագույժ այսպիսի խոսքեր. «Ինչու՞ այդքան շատ կախված ուրվականներ կան»: Դա շատ վատ ու դժբախտ նշան է: Թթենի տնկելը նույնպես արգելվում է, քանի որ «թթենի» և «թաղում» բառերը չինարենում նույն կերպ են արտասանվում: Իսկ սոճին և կիպարիսը սովորաբար տնկում են գերեզմանոցում. դա նշանակում է, որ հանգուցյալի մասին մտքերը կհարատևեն: Եվ դրանք սիհեյուանում տնկելը վատ նշան է համարվում: Մարդիկ խուսափում են և այնպես են անում, որ սիհեյուանում գետինն ավելի ցածր չլինի, քան դրսում՝ փողոցում է, որովհետև համարվում

է, որ դարպասից ներս մտնող մարդիկ կհամեմատվեն փոսի մեջ ցատկող դոդոշի հետ, ինչը վատ նշան են դիտում:

Շատ արգելքներ կան մի շարք սիհեյուաններում: Կարծում են, որ կենտ թվերի մեջ հաջողություն չկա: Դրա համար էլ արկղեր կամ աթոռներ գնելիս հակված են, որ դրանք զույգ լինեն: Մինչդեռ սիհեյուանի հյուսիսային սենյակները պետք է կենտ թվով լինեն. երեքը կամ հինգը նորմալ է համարվում: Այս նույն սկզբունքն է կիրառվում նաև արևելյան կամ արևմտյան թևերի սենյակները կառուցելիս, և հիմնականում դրանց թիվը երեքն է: Մարդիկ դա անում են՝ փորձելով ձևավորել կենտրոնական առանցք, որը համարվում է անձի թիկունք ու պաշտպան և գեոմանտիկ՝ երկրագուշակ նախանշանի աղբյուր: Այդ պատճառով է, որ Պեկինում զույգ թիվը արգելք է հանդիսանում տնաշինության մեջ:

«ՋՈՒՐԸ ՉՈՐՍ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀՈՍՈՒՄ Է ԴԵՊԻ ՍՐԱՀ». ՀՈՒՅՉԺՈՈՒԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԸ

Հույչժոուն, որ հնագույն ժամանակներից հայտնի է որպես Սինան, այն քաղաքն է, որտեղ գտնվում է նշանավոր Հուան լեռը: Քրիստոսի ծննդից առաջ 221 թվականին Ցին գահատոհմի առաջին կայսրը միավորեց Չինաստանը և հիմնեց Սինանի նահանգը: Հյուսիսային Սուն գահատոհմի ժամանակ, Ֆան Լայի գլխավորած գյուղացիական ապստամբությունները ճնշելու գործում ունեցած հաջողությունը տոնելու համար Սուն գահատոհմի կայսր Հույցզունը Սինանի անունը փոխեց՝ դարձնելով Հույչժոու, և մինչև հիմա այդպես է անվանվում: Գեղեցիկ բնական միջավայրը և հումանիտար գիտությունների, դասական գրականության ու պատմության համատեղումը մեծ դեր ու կարևորություն ունեն տեղական ինքնատիպ մշակույթի զարգացման և Հույչժոուի մշակութային արժեքների առաջացման ու փոխանցման գործում, որոնց թվում Հույչժոուի քաղաքացիական շենքերը, սև սալիկներով և սպիտակ պատերով, ճանաչվել են որպես առավել տիպական օրինակներից մեկը:

1. Հույչժոուի քաղաքացիական շենքերի ձևավորումը

Հոյակապ մշակույթ և երկար պատմություն ունեցող Հույչժոուի քաղաքացիական շենքերի զարգացումը ընդգրկում է երեք փուլ. մինչցինական գահատոհմից մինչև Հարավային և Հյուսիսային գահատոհմերի ժամանակաշրջանը Հույչժոուի քաղաքացիական շենքերի համար ձևավորման շրջան է: Հնագիտական գտածոների լույսի ներքո՝ Հույչժոուի քաղաքացիական շենքերը կարող են համարվել մինչցինական վաղ ժամանակաշրջանի և թվագրվել որպես ավելի քան 2000 տարվա հնություն ունեցող կառույցներ: Պարզունակ գանլան ոճի ճարտարապետական կառույցները Հույչժոուի տարածքում ի հայտ

գալով՝ ապահովել են Հույչժոուի քաղաքացիական նախօրինակ շենքերի ինքնատիպ հիմնադրումը: Ցին և Հան գահատոհմերից հետո պատմության մեջ բնակչության առաջին մեծամասշտաբ գաղթը դեպի Հույչժոու տեղի ունեցավ Հարավային և Հյուսիսային գահատոհմերի օրոք: Կենտրոնական հարթավայրի բազմաթիվ նշանավոր ազնվական ընտանիքներ սկսեցին տեղափոխվել Հույչժոու: Հնագույն Շանյույ մշակույթը և Կենտրոնական հարթավայրի մշակույթն իրենց ներքին արտացոլումներով վերջին հաշվով տոգորված էին Սինանի մշակույթով, և աստիճանաբար առաջացավ Հույչժոուի ինքնատիպ ու եզակի մշակույթը: Միաժամանակ Հույչժոուում տարածվեցին Կենտրոնական հարթավայրի ավելի զարգացած բնակարանաշինության ոճը և կառուցողական տեխնիկան: Այսպիսով, Հույչժոուում ի հայտ եկավ նախագավիթ պատիոյի ոճով կառուցված սիհեյուանի ներքնաբակերի ճարտարապետական մոդելը և աստիճանաբար գերիշխող դարձավ Հույչժոուուի տարածաշրջանում:



Տան և Սուն գահատոհմերի գահակալման ժամանակները Հույչժոուի քաղաքացիական շենքերի ամենաբարձր զարգացման շրջանն են: Այդ ժամանակ տեղի ունեցավ պատմության մեջ հայտնի՝ բնակչության երկրորդ գաղթը: Պատերազմի ավերիչ հետևանքներից խուսափելու համար՝ մեծ թվով պաշտոնյաներ, վերնախավային գիտնականներ և հասարակ մարդիկ բոլորը գաղթեցին դեպի հարավ՝ իրենց հետ Հույչժոու բերելով Կենտրոնական հարթավայրի առաջավոր գիտությունը, տեխնոլոգիան և մշակույթը: Հաճախակի պատերազմները իրենց ազդեցությունն ունեցան Հույչժոուի քաղաքացիական շենքերի դիրքի և ճարտարապետական ձևի վրա՝ պաշտպանական առումով: Ավելի ու ավելի նկատելի էին դառնում բարձր պարիսպներն ու փոքր պատուհանները: Մին և Ցին գահատոհմերի օրոք, որ Հույչժոուի քաղաքացիական շենքերի բարգավաճման ժամանակներն էին, Հույչժոուի տնտեսությունը և մշակույթը մեծ վերելք և ծաղկում ապրեցին, բարգավաճեց նաև առևտրական դասը, ինչպես նաև մեծապես զարգացավ արտասահմանյան երկրների հետ փոխանակումը, ինչն ուժեղ ազդեցություն գործեց Հույչժոուի քաղաքացիական շենքերի ձևավորման և զարգացման վրա:

2. «Ջուրը չորս ուղղություններից հոսում է դեպի սրահ». Հույչժոուի քաղաքացիական շենքերը

Ճարտարապետական ձևի առումով Հույչժոուի բնակատեղին որպես կանոն դեպի հարավ է նայում, և առջևում ջուր է, իսկ ետևում բլուր: Դրա հիմնական ձևը ներքնաբակով կառուցվածքն է, այսինքն՝ տները և պարսպի ներսում եղած ամեն բան միավորված են փակ ներքնաբակի տարածքում, ներքնաբակի կենտրոնում երկհարկ շենքն է, որտեղ սանդղավանդակը գտնվում է սրահի առջևում և ետևում կամ նրանից ձախ և աջ: Ինչ վերաբերում է սենյակների դասավորությանը, հարավային կողմի սենյակը գլխավոր մասն է հանդիսանում՝ արևմտյան կողմի և արևելյան կողմի սենյակների համալրմամբ: Ներքնաբակի կենտրոնում, արևելքի ու արևմուտքի միջև ընկած երկար տարածություն և հարավի ու հյուսիսի միջև ընկած կարճ տարածություն ունեցող պատիո՝ նախագավիթ է հարմարեցված՝ օդափոխության և լուսավորության համար: Ամբողջ չինության հավասար հատակագիծը բավականին կուռ է. այն սովորաբար ներկայացնում է ուղղանկյունաձև կառույց և սենյակներն իրար է միավորում քառակողմ միջանցքով: Հույչժոուի բնակատեղի դարպասից դուրս կանգնելով և մոտիկից ուշադիր նայելով ճարտարապետական տեսքին՝ կնկատեք, որ տունը խիստ ամբողջական է և գեղագիտորեն կառուցված: Եկեք նախ հայացք գցենք առջևի դարպասներին. այն սովորաբար կառուցված է կապույտ գրանիտից՝ *մենչժաոյի* կամ *մենլոուի* ձևով: Առաջինն ընդունված է սովորական մարդկանց, իսկ երկրորդը՝ հարուստ մարդկանց մոտ: Դրանք պատրաստված են փորագրված կապույտ քարի և աղյուսի ներդրվագումով՝ ցուցադրելով «Հույչժոուի երեք փորագրությունների» նուրբ ու ընտիր հմտությունները: Աղյուսե փորագրությունը հիմնականում ներկայացնում է ծաղիկներ, թռչուններ, միջատներ, ձկներ կամ պատմական տեսարաններ ու դրվագներ՝ որպես թեմա, բնականաբար՝ խորհրդանշանակություն ունեցող: Մենչժաոն իր ձևով պարզ է, այ-

սինքն՝ տարբեր պատկերներ ստեղծված են կապույտ աղյուսով՝ աղյուսի վրա փոքրածավալ փորագրությամբ: Կան *մենլոուի* մի քանի տեսակներ՝ ներառյալ դրասանգի ժանեզարդ *մենլոուն*, հուշատախտակ *մենլոուն*, զարդարված կամարակապ անցք մենլոուն և այլն: Ապա հայացք գցենք դրսի պարսպին: Հույչժոուի բնակատեղին շրջափակված է բարձր, սպիտակեցրած պատերով՝ երկրորդ հարկում մի քանի փոքր պատուհաններով: Որպեսզի և՛ օդափոխում լինի, և՛ հնարավոր չլինի լուսամուտը կոտրելով գողություն կատարել, այն պատրաստված է կապույտ քարի մեջ բացված անցքերով: Իսկ սպիտակ պատի վրա զարդանկարված են ծաղիկներ և երկրաչափական պատկերներ: Դրսի պարսպի մասը, որ ավելի բարձր է, քան տանիքը և սանդուղքի ձև ունի՝ քիվի երկայնքով, կոչվում է հրդեհի մեկուսիչ կամ պատի ծածկոց, ինչպես նաև ձիագլուխ պատ՝ իր ձևի պատճառով: Այն հրդեհի դեմ պայքարելու հատուկ գործառույթ ունի: Ձիագլուխ պատի երկարությունը և բարձրությունը պայմանավորված են տանիքի թեքությամբ: Ընդհանրապես ձիագլուխ պատը տանիքից բարձր է՝ նեղ և երկար գծակերպ, եռապատկեր, եռաստիճան և կամարակերպ տեսքով:

Հույչժոուի բնակատեղի ամենաբնորոշ առանձնահատկությունը պետք է լինի՝ «ջուրը չորս ուղղություններից հոսում է դեպի սրահ»: Անցնելով դարպասից՝ կտեսնեք առջևի փոքր հրապարակը՝ կենտրոնում գտնվող նախագավիթ պատիոյով, որ օդափոխման և լուսավորության համար է: Տարածքը 1/8~1/9 հարաբերությամբ ներքին մակերես ունի: Քանի որ դրսի պարսպի մեջ միայն փոքր լուսամուտներ կան՝ երկրորդ հարկի բարձրության վրա, հետևաբար, ամբողջ ներքնաբակի սրահի լուսավորությունը ամբողջովին կախված է պատիոյից: Միևնույն ժամանակ՝ պատիոն կարող է նաև կարգավորել սենյակների միկրոկլիման: Անձրևոտ օրերին անձրևը կարող է հո-

սել քիվերի երկայնքով և եզրով դեպի պատիո՝ ստեղծելով «ջուրը չորս ուղղություններից հոսում է դեպի սրահ» տեսարանը: Հնագույն ժամանակներում Հույչժոուի մարդիկ մեծապես կարևորում էին բնակության վայրի գեոմանտիկ՝ երկրագուշակ նախանշանները: Այդ նախանշանով՝ ջուրը խորհրդանշում է հարստության հաջողություն, և պատիոն սերտորեն կապված է հաջողության հետ: Քանի որ Հույչժոուի մարդիկ ներգրավվում էին գործարար աշխատանքում երկար ժամանակով և հարստության կուտակումն առաջնային էին համարում տնից հեռու, նրանք պատիոն կառուցում էին այնպես, որպեսզի անձրևաջուրը և երկնքից իջած ցողը հավաքվեին՝ որպես շատ փող ունենալու համար լավ նշան ու հաջողություն:

Պ ա տ ի ո յ ի ետևում սովորաբար սրահ է՝ բնակության համար: Դրա վերևում ևս մեկ հարկ է՝ սրահի երկու կողմերում գտնվող ս ա ն դ ու ղ ք ո վ: Սրահը ետևի սրահից բաժանված է մ ի ջ ն ա դ ա ր պ ա սով: Ընդհանուր առմամբ՝ ետնասրահում տեղակայված են մի սրահ և երկու ննջասենյակ: Սրահի ետևի մասում հակահրդեհային միջնորմն է և մեկ այլ նախագավիթ պատիո՝ պատի և երկու թևերի սենյակների դիմաց: Սա ներքնաբակի առաջին մուտքն է, սակայն Հույչժոուի բնակիչների մեծ մասը ընտրում է բազմամուտք ներքնաբակի տեսակը, որն արտահայտում է խմբվելու նրանց բնորոշ առանձնահատկությունը: Հետևաբար, երկրորդ մուտքի

ներքնաբակը սկիզբ է առնում առաջինից: Այն երկու սրահով սենյակի կառուցվածքում է, սենյակի առջևում և ետևում երկու պատիոյով, կենտրոնում միջնորմով, ինչպես նաև սենյակում չորս ննջարանով և երկու սրահով: Երրորդ, չորրորդ և հաջորդ մուտքը միևնույն կառուցվածքն ունի: Բազմամուտք ներքնաբակերի խմբով կառույցի այս տեսակը կարող է լինել երկու ներքնաբակից մինչև տասը ներքնաբակ, կամ նույնիսկ առավելագույնը 36 ներքնաբակ ունեցող: Քանի որ ընտանիքի բնակիչների թիվն աճում է ժամանակի ընթացքում, յուրաքանչյուր ներքնաբակ կարող է բաժանվել, ընդլայնվել և ամբողջանալ, ինչը համապատասխանում է Հույչժոուի մարդկանց կողմից խրախուսվող սովորույթին, որի համաձայն երեք կամ ավելի սերունդներից բաղկացած ընդլայնված ընտանիքն ապրում է համատեղ:

Հույչժոուում մարդիկ ուշադրություն են դարձնում ներքնաբակի բնատեսարանի՝ լանդշաֆտի ստեղծմանը և շատ հմուտ կերպով օգտվում են պատիոյի ընձեռած հնարավորությունից՝ ընդլայնելու համար ներքին տարածքը դեպի դուրս, ինչպես նաև բնությունը տանելու դեպի ներս: Հույչժոուի բնակատեղի առջևում և ետևում կամ երկու կողմերում սովորաբար տեղակայված են փոքրիկ ներքնաբակեր կամ այգիներ՝ հարմարավետ ու կուռ դասավորվածությամբ:

Ինչ վերաբերում է ներքին զարդարանքին ու ձևավորմանը, Հույչժոուի ժողովուրդը միշտ թարմացնում ու կատարելագործում է այն՝ շնորհիվ Հույչժոուի մշակութային խոր ակունքների և Հույչժոուի առևտրականների նյութական հզորության: Տան բոլոր հեծանները ոսկեջրած են և ներկված տարբեր գույներով: Մասնավորապես, լիարժեք կերպով օգտագործվում և վարպետորեն կիրառվում են «Հույչժոուի երեք փորագրությունների» գեղարվեստական որակները, այն է՝ փայտի, աղյուսի և քարի վրա փորագրությունները: Բարձակը, միջանցքը, դարպասի ճաղավանդակը, մեծ վրանն ու ճաղաշարքը մանրակրկիտ փորագրված, քանդակված ու դրոշմված են՝ Հույ ոճի ճարտարապետության տեղական բնույթին համապատասխան:

3. Սովորույթներ և արգելքներ

Հույչժոուի ժողովուրդն ընդունում և պաշտպանում է գեոմանտիկ՝ երկրագուշակ նախանշանները և, ըստ այդմ, մարդու ու բնության միջև հարաբերությունները մշակում, կարգավորում ու գործածում է ընդունված տեսության համաձայն: Ինչ վերաբերում է բնակատեղին, նրանք որոշակիորեն օգտագործում են այդ նախանշանները, երբ ընտրում են տեղանքն ու ներքին հարդարման ձևը, հաճախ, որպես ուղեցույց, ընդունում են դրանք՝ ներդաշնակ համակեցություն փնտրելով երկնքի ու երկրի և բնության մեջ ապրող ամեն կենդանի արարածի հետ, որպեսզի հետամուտ լինեն երջանկության և խուսափեն դժբախտությունից ու աղետից, ինչպես նաև ապրեն խաղաղ ու գոհ: Ելնելով դրանից՝ ավանդական գեոմանտիկ՝ երկրագուշակ նախանշանները ձևավորում են Հույչժոուի մարդկանց բնակատեղի հատուկ սովորույթներ և արգելքներ:

Ինչ վերաբերում է սովորույթներին, Հույչժոուի ժողովուրդն ունի արարողությունների ու գործելակերպի հատուկ մի կարգ՝ բնակատեղը կառուցելիս: Նախ՝ ատաղձագործը պետք է դնի տանիքի հեծանն ու փայտամածը, և ապա պիտի կառուցվի պատն ու սալիկապատվի: Քանի որ տանիքի հեծանը դնելը նշանավոր օր է, հարազատներն ու բարեկամները գալու են, որպեսզի տոնը նշեն: Տանիքի փայտամածիի համար շատ կարևոր է ընտրել և տեղադրել եզրային հեծանը: Երբ եզրային հեծանի համար փայտը կտրվում է, պարանով պիտի կապվի փայտը: Կտրվելուց հետո փայտը պետք է փայտե շրջանակով տարվի:

Կտրելուց մինչև տանիքին տեղադրելը փայտը չպետք է գետնին ընկնի: Նախքան տանիքին տեղադրելը փայտի վրա կարմիր շորի կտոր պետք է գցվի, երկու ծայրերին պետք է ոսկեգույն ծաղիկներ դրվեն, ապա փայտը պետք է դրվի փայտե շրջանակի վրա. այդ ժամանակ արգելվում է հեծանի վրայով անցնել: Եզրահեծանի առջև պետք է զոհաբերություններ դրվեն, ինչպես, օրինակ, խոզի գլուխ, ձուկ կամ հավ, և մի զույգ վառվող մոմ, և հարկ է, որ տանտերը զոհաբերության համար խունկ վառի: Այնուհետև հյուսնը, ներբող երգելով, հինգ հացահատիկ է ցողում գինու գավաթով՝ աստվածներին զոհաբերություն կատարելով: Ապա զոհաբերությունները հեռացվում են, որպեսզի եզրահեծանը տեղադրվի ճայթռուկների պայթյունների ներքո: Այդ ժամանակ հարկ է, որ հյուսնը նորից հարգալից ներբող երգի, և բոլորը խմբով ձայնակցեն նրան: Բացի այդ, նույն օրը տանիքի կղմինդրապատումը պետք է ավարտվի նույն օրը:

Ինչ վերաբերում է արգելքներին, Հույչժոուի քաղաքացիական շենքերը կառուցելիս առավել բծախնդիր են դարպասի, սրահի և վառարանի հարցում: Հույչժոուի գյուղերում արգելված է, որ դարպասը նայի դեպի ծխնելույզը, քանի որ չար ոգիների կուտակումն այդտեղ՝ դժբախտություն կբերի: Եթե վերոնշյալից անհնար է խուսափել, ապա դարպասի դռնագլխից պետք է հայելի և մկրատ կախվի, և սա կոչվում է «չար ոգիների վանում»: Բացի այդ, արգելվում է, որ ճանապարհը դեմդիմաց լինի ճա-

կատային դարպասին. քանի որ հյուսիս-արևելքը համապատասխանում է Ութ դիագրամների *գենին (լեռ)*, հետևաբար դա հարմար չէ ճակատային դարպասների համար: Ավելին, դարպասը չպետք է նայի մեկ այլ դարպասի: Վաճառականի տան դարպասը չպետք է ուղղակի դեպի հարավ դառնա, քանի որ, համաձայն *Ու Սինի* տեսության, գործարարությունը պատկանում է ոսկուն, մինչդեռ հարավը պատկանում է կրակին, իսկ կրակը սահմանափակում է ոսկին, հետևաբար դա անբարենպաստ է: Բացի այդ, զինվորի տունը չպետք է նայի դեպի հյուսիս, որովհետև զինվորները պատկանում են կրակին, մինչդեռ հյուսիսը պատկանում է ջրին, իսկ ջուրը հանգցնում է կրակը: Դրա համար ասում են՝ *բայբեյ*, այսինքն՝ մարտում պարտվել: Եթե վերը նշված պայմանները փոփոխել հնարավոր չէ՝ կապված հիմքի սահմանափակումների հետ, ապա մի պայծառ հայելի կամ երկաթե մի առարկա պետք է կախել դարպասի դռնագլխից, դարպասը կարող է հարավարևելք նայել՝ «խուսափելու համար չար ոգիներից»: Արգելվում է նաև ծառեր տնկել Հույչժոուի քաղաքացիական բնակատեղի կենտրոնական սենյակում, որը կոչվում է Դինյան ծառ, որ նշանակում է՝ «*Ինը* բարգավաճում է, իսկ *Յանը* անկում է ապրում», և սերունդ չի բարգավաճի: Խոհանոցը չպետք է կառուցվի տան արևմուտքում, քանի որ արևմուտքը պատկանում է սպիտակ վագրին, իսկ «սպիտակ վագրը ծխում է». հետևաբար դա վատ նախանշան է: Ջրհորի և փոսի՝ զուգարանի միջև պետք է երկար հեռավորություն լինի, այլապես դա հակասանիտարական է և անճաշակ: Հույչժոուի բնակատեղի զարգացումը դիտարկելով՝ *կանյու* տեսության վրա հիմնված տների կառուցվածքը էական ազդեցություններ է գործել Հույչժոուի ժողովրդի սերունդների վրա: Եվ դա նույնպես Հույչժոուի տարածաշրջանային մշակույթի կարևոր մի մասն է:

ԿՈՐԵԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԸ. ՀՍԿԱՅԱԿԱՆ ՁԵՌՈՒՑՎՈՂ ԿԱՆԳԸ

Կորեական ազգությունը, որ Չինաստանի 56 ազգություններից մեկն է, գլխավորապես ապրում է երկրի հյուսիս-արևելքում: Հնագույն ժամանակներից նրանք սովոր են ապրել ցրտաշունչ կլիմայում: Քանի որ նրանք հակվածություն ունեն սպիտակ գույնի հանդեպ, վաստակել են «սպիտակ հագած ազգության» բարի համբավ: Երկար պատմությունը, եզակի ու ինքնատիպ մշակույթը և յուրահատուկ բնական միջավայրը ձևավորել են նրանց տեղայնացված և ազգայնացված կացարանները:

1. Զարգացման պատմությունը

Կորեական ազգային կացարանի զարգացումը սերտորեն կապված է ազգության պատմության հետ: Նախնադարյան հասարակարգում, ծանր ու դաժան բնական պայմաններում, սառույցի ու ձյան մեջ ապրելու համար հյուսիսարևելյան ժողովուրդների նախնիները սկսեցին գետնի մեջ փոսեր փորել և ապրել դրանց մեջ: Որքան փոսն ավելի խորն է փորված, այնքան ավելի լավ կենսապայմաններ է ապահովում: Ըստ պատմական արձանագրությունների՝ հարմարավետ լինելու համար նախնիները 9-հանգուցանի սանդուղք էին պատրաստում փոսի մեջ իջնելու և վեր բարձրանալու համար: Նրանք փոսում կրակ էին անում և ճյուղեր, խոտեր կամ մորթիներ էին դնում կրակի շուրջը, որպեսզի տաք լինի և այդտեղ հանգստանան: Միաժամանակ նրանք իրենց ամբողջ մարմնին խոզաճարպ էին քսում՝ իրենց պաշտպանելու համար հյուսիսային քամուց և սառնամանիքից:

Հասարակարգի զարգացման և կատարելագործման հետ մարդիկ սկսեցին կառուցել քաղաքներ այդ փոսերի շուրջը, որպեսզի ապահովեն

իրենց անվտանգությունը: *«Եռյակ թագավորության գրառումները»*, որը գրվել է 1 700 տարի առաջ, տվյալներ ունի Կորեական թերակղզու երեք հան ժողովուրդների՝ մա հանի, չեն հանի և բիան հանի ապրելակերպի մասին: Ինչպես ասվում է այդտեղ՝ տունը պատրաստված է խոտից և ցեխից և գերեզմանի է նման: Տունը երկրորդ հարկում է, և ամբողջ ընտանիքն այդտեղ է ապրում: Տղամարդիկ կանանցից, ծերերը երիտասարդներից առանձնացած չեն: Կարելի է ասել, որ ավելի քան հազար տարի առաջ, Եռյակ թագավորության վաղ ժամանակներում, կորեական ազգի նախնիները ձևավորել էին իրենց ուրույն կառուցողական ոճը, մշակել ու զարգացրել այն և հասցրել մինչև մեր օրերը: Ցին գահատոհմի գահակալության կեսերին, արգելքի քաղաքականության վերացման հետ, Կորեայի հյուսիսային մասում ընկած Սյանցզինդաո տարածքի շատ գյուղացիներ ու ագարակատերեր գաղթեցին Չինաստանի Յանբյան շրջան: Մյուս շրջաններ ևս մարդիկ գաղթեցին Կորեայի հարավային մասերից: Կորեական թերակղզու հյուսիսի և հարավի տարբեր տիպերի քաղաքացիական կացարանները նույնպես տեղափոխվեցին Չինաստան: Խառնվելով տեղական հան և ման քաղաքացիական կացարաններին՝ ի վերջո ձևավորվեց կորեական ազգության ինքնատիպ շինարարությունը:

2. Շինության կառուցվածքը

Կորեական ազգի ավանդական կացարանը վառ և անզուգական բնույթ ունի: Հատակագիծը հիմնականում հաստատված ուղղանկյուն է, մինչդեռ որոշ կացարաններ «L» նշանի ձևն ունեն: Տարբեր կացարաններում առջևի անցումներ կան, որ սալարկված են քարով կամ փայտե տախտակներով են պատված: Եվ դրանք իրենց դիրքով կարող են բա-

ժանվել երեք տեսակի, այն է՝ միջին անցումի, կողային անցումի և լրիվ անցումի: Կացարանը չի կառուցվում հարավահայաց սկզբունքով, բայց ճանապարհի երկայնքով է լինում:



Կենտրոնական սենյակը կառուցվում է որպես կորեական ազգային կացարանի գլխավոր սենյակ: Մինչդեռ գյուղական վայրերում ո՛չ պատ է կառուցվում, ո՛չ բակ, էլ չենք ասում կողասենյակի մասին: Դրանց մեծամասնությունը առանձնացված մասնավոր բնակատեղեր են՝ տան ներսում կովերի գոմով: Կենսատարածքի կենտրոնը ավելի շատ ներսի տարածությունն է, քան բակը: Եվ տների երեսպատումն էլ պատահական բնույթ է կրում:

Կորեական ազգային կացարան մտնելուց հետո կտեսնեք, որ այն բաղկացած է առաստաղից, մեծ ջեռուցվող *կանգից*, մի քիչ գետնից և արտաքին պատերից: Ըստ տարբեր գործառույթների՝ սենյակները բաժանվում են նախասրահի, վառարանի սենյակի, կովերի համար գոմի, խոտի սենյակի եւ տարբեր չափերի մի շարք այլ սենյակների: Դռան շեմը բարձր է: Նախասրահը սովորաբար գտնվում է վառարանից ձախ: Եվ այդտեղ շուրջ 1,5-ից 2 քառակուսի մետր տեղ կա, որպեսզի մուտքի մոտ հանեն կոշիկները, ու դա 0,2-ից 0,3 մետրով ցածր է ջեռուցվող *կանգից* կամ վառարանից:

Հստակ տարանջատում չկա խոհանոցի և ննջասենյակի միջև: Դրանք բաժանում են միևնույն տարածքը, ինչն առանձնահատուկ սենյակի կառուցվածք է, որ բնորոշ է կորեական ազգին: Խոհանոցն ունի վառարան, որի վրա երեք կաթսա է դրված՝ մեծ, միջին և փոքր: Վառարանի մակերեսը զուգահեռ է անկողնու մակերեսին: Վառարանը կիպ մոտ է սենյակում ջեռուցվող *կանգին*, այնպես որ կարող է կերակուր պատրաստելու ժամանակ տաքացնել *կանգը*: Վառարանը, ջեռուցվող *կանգ* և ծխնելույզը միացված են ծխատար խողովակի միջոցով, այնպես որ ջերմությունը կարող

է պտտվել սենյակի ներսում մինչև վերջնականապես դուրս ելնելը:

Կորեական ազգային կացարանի տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ ամեն տուն ունի ջեռուցվող *կանգ*: Բացի կովերի գոմից, խոտի սենյակից և մի քանի փոքր սենյակներից, մնացած բոլոր սենյակներում տեղակայված է ջեռուցվող *կանգ*, որն ընդգրկում է ամբողջ սենյակի երկու երրորդը: Սովորաբար *կանգը* 0,3 մետր ավելի բարձր է, քան դրսում գետինը և 1,8-ից 2 մետր հեռու է առաստաղից: Այնպես որ՝ ամբողջ սենյակը ցածր ու փոքր է թվում: Ամենօրյա առտնին գործունեությունը տեղի է ունենում *կանգի* վրա: Կանայք իրենց տնային գործերն են անում, զրուցում կին հյուրերի հետ և հանգստանում դրա վրա: Իսկ տղամարդիկ հյուրասիրում և զբաղեցնում են հյուրերին, ուտում, հանգստանում, գիրք կամ թերթ կարդում կամ տնային գործեր կատարում: Երեխաները սովորում են կամ խաղում այդտեղ, ծերերն ամբողջ օրն այդտեղ են մնում: Կորեացի ժողովրդի ողջ կյանքը սերտորեն կապված է անկողնու հետ, որտեղ մարդ ծնվում է, մեծանում, ապա մահանում: Միաժամանակ՝ այս կյանքը երկար և խոր ազդեցություն է գործել կորեացի ժողովրդի մարմնի կառուցվածքի և մտածելակերպի վրա: Նրանց նույնիսկ անվանում են «ջեռուցվող *կանգի* վրայի մարդիկ»:

Վառարանի հետ կապված սենյակն ամենամեծ սենյակն է ու նաև հիմնական կենտրոնական վայրը, որտեղ ընտանեկան ակտիվ գործունեություն է ծավալվում, միջոցառումներ են լինում, և սովորաբար այն զբաղեցնում է երկու բաց սենյակ: Ցերեկն այն օգտագործվում է ընտանեկան ճաշկերույթների, հյուր ընդունելու և հյուրասիրելու, կարդալու, տան գործեր կատարելու (ներառյալ՝ բոլոր կերակուրներ պատրաստելը) և նույնիսկ լվացք անելու համար: Երեկոյան այն տնային տնտեսուհիների ապրելավայրն է կամ պատրաստվում է ընտանիքի երեք կամ չորս սերունդ ավագների համար: Տարբեր չափերի սենյակները պատրաստվում են ընտանիքի տարբեր անդամների և հյուրերի գործունեության ու հանգստի համար:

Գոմը գյուղատնտեսական անասուններ պահելու և բուծելու համար է: Խոտի սենյակն առանձնացված պահեստարան է: Գոմը խոտի սենյակի կողքին է, իսկ եթե խոտի սենյակ չկա, գոմը պիտի խոհանոցի շուրջ տեղակայվի: Երբեմն այն խոտի սենյակի առջևում է տեղակայված:

Ազգությամբ կորեացիները նախընտրում են *Ճի Չանշենի* պաշտամունքի առարկա՝ տոտեմը, իրենց սենյակը զարդարելիս: *Ճի Չանշեն* են ծովը, լեռները, ջուրը, քարերը, ամպերը, սոճիները, մշտադալար խոտը, կռունկներն ու եղջերուները: Դրանք հաճախ կարելի է տեսնել ծածկավարագույրների, հայելանկարների և գունավոր նկարների ձևով:

3. Տեսակներ և առանձնահատկություններ



Ըստ տանիքի կառուցվածքի՝ կորեական ազգության բնակավայրը կարող է բաժանվել երեք տեսակի, այն է՝ սուանշան տանիք, վուդիան տանիք և սիեշան տանիք:

Սուանշան տանիքը ամենապարզ ձևի է: Տանիքն ունի երկու կողմի վրա թեքություն և մեջտեղում մեկ գագաթագիծ, որի երկու ծայրերում չորս կախված եզրեր են ձգվում և ձևավորում տանիքի երկու թեքությունները: Առջևն ու ետևը ուղղանկյուն ծածկեր են, որոնք համաչափ, սիմետրիկ են և թեքվում են դեպի ցած: Ծածկերի արտաքին քիվերը ձգվում են պատից դուրս և վեր են թեքվում՝ ձևավորելու համար չորս անկյուն: Գործնականում այդ կառույցն արդյունավետ է տունն անձրևից պաշտպանելու համար:

Վուդիան տանիքը կորեական ազգության ավանդական կացարանների մեջ ամենատարածվածն է: Տանիքն ունի չորս թեքություն, որոնք ցած են իջնում և մի փոքր կորանում, և կապված են հիմնական գագաթագծով ու չորս ճյուղային գագաթագծերով: Անկյուններն ու քիվերը բոլորը վեր են թեքված հսկայական կորությամբ՝ պաշտպանելու համար տանիքի մակերեսը: Այս տեսակի տանիքի ամենամեծ առավելությունն այն է, որ արդյունավետ է ջրի արտահոսելու և դրսի պատերն անձրևից շատ լավ պաշտպանելու համար:

Սիեշան տանիքը կորեական ազգային ավանդական կացարանների մեջ ամենաբարձրակարգն է: Այն ունի ինը գագաթագիծ՝ մեկ հիմնական գագաթագիծ, չորս կախված գագաթագիծ և չորս հենագագաթ: Դրա համար էլ կոչվում է նաև ինը գագաթագծով տանիք: Վերին կեսն ընդունում է սուանշան տանիքի ձև, մինչդեռ ստորին կեսը՝ վուդիան տանիքի ձև ունի, և այսպիսով՝ այդ երկու ոճերի համադրություն է: Հյուսիսային կացարանների մեջ կորեական ազգային կացարանը միակն է, որ ընդունում է սիեշան տեսակի տանիքի ձևը:

4. Սովորույթներ և արգելքներ



Կորեական ազգային կացարանների սովորույթները հարուստ էթնիկական առանձնահատկություններ ունեն: Տունը կառուցելիս եզակի մի արարողություն են կատարում: Նախ՝ տանտերը հրավիրելու է արարողություն կատարող տեղական վարպետին, որը գիտե երկրագուշակ՝ գեոմանտիկ նախանշանները, որպեսզի ստուգի տան ուղղությունն ու դիրքը:

Տան կառուցվելուց հետո պետք է ընտրել հարմար օր, որպեսզի մարդիկ տուն տեղափոխվեն: Տան բակում դրվում է խսիր կամ ուղեգորգ՝ նորամուտի արարողության, ինչպես նաև խոր ափսեով գոլորշի արձակող նոր թխված բրնձե բիսկվիտ բերելու համար: Ներս մտնելու ժամանակը հաստատվելուց հետո տանտերը վերցնում է խոր ափսեն և ներս տանում խոհանոց ու սկսում պատրաստել: Եվ կերակուրն սկզբում մատուցվում է որպես Խոհանոցի աստծուն զոհաբերություն, ապա որպես գյուղացիներին հյուրասիրություն: Երբ ամբողջ կահույքը տեղափոխվում է տուն, առաջին բանը, որ արվելու է, նախնիների հուշատախտակներն այդտեղ տեղակայելն ու նրանց նոր տան մասին ասելն է և օրհնություն ու երկարակեցություն հայցելը:

Կորեական ազգային կացարանի ամեն մի սենյակ խիստ ու ճշգրիտ իր գործառույթն ու դերն ունի: Եվ դա շատ սերտ կապ ունի կոնֆուցիականության հետ: Տղամարդկանց և կանանց միջև եղած տարբերության պատճառով կան բազմաթիվ փոքր սենյակներ, որպեսզի տղամարդիկ ու կա-

նայք միմյանցից բաժանվեն: Նույնիսկ ամենացածր դասն ու ամենաաղքատ ընտանիքները բացառություն չեն կազմում: Քանի որ ընդունված մտածողության համաձայն տղամարդիկ կանանցից վեր են դասվում, նրանք սովորաբար ապրում են դեպի հարավ նայող սենյակներում, իսկ կանայք ապրում և տնային գործերը կատարում են դեպի հյուսիս նայող սենյակներում: Ավելին. յուրաքանչյուր սենյակ ունի իր առանձին մուտքը: Տղամարդիկ չեն գնում ուտելիք պատրաստելու սենյակը կամ այնտեղ, որտեղ կանայք տնային գործեր են անում: Երբ հյուրեր կան, տղամարդիկ ուղղակի գնում են հարավահայաց, իսկ կանայք՝ հյուսիսահայաց սենյակները: Տղամարդ հյուրերը չպետք է գնան այնտեղ, որտեղ ուտելիք է պատրաստվում, այլապես ծաղրի կենթարկվեն մյուսների կողմից: Քանի որ ավանդույթի համաձայն տարեցներին հարգում են, իսկ երիտասարդների մասին հոգ են տանում, երբ գնում են քնելու, սովորաբար ավագները քնում են ընդարձակ սենյակում, որը վառարանին մոտ է, իսկ զույգերը քնում են ավագների սենյակում: Եվ մյուս սենյակները պատրաստվում են նոր զույգերի, երեխաների ու հյուրերի համար:

ԼԻՆՆԱՆԻ SOTTO PORTICO ԾԱԾԿԱՊԱՏՇԳԱՄԲԸ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Լիննանն ընդգրկում է այն տարածքը, որ վերաբերում է հարավային Չինաստանի հինգ լեռնաշղթաներին և հիմնականում՝ Գուանդուն, Գուանսի և Հայնան շրջաններին: Նրանց աշխարհագրական միջավայրը և կենցաղային սովորույթները նույնն են: Դարերի ընթացքում մշակութային փոխանակումները ձևավորում են Լիննանի առանձնահատուկ մշակույթը, որը վերածվում է չինական մշակույթի տարաշխարհիկ մի գանձի: Արտաքին հարաբերությունների և բարեփոխումների առջև բաց լինելը, արտասահմանյան և չինական մշակույթների միջև փոխգործակցությունն ու փոխանակումը ձևավորում են տեղայնացված քաղաքացիական բնակատեղ՝ sotto portico *(ծածկած սյունասրահ, առմուտք, սովորաբար երկու կողմերում խանութներ ունեցող ծածկված անցում- ծ. թ.)*:

1. Զարգացման պատմությունը

Sotto portico-ն, որը կարելի է թվագրել հին հունական ամենավաղ ժամանակով՝ 2 000 տարի առաջ, բավականին լայն գործառույթներ ունի և հաճախ է օգտագործվում հասարակական գործունեության առաջադրած պահանջները բավարարելու համար: Այն կարող է նաև պատսպարել մարդկանց շոգ և խոնավ կլիմայից: Նորագույն ժամանակներից ի վեր, արևմտյան մշակույթի ներմուծման հետ, շինության այս ձևը ներդրվել է Լիննանում, ձուլվել տեղական ավանդական շինությունների հետ և ի վերջո վերածվել sotto portico-ի Լիննանում: Ըստ ժամանակի հերթագայության sotto portico-ի զարգացումը կա-

ռելի է բաժանել չորս փուլերի: Ցին գահատոհմի գահակալման ուշ շրջանը և Չինաստանի Հանրապետության վաղ շրջանը ձևավորման ժամանակաշրջանն են: Հարավարևելյան Ասիայից եկած շատ մարդկանց հետ արևմտյան շինարարական հասկացություններ են ներմուծվել Լիննան: Sotto portico-ն չինական ավանդական մշակույթի հետ միավորման, ինտեգրվելու և հակադրման արդյունք է: Չինաստանի Հանրապետության ժամանակաշրջանը դրա զարգացման ժամանակաշրջանն է: Լավ հարմարեցված անձրևոտ և շոգ կլիմային՝ sotto portico-ն դարձավ մոդայիկ՝ Գուանդունի ու Գուանսիի ամբողջ տարածքում և քաղաքային փողոցների պատկեր՝ իր ձևավորված շրջանային առանձնահատկություններով: Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնադրումից մինչև բարեփոխումն ու սահմանների բացման ժամանակաշրջանը դրա անկման ժամանակաշրջանն է: Բարեփոխումից և սահմանների բացումից հետո գալիս է sotto portico-ի վերստին երիտասարդացման շրջանը: Քանի որ մարդիկ իրենց ուշադրությունը կենտրոնացնում են քաղաքային պատմական շրջանների պաշտպանության վրա, քաղաքաշինության դասական ոճը դարձել է ավելի ու ավելի տարածված, և sotto portico-ն, դասական սյունասրահի իր տարրերով ու առանձնահատկություններով, շատ մեծ ուշադրություն է գրավել:

2. Շինության կառուցվածքը

Որպես առևտրային և բնակելի շինություն՝ sotto portico-ն հաճախ կառուցվում է քաղաքի կենտրոնական փողոցի երկու կողմերի երկայնքով և երկուսից չորս հարկով: Երկրորդ հարկից վեր գտնվող սենյակները ձգված են՝ ներքևում գտնվող սյուներն ունենալով որպես հենարան, և դա ձևավորում է անցումը, որպեսզի մարդիկ անցնեն այդտեղով: Ընդհանուր տեսքին նայելով՝ շենքի ճակատը մայթն անցնելու դիրք է ընդունում, այստեղից էլ՝ «sotto portico» անունը հանդիպում է նաև հեծյալ տուն իմաստի հետ: Կան նախագծի տարբեր տիպեր, օրինակ՝ առջևում խանութ, իսկ ետևում բնակելի սենյակ, առաջին հարկը որպես խանութ, իսկ երկրորդը՝ որպես բնակարան, նաև՝ որպես աշխատասենյակ և բնակարան՝ մեկտեղ: Ամրությունն ապահովելու համար օգտագործվում է երկաթբետոնը:

Կառուցվածքային առումով sotto portico-ն կարելի է բաժանել երեք մասի՝ վերնամաս, գլխավոր մաս և հիմնամաս: Sotto portico-ի վերնամասում միշտ կան *շանհուա* և *նիտ էր ցայան* (եզրապատ կամ ճաղաշար): Շենքի գլխավոր մասում բնակելի սենյակներ կան ամբողջ ընտանիքի համար: Ներքին սանդղաշարը կապված է առաջին հարկի հետ: Իսկ դուրս ձգված պատշգամբը՝ ամենահատկանշական տեղը, գտնվում է փողոցի կողմում: Մեծ ուշադրություն է հատկացվում դրա ձևավորմանը: Հիմնամասը, 4-ից 6 կամ նույնիսկ 8 մետր բարձրությամբ, գտնվում է առաջին հարկում: Սյուները, որ շենքի տակից պահում են պատշգամբը, ձևավորում են անընդմեջ անցատարածություն՝ այդպիսով ստեղծելով մարդկանց համար անցում: Երկու սյուների միջև հեռավորությունը 3-ից 5 մետր է: Հիմնամասում գլխավորապես գործարարությամբ զբաղվող կազմակերպություններ են, ինչպես, օրինակ, խանութներ և ռեստորաններ: Խանութների ճակատը արևմտյան կամ խառն արևելաարևմտյան ոճի է, ինչը ցուցափեղկերին

արևմտականացված տեսք է տալիս: Քանի որ sotto portico շենքերը կառուցված են կողք կողքի, sotto portico-ի՝ իրար միացված միջանցքները և դրա կանոնավոր ճակատը փողոցի երկայնքով ձևավորված են, և փողոցը կոչվում է sotto portico փողոց:

Ինչ վերաբերում է ձևավորմանն ու զարդարմանը, շենքի՝ դեպի փողոց նայող ամեն միանման հարթ ճակատ իր սեփական դեմքն ու բնույթն ունի: Որպեսզի տարաբնույթ լինեն և ավելի շատ ակնահաճո, դրանցից մի քանիսը խոռոչներով են, և ներսում ստեղծված է պատշգամբ՝ հարուստ մանրամասներով ու բազմազանությամբ: Վերնամասում մի քանի սրածայր աշտարակներ են կառուցված, որպեսզի հանդիսավոր ու տպավորիչ միջավայր ստեղծվի: Առջևի պատից դուրս են ձգվում մի քանի կամարաձև ծածկեր, որպեսզի շենքի ճակատին դինամիկ ռիթմ հաղորդեն: Ճակատային գույնն առավելապես ճերմակավուն է կամ բաց դարչնագույն և կրեմագույն:

3. Տեսակներ և առանձնահատկություններ

Sotto portico ոճը կարող է բաժանվել երկու հիմնական ուղղությունների՝ *սիգուան* և *դունշան*: Այդ երկուսն ունեն մի քանի տարբերություն: *Սիգուանի* sotto portico-ն խիստ նմանակում է վաղ շրջանի sotto portico-ին: Արտաքին տեսքից սիգուանի sotto portico-ն բարոկկո ոճի կառույցի հստակ նմանակում է: Մեծ թվով հին հռոմեական ձևավորման ու զարդարանքի տարրերը, ինչպես, օրինակ, հռոմեական սյուները, կորուբյուններն ու խոյակները ընդունվել են *շանհուայի* և շինության գլխավոր մասի զարդարանքի մեջ: Միաժամանակ դա խառնված է չինական ավանդական կառուցողական տարրերի հետ: *Դունշանի* sotto portico-ն քիչ ավելի ուշ է ձևավորվել, երբ գեղակառույցի՝ դիզայնի գաղափարը կոնկրետից փոխվել է աբստրակտի, և հրաժարվել են բարդ խորհրդանշական ձևավորումներից ու զարդանախշե-

րից, ինչի հետևանով գեղազարդումը դարձել է ժամանակակից և պարզ: Որպես *դունշանի* sotto portico-ի ամենատիպական մաս՝ չինական վերնաճակատային քիվը, որը համադրում է զարդարանքի և անձրևից պաշտպանելու գործառույթները, դիմացկուն է և գործնական:

Գեղակառույցի ոճերից են՝ կեղծ-գոթական ոճը, հարավարևելյան ասիական ոճը, անտիկ հռոմեական միջանցքի ոճը, կեղծ-բարոկկո ոճը և ժամանակակից ու ավանդական ոճերը: Կեղծ-գոթական ոճը խիստ ուղղահայաց գծեր է ընդունում և կամարաձև պատուհաններ՝ մարմնավորելու համար վեհաշուք, հանդիսավոր և արժանապատիվ գոթական ոճը: Հարավարևելյան ասիական sotto portico-ն, գեղակառույցի իր ուրույն և ստեղծագործական ոճով, տարածված է հարավարևելյան տարածաշրջանում: Հարավարևելյան ասիական sotto portico-ն եզրապատի մեջ ունի մեկ կամ մի քանի կլոր կամ այլ տիպի անցքեր: Այդ գեղակառույցը սքանչելի է իր իմաստուն նշանակությամբ և նրա համար է, որպեսզի կանխարգելի կամ նվազեցնի թայֆունի վնասները: Վերջին հաշվով՝ այն ձևավորում է շինարարական յուրահատուկ ոճ: Անտիկ հռոմեական միջանցքի ոճի sotto portico-ն առաջին հարկում ունի կամարասյուներ: Իսկ սյան միջնամասը զարդարված է պտտվող հասկերով, որ շատ տպավորիչ տեսք ունի: Որոշ տեղերում ընդունված են նաև պարզեցված հռոմեական սյուներ՝ ներկայացնելու համար դասական ոճը: Կեղծ-բարոկկո ոճի sotto portico-ն ընդունում է արևմտյան բարոկկոյի գեղազարդումները, այն հիմնականում գործածվում է *շանհուայում* և եզրապատի կորագծերում: Ժամանակակից sotto portico-ն սկիզբ է առել 20-րդ դարի 80-ականներին: Հստակ տարբերություններ կան ազգային sotto portico-ներից՝ չափի, կառուցվածքի, նյութի, ոճի առումով, ինչպես, օրինակ, դուրս ձգված առաջին հարկը, մայթը ծածկող անցումը, երկուսից երեք պատուհանները՝ կողք կողքի, շենքի առջևի մասում, ճակատային մասի քիչ զարդարվածությունը և այլն:

4. Սովորույթներ և գործառույթներ

Sotto portico-ն զարգանում է արդի ժամանակներից, և նրան շրջապատող կենդանի մշակույթներն ու սովորույթները ձևավորվում են նրա գործառույթներին համապատասխան:

Sotto portico-ն իրենից ներկայացնում է մի կառույց, որ նախատեսված է որպես անցում, գործարարությամբ զբաղվելու, բնակվելու շինություն, նաև ժամանցի, հանգստի ու հյուրասիրության համար, և մեկ գործառույթից ձեռք է բերում բազում գործառույթներ: Նախևառաջ՝ sotto portico-ն ունի անցումի գործառույթ: Այն կարող է մարդկանց պաշտպանել արևից

ու անձրևից, երբ նրանք գնումներ են կատարում կամ զբոսնում են տանից դուրս, և փորձում են շոգից կամ խոնավ եղանակից խուսափել: Բացի այդ, երբ մարդիկ հանգստի կարիք են զգում, կարող են անցումում նստել և զրուցել իրենց առօրյա կյանքի թեմաներով: Ամեն մի sotto portico իր պատմությունն ունի: Տարածքը կարող է կարևոր դեր ունենալ մարդկանց հանգստի ու ժամանցի համար: Այն ավելի հաճելի է դարձնում առօրյա հանգիստը և հոգ է տանում հարևանների, մարդկանց շրջակա միջավայրի մասին: Ամռան երեկոներին մարդիկ այստեղ հավաքվում են ուտելու, ըմպելու, հանգստանալու և խաղալու համար: Շուրջբոլորն ամեն ինչ ներդաշնակություն ու բարեկամական կենդանի միջավայր է ձևավորում, և այսպիսով ստեղծվում է կես-հասարակական ու կես-մտերմիկ մի վայր բնակիչների համար:

Դուրս ձգված պատշգամբը կարող է ոչ միայն պաշտպանել առաջին հարկի խանութների ապրանքները արևի ուղիղ ճառագայթներից և անձրևից, այլ նաև ծառայել որպես խանութների մի մաս, որպեսզի ընդլայնվի խանութների արդյունավետ տարածքը, հաճախորդներին առաջարկելով հարմարություններ և գնումների համար ստեղծելով ավելի հարմարավետ միջավայր:

ԿԱՅՊԻՆԻ ԴՅԱՈԼՈՈՒՆ՝ ՉԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՏԱՐՐԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կայպինը, որ գտնվում է Գուանդունի նահանգում, արտասահմանից եկած անդրծովյան չինացիների նշանավոր հայրենի քաղաքն է: Այն գտնվում է Լիննանի ծովեզրյա ափին մոտ և հարում է Հոնկոնգին ու Մակաոյին: Այդտեղ շատ են ցածր հարթավայրերն ու դրանք հատող գետերը: Հնագույն ժամանակներից Կայպինի ժողովուրդը համառ համբերատարության հրաշալի մի ավանդույթ է ունեցել: Նրանք մեկնել են արտասահման արտագնա աշխատանքի, որպեսզի գումար վաստակեն և մեծ հարստություն կուտակեն: Արտերկրից իրենց հետ նրանք բերել են արևմտյան ճարտարապետական կառույցների գաղափարը և կառուցել են տեղական շինություններ՝ *դյաոլոուններ*, համադրելով արևմտյան ու արևելյան նախագծերը: Կայպինի *դյաոլոուն* արևմտյան և արևելյան մշակույթների համադրությունն է ներկայացնում և գրանցված է Համաշխարհային ժառանգության ցանկում:

1. Զարգացման պատմությունը

Կայպինի դյաոլոուն սկիզբ է առել Մին և Ցին գահատոհմերի ժամանակներից, և նրա պատմությունը կարող է բաժանվել երեք շրջանների: Առաջին շրջանն ընկնում է Մին գահատոհմի գահակալության միջին ժամանակաշրջանից մինչև Ցին գահատոհմի գահակալության միջին ժամանակաշրջանը: Ավազակներից, կռիվներից ու տարերային աղետներից պաշտպանվելու համար տեղական բնակիչներն սկսեցին կառուցել *դյաոլոու*, որը ծառայում էր որպես պաշտպանվելու վայր և ապաստարան: Երկրորդ շրջանը, որպես *դյաոլոուի* ծաղկման շրջան, ընկնում է Ցին գահատոհմի գահակալության ավարտից մինչև Ճապոնիայի դեմ

պատերազմի ժամանակաշրջանը: Ափիոնային պատերազմից հետո Կայպինի բնակիչները գնում էին Հարավարևելյան Ասիա, որպեսզի վաստակեին ապրուստի համար: Անձնական մեծ ջանքերի ու դժվարին աշխատանքի շնորհիվ նրանք շատ հարստություն էին ձեռք բերում և պատվով էին տուն վերադառնում: Եվ դա նյութական հզոր աջակցություն էր *դյաոլոուի* կառուցման համար, ու այդ շրջանում այն ավանդականից ակնհայտորեն տարբեր տեսք ուներ: Օտարերկրյա բաները Չինաստանին ծառայեցնելու պարզ նմանակումից *դյաոլոուն* ձևավորել է արևելք-արևմուտք ոճի խառնուրդ: Երրորդ շրջանի ընթացքում՝ Ճապոնիայի դեմ պատերազմից մինչև Չինաստանի Ժողովրդական Հանրապետության վաղ ժամանակները, դյաոլոուն անկում ապրեց: Պատերազմը Չինաստանը նետեց սոցիալական հուզումների մեջ և սոցիալ-տնտեսական առումով մեծ վնասներ հասցրեց երկրին: Հարավարևելյան Ասիայի՝ արտերկրում ապրող չինացիները չէին կարող դրամական փոխանցումներ կատարել արտերկրից կամ տուն վերադառնալ, այդպիսով չկարողանալով նյութապես օժանդակել *դյաոլոուի* կառուցմանը, այդ պատճառով էլ *դյաոլոուն* Կայպինում արագ անկում ապրեց: Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնադրումից հետո, քաղաքական իրավիճակի փոփոխությունների հետ, *դյաոլոուի* կառուցումն ըստ էության դադարեց և անհետացավ պատմության թատերաբեմից:

2. Շինության կառուցվածքը



Կայպինում *դյաոլոու*ի նախագծի և կառուցվածքի մեջ նկատի են առնվել պաշտպանվելու և բնակվելու գործառույթները: Տեղի ընտրության և կառուցվածքի առումով *դյաոլոուն*, որ կառուցվում է գյուղի ետնամասում կամ երկու կողմերում, համապատասխանում է գյուղի դիրքին: Մի կողմից՝ այդպիսի նախագծով շինությունը հարմար է գյուղի բնակիչների համար, որպեսզի ներս մտնեն, երբ արտակարգ իրավիճակ է և վտանգ է սպառնում: Մյուս կողմից՝ դա կապված է չինական երկրագուշակ՝ գեոմանտիկ նախանշանների հետ:

Արտաքինից *դյաոլոուն* 4 կամ 5 հարկանի բարձրություն ունի կամ նույնիսկ 7-ից 9 հարկ է: Մարդիկ կարող են հիանալ նրա փառահեղ արտաքին տեսքով: *Դյաոլոուի* մուտքը, որպես կանոն, կառուցված է առաջին հարկից կես կամ մեկ հարկ ավելի բարձր, որը նայում է դեպի գյուղի մուտքը: Ընդհանրապես, *դյաոլոուի* պատի մեջտեղում դռան մի գոգավոր անցք է: Եվ այդ անցքի կամ մուտքի վերևում կրակելու համար անցքեր են, որպեսզի ավազակներից պաշտպանվեն: Դրանց մի մասից նույնիսկ հրաձգային աշտարակներ են կախված՝ պաշտպանվելու համար: *Դյաոլոուի* պատը հաստ է և ամուր, այն բաղկացած է աղյուսից, քարերից, տոփանած հողից և բետոնից: Փոքր բացվածքներով լուսամուտները կարող են բավարարել միայն լուսավորության և օդափոխության կարիքները: Լուսամուտներն ապահովված են մետաղյա ճաղերով և փակվող փեղկերով, ինչպես նաև մետաղյա միջնաձողերով: *Դյաոլոուի* տանիքի չորս ելուստները նախագծված են որպես ամրոցի ելուստներ, որանք կոչվում են նաև «ծիծեռնակների բույն» և դեպի դուրս են ձգված: Ամրոցի ելուստը փակ է կամ կիսափակ և առջևում ու ներքևում կրակելու համար անցքեր ունի: Բարձր դիրքի շնորհիվ ամրոցի ելուստը կարող է դիմակայել թշնամիներին: Միաժամանակ, կրակելու համար անցքեր կան յուրաքանչյուր հարկի պատե-

րին, ինչը շենքում թաքնված բնակիչներին նաև գրոհելու հնարավորություն է տալիս:

Դյաոլոուի ներսում սենյակի բաժանումը սերտորեն կապված է կառույցի նպատակի հետ և այն կենսակերպի, որում մարդիկ ապրում են շինության մեջ: Հանրային *դյաոլոուի* սենյակը, որն օգտագործվում է գյուղացիների կողմից պաշտպանվելու և ապաստարանի համար, բնորոշ է իր պարզությամբ ու գործնական կիրառելիությամբ, այնպես, որ կարողանա մեծ թվով մարդիկ տեղավորել: Ապրելու և պաշտպանվելու գործառույթները համատեղելով՝ ընտանեկան *դյաոլոուն* նորացվել է ու վերափոխվել, որպեսզի բավարարի նաև բնակության կարիքները: Ընդհանուր առմամբ, այստեղ օգտագործվում է հատակագծի, դասավորության սիմետրիկ, համաչափ առանցքը: Մարդիկ կարող են տեսնել ընդհանուր սենյակը հենց որ մտնեն շինություն: Երկու կողմերում ննջասենյակներ են: Ընդհանուր սենյակի ետնամասում աստիճաններ են՝ թեք դասավորությամբ, իսկ խոհանոցներն ու լոգարանները գտնվում են սանդղասրահի երկու կողմերում: Մնացած հարկերի պարզ դասավորությունն այնպիսին է, ինչպիսին ներքևի հարկում է:



Դյաոլոուում օգտագործված չինական և արևմտյան առանձնահատկությունները հիմնականում ներկայացված են նախշազարդերում: Նախշազարդերի թեմաները բազմազան են: Ավանդականը կենտրոնանում է բույսերի և կենդանիների, պատմական կերպարների, հեքիաթների և բնության տեսարանների վրա, ներառյալ չինական հիերոգլիֆներով՝ օրհնության և հավերժության, ինչպես նաև փողի, ծաղիկների, վիշապի, փյունիկի, կիլինի *(առասպելական կենդանի՝ վիշապի, առյուծի, եղջերավոր կենդանու խառնուրդ- ծ. թ.)* նշանները և այլն: Նախշազարդերի արևմտյան թեմաները հիմնականում գանգուր խոտերի, պտտվող հացահատիկի փորագրապատկերներ են, երկրաչափական պատկերներ և այլն:

Դյաոլոուի ճակատը, որտեղ միշտ կենտրոնացված զարդանախշ է արվել, ներկայացնում է տանտիրոջ և գյուղի պատկերը: Այն բաժանվում է

երեք մասի, որոնք են՝ գլխավոր մասը, պատշգամբը և տանիքը: Գլխավոր մասի ձևավորումը հիմնականում կիրառում է արևմտյան փորագրադրվագներ՝ Լիննանին բնորոշ շինարարական նյութերով: Կիր-ավազային շաղախի նախշազարդը, որ կոչվում է նաև գորշ փորագրադրվագ, նրբագեղ է, գեղազարդ և դժվար քերծվող: Պատշգամբի ձևավորումը մեծ նշանակություն ունի: Ընդհանուր առմամբ, այն զարդարված է չինական ավանդական նախշերով, ինչպես, օրինակ, ծաղկած սալորենու վրա կանգնած կաչաղակ և ուլունքահատիկի հետ խաղացող կիլին: Այդուհանդերձ, պատշգամբի տակ կամարակապ անցման՝ պասաժի պատը հիմնականում զարդարված է գանգուր խոտի արևմտյան նախշերով: Տանիքը, որ կարող է հիմնականում դրսևորել *դյաոլոուի* ոճը, պաշտպանության համար շատ արդյունավետ վայր է, քանի որ ամենաշատ փոփոխությունների ամենաբարդ ձևն ունի: Տանիքի ձևն իր մեջ ներառում է չինական ավանդական ամուր վերնամասն ու կախովի գագաթը: Ավելին, կան բազմազան ձևեր և ոճեր, ներառյալ գոթական ոճն ու բարոկկոն: Տարբեր օտարերկրյա ոճեր համադրվել են մեկտեղ՝ տանտերերի կամքով ու ցանկությամբ, ինչը հանգեցնում է հրաշալի բազմազանության և մեծագույն ու առավել տպավորիչ առանձնահատկություն է ստեղծում:

3. Տեսակներ և առանձնահատկություններ

Ըստ գործառույթների և առանձնահատկությունների՝ Կայպինում *դյաոլոուն* կարող է բաժանվել չորս տեսակի, որոնք են՝ դիտարան *դյաոլոու*, հանրային *դյաոլոու*, բնակարան *դյաոլոու* և խանութ *դյաոլոու*:

Դիտարան *դյաոլոուն* Կայպինում, որը կառուցված է գյուղի բոլոր բնակիչների կողմից, ծառայում է գյուղի բոլոր բնակիչներին հետևյալ գործառույթներով՝ հսկողություն, շուտ նախազգուշացում և պաշտպանություն: Ընդհանրապես, հսկողության հարմար լինելու համար դիտարան *դյաոլոուն* տեղակայված է լայն տեսադաշտ ունեցող վայրերում, ինչպես, օրինակ, գյուղի մուտքի մոտ, գյուղից դուրս գտնվող բլուրների վրա և գետերի մոտակա վայրերում:

Հանրային *դյաոլոուն*, որը կառուցվում է գյուղի բոլոր բնակիչների կամ մի քանի ընտանիքների կողմից, մեծապես օգնում է գյուղի բնկիչներին խուսափելու աղետներից, երբ ավազակներն են հարձակվում կամ ջրհեղեղներ են լինում: Այն այդպես է կոչվում, քանի որ հանրային ներդրում է կատարվել և հանրության համար է օգտագործվում: Բացի այդ, հանրային *դյաոլոուն* տեղակայված է գյուղի միջնմասում կամ վերջում, ինչն ամեն մի ընտանիքի համար ավելի է հեշտացնում այդտեղ մուտք գործելը:

Բնակարան *դյաոլոուն*, կառուցված Կայպինի առանձին հարուստ ընտանիքների կողմից, խաղաղ ժամանակ ընտանիքի ապրելու համար է, ինչպես նաև վտանգի պահերին արժեքավոր ու թանկարժեք իրերը պահելու և պահպանելու համար: Բնակարան *դյաոլոուն* ներկայացնում է իր տիրոջ կարգավիճակն ու հարստությունը: Հետևաբար սեփականատերերը դյաոլոուն կառուցում են հնարավորինս շքեղ՝ այն նախապայմանով, որ պաշտպանության գործառույթն ապահովված է, բնակարան դյաոլոուին ամենափառահեղ և ամենահարուստ ճարտարապետական տեսք տալով:

Խանութ *դյաոլոուն*, որ Կայպինի յուրահատուկ մի *դյաոլոու* է, ներկայացված է այնպիսի խանութներով, ինչպիսիք են հնառճ չինական մասնավոր բանկերը, գրավատներն ու ոսկերչական խանութները: Այդպիսի դյաոլոուն հիմնականում օգտագործվում է կամարաձև մառանի և կանխիկ դրամական միջոցներ ու թանկարժեք այլ իրեր պահելու համար, որպեսզի բարելավվի պաշտպանական գործառույթը: Խանութ *դյաոլոուն*, որպես կանոն, ֆինանսավորվում է խանութի տիրոջ կամ տարբեր բաժնետերերի կողմից:

4. Սովորույթներ և արգելքներ

Թեև *դյաոլոուն* ճարտարապետական ձևի, ձևավորման ու զարդարման մեջ միավորում է արևմտյան շինարարական տարրերը, այն համապատասխանում է ավանդական կենդանի սովորույթներին՝ իր համընդհանուր գործառույթներով, արտացոլելով ավանդական մշակույթի ազդեցությունը: *Դյաոլոուի* կառուցման գործընթացում հատակագիծը հիմնված է «երեք սենյակի և երկու միջանցքի» վրա: Եվ բաժանված է երեք մասի՝ ըստ ավանդական շինարարության սահմանված կարգի, այն է՝ «դարպասն առջևում, սրահը մեջտեղում և ննջասենյակը ետևում», որն արտացոլում է համաչափ առանցքն ու առաջնային-երկրորդական հստակությունը նահապետական դասային համակարգում և բարոյական սկզբունքներում: Գլխավոր սենյակները սովորաբար ընտանիքի ավագների համար են, իսկ երկու կողմերի սենյակները՝ երիտասարդների, ինչը ցույց է տալիս ավագների գերակայությունը: Բացի այդ, Կայպինի սովորույթների համաձայն, սենյակները չի կարելի կառուցել զոհասեղանի վերևում: Այնպես որ՝ դյաոլոուի ներսում նախնիների հուշատախտակները ընդհանուր սենյակի կենտրոնից տեղափոխված են առջևի վերնահարկի կենտրոն: Եվ զոհասեղանն ուղղակի գտնվում է սենյակի արտաքին տարածքի դիմաց:

Կայպինի *դյաոլոուի* կառուցվածքը սերտորեն կապված է ավանդական գեոմանտիկ՝ երկրագուշակ նախանշանների հետ: Ավանդական գեոման-

տիկ նախանշանն ասում է. «Լեռը ծաղկուն զարգացում է բերում ժառանգին, իսկ ջուրը հաջողություն է բերում ընտանիքին»: Լեռները կարող են դիմակայել քամուն ու ջրհեղեղին և ապահովել գյուղի անվտանգությունը: Քանի որ գյուղերը հիմնականում գտնվում են հարթավայրային հողերում, *դյաոլոուները* սովորաբար կառուցվում են գյուղի ետնամասում՝ թիկունքով դեպի լեռը: Որոշ շենքեր դասավորված են գյուղի առջևի կամ ձախ և աջ մասերում, որպեսզի պաշտպանված լինեն լեռներով: Դա համապատասխանում է անվտանգության համար գյուղացիների խնդրանքներին, ինչպես նաև դրամատիկ զարգացումներում նրանց ցանկություններին: Շատ *դյաոլոուներ* տեղադրում են հուշատախտակներ Սյուանուի համար *(չինական դիցաբանության մեջ՝ սև կրիա, չինական կենդանակերպի չորս նշաններից մեկը, որ համապատասխանում է երկնքի հյուսիսային մասի՝ յոթ համաստեղությունից բաղկացած խմբին, խորհրդանշում է հյուսիսը, ջուրը և ձմեռը, պատկերվում է օձով փաթաթված կրիայի տեսքով, անվանում են նաև սև զինվոր- ծ. թ.)*: Ավանդական չինական մշակույթում Սյուանուն առասպելական այն չորս գազաններից մեկն է, որ ներկայացնում է հյուսիսը և սևը: Գեոմանտիկ՝ երկրագուշակ առումով նա նշանակում է հովանավոր, աջակցող: Հետևաբար, Կայպինի ժողովուրդը Սյուանուին զոհաբերություններ է մատուցում: Եվ գյուղաբնակները կանոնավոր կերպով ամեն տարի զոհաբերություններ են կատարում Սյուանուի հուշատախտակների առջև՝ խնդրելով նրանից խաղաղություն ու բարգավաճում:

ԴԱՅ ԱԶԳՈՒԹՅԱՆ ԲԱՄԲՈՒԿԵ ՏՆԵՐՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Չինաստանի Յունանան նահանգում արևադարձային հարուստ անտառներ կան, որտեղ սերնդեսերունդ ապրել են շատ ազգություններ, ինչպես, օրինակ, դայ, հանի, բուլան, դինո, լահու, վա, ի և այլն: Նրանք ապրում են մերձարևադարձային կլիմայական պայմաններում տարիներ շարունակ և ձևավորել են իրենց մշակույթը՝ եզակի էթնիկ առանձնահատկությամբ: Դայ ազգության բամբուկե տներն այդ տեղական դասական բնակավայրերից են՝ իրենց էթնիկ բնորոշ գծերով:

1. Զարգացման պատմությունը

Դայ էթնիկ խմբի ազգային տունը երկար պատմություն ունի: Ըստ հնագիտական հետազոտությունների՝ դայ ազգության բամբուկե տունն առաջացել է ուշ նեոլիթի՝ ուշ քարե դարի ժամանակ, մեր թվարկությունից ավելի քան հազար տարի առաջ: Համաձայն *Պատրայի գրքի* և գիտնականների ուսումնասիրությունների՝ նախնադարյան համայնքներում դայերի նախնիներն իրենց կյանքն անց են կացրել արևադարձային անտառներում և ապրել ձկնորսությամբ ու որսորդությամբ: Ամենօրյա որսորդության և ապրելու հարմարության, ինչպես նաև հսկա վայրի կենդանիներից վնասվելուց պաշտպանվելու համար, նրանք օգտվեցին բարձր ծառերի

ընձեռած հնարավորությունից և ծառերի ճյուղերից ու տերևներից կառուցեցին դայերի առաջին կացարանները, որ դայերի բարբառով կոչվում էին սոն: Դրանից հետո դայերի նախնիները արևադարձային ազատ անտառներում ալոկազիայի կամ լայնատերև ջղախոտի կանաչ տերևներից մեծ տերևներով պատված ծածկեր կառուցեցին, որ կոչվում են *դուֆեյքյու՝* դայերի կացարանների երկրորդ սերունդը: Երբ հողագործության մշակույթի ժամանակներն եկան, հողագործական կյանքին հարմարվելու համար դայերի նախնիները նախընտրեցին կացարաններ կառուցել լեռներին ու ջրերին մոտ միջավայրում: Այս ժամանակահատվածում կացարանները փոքր-ինչ ցածր են, և կոչվում են հենդու. Դա արդեն երրորդ սերունդն է: Դայ հասարակության զարգացման հետ կացարանն աստիճանաբար դարձավ բամբուկե տունը, որ կոչվում է *հենսոն՝* սովորական բամբուկե տունը, որ կարող ենք այսօր տեսնել:

2. Շինության կառուցվածքը

Դայերի բամբուկե տունը գանլան ոճի շինության մի տեսակ է և սովորաբար երկու հարկ ունի: Բամբուկե տուն կառուցելու առաջին քայլը՝ որպես հենարան՝ շուրջանակի տասը հաստ և ամուր բամբուկե սյուներ կանգնեցնելն է, ապա փայտե տախտակներ կամ բամբուկի շերտեր են դրվում սյուների վրա՝ գետնից 2-3 մետր բարձրությամբ, որոնք կարող են դառնալ երկրորդ հարկի հատակը, ապա տները կարող են կառուցվել գետնին: Կատարն ու տանիքի եզրը պատրաստվում են հյուսված խոտով և ունեն եղևնաձև թեքություն: Այդ թեքության մակերեսը կտրուկ է իջնում, իսկ գագաթագիծը կարճ է:

Տան ներքին տարածությունը կարող է բաղկացած լինել հիմքից, սանդուղքից, առջևի միջանցքից, կենտրոնական սենյակից, ննջասենյակից,

պատշգամբից և այլն: Հիմքը կառուցված է բամբուկե կանգնակների վրա: Որոշ տներ կանգնակների շուրջ պատեր ունեն կառուցված, իսկ ներսում ոտնակով հավանգ ու ջուլիակահաստոց են դրված տնային տնտեսուհիների համար: Մարդիկ կարող են նաև ընտանի թռչուններ բուծել, վառելափայտ, կահույք կամ ավելորդ իրեր դնել այդտեղ: Մյուս բամբուկե տները պատեր չունեն, այլ միայն բամբուկե ցանկապատեր կամ ծածկեր, որպեսզի իրեր դնելու համար տեղ պատրաստվի:

Սանդուղքը գետինը երկրորդ հարկին կապող միակ ուղին է: Տարբեր տներ կարող են սանդուղքների տարբեր դիրք ունենալ: Սովորական կացարաններում սանդուղքը սովորաբար արտաքին պատեր ունեցող տան կողքին է: Միայն գյուղացիների գործունեության համար ընդհանուր տանն է սանդուղքը գտնվում տան առջևում: Սովորական կացարաններում գյուղացիները միայն մեկ սանդղաթռիչք են դնում: Մինչդեռ բարձրատոհմիկ ազնվականների տան աստիճանները երկու սանդղաթռիչքով են և դրանց միջև մեկ սանդղահարթակով: Տարբեր հիմքերի վրա գտնվող տները սանդուղքի տարբեր քանակի աստիճաններ ունեն, սովորաբար 9-ից 11: Եվ հիմնականում այդ թիվը կենտ է, քանի որ դայ ժողովուրդը կարծում է, թե կենտ թիվն ավելի հաջողակ է, քան զույգ թիվը:

Աստիճաններով անցնելուց հետո կհասնեք երկրորդ հարկի սենյակներին: Քանի որ առջևի միջանցքը, ուր առաջինն եք մուտք գործում, համեմատաբար լուսավոր է և բաց, դա ընտանիքի ամենօրյա գործունեության վայրն է եղել, ինչպես նաև կարևոր միջանցք՝ անցնելու համար: Միջանցքը մի կողմից շրջապատված է ցանկապատերով, որ մի կողմից կապված են պատշգամբի հետ, որը փոքր-ինչ ցածր է: Պատշգամբը ընտանիքի համար առավոտյան ու երեկոյան լվացվելու և լոգանք ընդունելու տեղ է , իսկ ցերեկը հագուստ կամ հացահատիկ օդափոխելու տեղ: Ամռան շոգ երեկոներին ընտանիքը կարող է նստել պատշգամբում՝ զովանալու և զրու-

ցելու, պատշգամբը դարձնելով հավաքվելու վայր:

Սենյակները լինում են ներսի և դրսի: Դրսի սենյակն օգտագործվում է տան աշխատանքի և առանձին գործեր կատարելու համար: Բամբուկե տան զարգացման հետ՝ արտաքին սենյակը, օգտագործվելով նաև որպես ընդունարան, կապվում է պատշգամբի հետ: Պատշգամբի մյուս ծայրին հաճախ փոքրիկ մի սենյակ կա, որ նման է տաղավարի: Փոքրիկ սենյակի դարակին խմելու ջուր է դրված, իսկ ներքևում ջրի մի տաշտ՝ ամենօրյա օգտագործման համար: Ե՛վ դարակի վրա, և՛ դարակի տակ ջուր բերելու անոթներ կան: Ամեն օր մարդիկ, իրենց աշխատանքն ավարտելուց հետո, պետք է ոտքերը լվանան պատշգամբում, ապա նոր մտնեն սենյակ: Ներսի սենյակը բաժանված է երկու մասի՝ ննջասենյակ և կենտրոնական սենյակ: Ննջասենյակը բաց է, այդտեղ մահճակալ չկա, այլ իրար վրա անկողնակներ են, որ տեղադրված են ըստ տարիքային կարգի՝ հարկ-հարկ, որպեսզի մարդիկ քնեն: Ննջասենյակի և կենտրոնական սենյակի միջև շարժական պատ կա: Երբ հարսանիք է կամ թաղում, պատը կարելի է հեռացնել և անկողնային պարագաները մի կողմ տանել, որպեսզի լայն և բաց տարածք ստեղծվի հյուրերին ընդունելու և հյուրասիրելու համար: Կենտրոնական սենյակը երկու մասից է բաղկացած՝ բուխարի և հյուրասենյակ: Բուխարին կարող եք տեսնել, երբ ոտք դնեք սենյակ, իսկ ներսում, ավելի խորքում, որտեղ գորգեր են փռված, հյուրասենյակն է: Բուխարին սովորաբար քառակուսի է և տեղադրված է ներսի սենյակի դռան կողքին: Նրա շրջանակը փայտից է, որ լցված է հողով: Բուխարին դայերի բամբուկե տանը կարևոր դեր է խաղում: Այն ոչ միայն կերակուր պատրաստելու համար է, այլ նաև ջերմության ու լույսի համար: Երբ ձմեռ է գալիս, ամուսնացած կանայք նստում են բուխարու կողքին հյուսելու և գործելու, կծիկ կծկելու և հյուրերին ընդունելու ու հյուրասիրելու համար:

3. Տեսակներ և առանձնահատկություններ

Գանլան ոճի շինությունը, որը բնակելի կացարանի վաղ շրջանի ոճերից է, 2 000 տարուց ավելի երկարատև պատմություն ունի: Եվ դայերի բամբուկե տները տիպիկ այդ ոճի են: Դայերի ավանդական բամբուկե տները առանձին շինություններ են: Ըստ շինանյութերի տարբերությունների՝ բամբուկե տները կարելի է բաժանել երեք տեսակի՝ բամբուկե, փայտե եւ փայտե-բամբուկե տներ:

Բամբուկից պատրաստված տներ

Ամենավաղ բամբուկե տունը կառուցվել է բամբուկից, որը ծառայել է որպես հիմնական շինանյութ: Ամուր բամբուկներ էին վերցվում՝ որպես հիմնական սյուներ և դրանք հողի մեջ էին մտցվում, իսկ որպես պատ և հատակ՝ բամբուկե ցանկապատ էր պատրաստվում: Բամբուկե բարակ շերտերի հետ խոտ էր հյուսվում՝ տանիքին դնելու համար, սանդուղք պատրաստելու համար էլ էր բամբուկ օգտագործվում: Հին ժամանակներում միայն աղքատներն էին ապրում այն բամբուկե տանը, որ ամբողջությամբ բամբուկից էր պատրաստված:

Փայտից պատրաստված բամբուկե տներ

Հին ժամանակներում փայտե տներ հաճախ պատրաստվում էին իշխող դասի և հարուստների կողմից: Փայտը վերցվում էր ձեղունի և սյուների, իսկ քարը՝ հիմքի համար: Քարե հիմքի վրա կանգնած երկու կամ երեք սյուներ ձևավորում էին բամբուկե տան հիմնական կառուցվածքը: Որքան ավելի բարձր էր Տանտիրոջ կարգավիճակը, այնքան ավելի շատ փայտե սյուներ էր ունենում տունը: Սիշուանբաննայում այդ ժամանակ Չժաոպյանլինի ամենամեծ իշխանի բամբուկե տների փայտե սյուները 120-ից ավելի էին: Տանիքին հաճախ կախովի կղմինդրներ էին շարվում: Պատերն ու մակերեսը կառուցվում էին փայտե տախտակներով: Տան ներսի սանդուղքը գլխավորապես փայտից էր պատրաստվում:

Բամբուկից և փայտից պատրաստված բամբուկե տներ

Դրանք սովորական մարդկանց համար են, և փայտն ու բամբուկն

ընտրվում էին որպես հիմնական շինանյութ: Փայտից պատրաստված հեծանասյուները կանգնած են քարե հիմքի վրա: Պատերն ու մակերեսը կառուցվում էին փայտե տախտակներով կամ բամբուկե ցանկապատով: Տանիքին կախովի կղմինդրներ էին շարվում, և խոտ էր դրվում: Իսկ սանդուղքը պատրաստվում էր փայտից կամ բամբուկից:

4. Սովորույթներ և արգելքներ

Դայերի բամբուկե տներում շատ կարևոր է երեսպատումը: Համաձայն դայերի ավանդույթի՝ քնած ժամանակ մարդկանց մարմինը պետք է գագաթագծին ուղղահայաց լինի: Տան դասավորությունը պետք է կազմակերպվի ըստ դրա: Շատ բամբուկե տներում ննջասենյակն ընկած է արևելքում, այնպես որ՝ երբ մարդիկ քնում են և նայում դեպի արևելք, ընդարձակ, ազատ սենյակ կարող է այդտեղ լինել իրերի համար: Դայերի ավանդույթում՝ եթե քնում ես՝ գլուխդ դեպի արևելք, դա համարվում է հաջողության նշան:

Բամբուկե տունը սովորաբար կառուցվում է հարավից հյուսիս ձգվող հիմնական գծի վրա: Մուտքի տարածքը նայում է դեպի հյուսիս, իսկ ներսի տարածքը՝ հարավ: Այս կերպ ձևավորվում է համապատասխան հարաբերակցություն: Ննջասենյակում ներքնակները դրված են ըստ ավագության: Տարեցի համար անկողնակը տեղադրված է ներսի կողմում, իսկ երեխաների համար անկողնակը՝ դրսի կողմում: Իրականության վրա հիմնված՝ անկողնակների այս հաջորդականությունն արտահայտում է մարդու կյանքը՝ ծննդից մինչեւ մահ: Միաժամանակ՝ բամբուկե ննջասենյակում գոյություն ունի մեկ այլ հաջորդականություն, որն ասում է, թե ընտանիքում ավելի կարևոր կարգավիճակ ունեն այն մարդիկ, որոնց անկողինը ննջասենյակում դռնից ավելի հեռու է, սա նաև նշանակում է ավելի շատ իշխանություն ու պարտավորություններ ամբողջ ընտանիքի առջև:

Բամբուկե տանը բազմաթիվ արգելքներ կան: Եթե դրսից օտար մար-

դիկ են մտնում բամբուկե տուն, պետք է հանեն կոշիկները և դնեն դռնից դուրս: Բամբուկե տանը պետք է քայլել թեթև ու մեղմ: Այցելուները չպետք է ո՛չ նստեն բուխարու վրա, ո՛չ էլ քայլեն դրա վրայով: Եվ ոչ ոք երբեք չպետք է նստի դռան շեմին: Բուխարու միջի եռոտանին երբեք չպետք է շարժվի, արգելված է նաև կրակը կոխկրտել: Չի թույլատրվում ոտքերը տաքացնել բուխարու վրա կամ թքել նրա մեջ: Դայերի համար արգելք են համարվում նաև տանը սուլելը և եղունգ կտրելը: Չի թույլատրվում ո՛չ հագուստը որպես բարձ գործածել, ո՛չ էլ նստել բարձի վրա: Շորերն օդափոխելիս վերարկուն պետք է կախել ավելի բարձր, իսկ վարտիքն ու շրջազգեստը՝ ավելի ցածր: Եթե անգամ տանտերը համաձայն է, որ կոշիկներով մտնեն ներս, այցելուն կոշիկները հանելուց առաջ պետք է նստի ուղեգորգի մոտ: Նստելուց հետո տանտերը հյուրասիրելու է այցելուին: Կանայք կամ կրտսեր տղամարդիկ չպետք է ավագներից ավելի պատվավոր տեղում նստեն: Դայերի սովորույթի համաձայն՝ այցելուներին չի թույլատրվում ո՛չ ննջասենյակ մտնել, ո՛չ էլ բացել վարագույրն ու ներս նայել:

ՏՈՒՑԶՅԱ ԱԶԳՈՒԹՅԱՆ ԴՅԱՈՑԶՅԱՈ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԼԵՌԱՆ ՆԵՐՔՈ ԵՎ ԳԵՏԻ ՄՈՏ

Տուցզյա ազգությունը՝ հնագույն Բա ժողովրդի հետնորդները, ապրում է Չինաստանի հարավ-արևմուտքում, անառիկ լեռներում, բարդ տեղանքով մի տարածաշրջան, ուր խաչաձևվում են գետերն ու լեռները, և հարուստ անտառներ կան: Կլիման մերձարևադարձային մուսսոնային է՝ առատ տեղումներով, որն ստեղծում է տաք և խոնավ բնական միջավայր: Տուցզյա ազգության կացութաձևը պայմանավորված է տեղական կլիմայով և բնական այլ պայմաններով: Դարեր շարունակ զարգանալով՝ տուցզյա ազգության կողմից ստեղծվել է քաղաքային բնակատեղի հրաշալի մի տեսակ՝ *դյացզյաո* շինությունը:

1. Զարգացման պատմությունը

Տուցզյա ազգության *դյացզյաո* շինությունը պատկանում է բնակելի տան գանլան ոճի ճարտարապետությանը, և նրա զարգացման ընթացքը պայմանականորեն կարելի է բաժանել չորս փուլի: Մինչ Ցին գահատոհմն ընկած ժամանակաշրջանը *դյացզյաո* շինության սկզբնական շրջանն է: Քամուց, անձրևից պատսպարվելու և վայրի գազանների հարձակումներից խուսափելու համար տուցզյա ազգության նախնիները ծառի ճյուղերից և տերևներից կառուցում էին սանվենչա կամ *վոշիպեն* կոչվող տներ: Տան և Սուն գահատոհմերի ժամանակաշրջանը տուցզյա ազգության *դյացզյաո* շինության ձևավորման ժամանակն է: Նախահայրերը տներ էին կառուցում լեռներում, որտեղ ծառեր կային, որպեսզի պատսպարվեին այնտեղ: Նրանք կառուցում էին նախնական սանվենչան ծառերի վրա և տունն ամրացնում ճյուղերով, տերևներով ու եղեգներով: Քանի որ տները կախված էին, առանց հենարան ծառայող կառույցի, դրանք չինարեն կոչվում էին *դյացզյաո* շինություն: Մին և Ցին գահատոհմերի ժամանակաշրջանը տուցզյա ազգության *դյացզյաո* շինության զարգացման և տարածման ժամանակն էին: Հան ազգության քաղաքային շինություններից ազդեցություն կրելով՝ տուցզյա ազգությունը *դյացզյաո* շինության մեջ մեծ ձևափոխումներ կատարեց և սկսեց հսկա տներ կառուցել, որոնք հիմնված են Յանցզի գետի հարավային շրջանի քաղաքացիական բնակատեղի ճարտարապետական ոճի և տեխնոլոգիայի վրա, դրանք են՝ Լյոսային բարձրավանդակի բնակատեղերն ու հյուսիսային Չինաստանում գտնվող սիհեյուանները: Քանի որ ժամանակակից սոցիալական քաղաքակրթու-



թյունը զարգանում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնադրումից հետո, *դյաոցզյաո* շինության ճարտարապետական ձևի մեջ հնարավոր փոփոխություններ են կատարվել, և տները որոշ վայրերում փոխարինվել են այլ ձևերի քաղաքացիական տներով, իսկ ճարտարապետական նյութերը սպառնալիք են հանդիսացել դյաոցզյաո շինության զարգացման համար: Ներկայումս տուցզյա ազգության *դյաոցզյաո* շինությանը կառավարության կողմից մեծ կարևորություն է տրվել, և կայուն առաջխաղացում է տեղի ունենում:

2. Շինության կառուցվածքը

Շինության կառուցվածքին նայելիս տուցզյաների *դյաոցզյաո* շինությունները փայտաշեն են՝ փայտե ծողակառույցով, որպեսզի կարողանան ծանրությունը պահել: Ավելի քան տասը փայտե հենարաններ են կանգնեցվում հիմքի վրա, յուրաքանչյուրը խոր մտցվում է հողի մեջ, որպեսզի նեցուկ լինեն տան համար: Ապա փայտե տախտակներ կամ սալեր են դրվում հենասյուներին՝ որպես հատակ: Կիրառվում է երիթը փորակի մեջ մտցնելով ամրացման ձևը, և ամբողջ տունը կառուցվում է տանիքի հեծանների ու հենասյուների տարրերը միացնելու միջոցով: Տների պատե-

ը միշտ դրվում են՝ հող, քար և փայտանյութ հավելելով: Ոմանք օգտագործում են քար և հում աղյուս պատերի համար, իսկ դրսի մասը կառուցվում է կոպիճներով, քարակտորներով, քարախճով կամ չթրծած կավով, իսկ ներսի մասը՝ փայտե տախտակներով: Պատերը սովորաբար օգտագործում են որպես պարիսպ և տարածքը բաժանելու միջնորմ: Եռանկյունաձև վերնաճակատն ու եզրավոր տանիքները օգտագործվում են, որպեսզի տունն ավելի հարմար լինի ջրահեռացման, օդափոխության և ջերմությունը ցրելու համար: Ավանդական *դյաոցզյաո* շինությունները ծածկված են ծղոտով կամ մայրու կեղևներով, ոմանք էլ օգտագործում են սալաքարեր: Ներկայումս սկզբունքորեն կիրառվում է պատշարությունը:

Հարթ հատակագծի ոճերը միշտ մեկ գլխավոր տուն են՝ մեկ թևաշենքով կամ մեկ գլխավոր տուն՝ երկու թևաշենքով: Եվ թևաշենքերն ընկած են գլխավոր տան երկու կողմերում՝ *դյաոցզյաո* շինության ձևով: *Դյաոցզյաո* շինությունը միշտ ուղղահայաց է գլխավոր տանը, բայց երբեմն դա թեք խաչաձևում է՝ ճանապարհային կամ աշխարհագրական սահմանափակումների պատճառով: Գագաթածածկի ստանդարտ լայնությունը, խորությունը, բարձրությունը և *դյաոցզյաո* շինության բարձրությունը գլխավոր տան լայնությունից, խորությունից ու բարձրությունից ավելի քիչ են, որը միշտ գտնվում է ամբողջ տան կենտրոնում՝ լուսավոր, ընդարձակ և կանոնավոր ձևավորված: Գլխավոր տան կենտրոնի սենյակը կոչվում է «կենտրոնական սենյակ», որը համարվում է հիմնական սենյակ և օգտագործվում է հյուրերին ընդունելու, հյուրասիրելու, նախնիների հուշատախտակներին երկրպագելու կամ մեծ միջոցառումներ անցկացնելու համար, ինչպիսիք ընտանեկան հավաքներն ու տոներն են: Կենտրոնական սենյակի երկու կողմերում էլ սենյակներ են տեղակայված: Թևաշենքերը կամ *դյաոցզյաո* շինությունները կոչվում են «բնակելի սենյակներ»: Կենտրոնական սենյակի ձախ և աջ կողմերում տեղակայված սենյակները յուրաքանչյուրը կենտրոնում հենասյունով բաժանվում են երկու փոքր սենյակի՝ մեկն առջևում և մյուսը ետևում:

Դյանցզյան շինության առջևում մի պատշգամբ է՝ երկու կողմերում միջանցքներով, որը կոչվում է «խաղահարկ»: Պատշգամբը և միջանցքները անկյուններ ունեն և կոչվում են *դյանցզյան* շինություն՝ հատվող անկյուններով: Ե՛վ պատշգամբում, և՛ միջանցքներում տեղակայվում են փայտե շերտաձողերով ճաղաշարեր: Պատշգամբի և միջանցքների հենասյուները հիմնականում ընդհատվում են օդում՝ ներկայացնելով ութանկյուն պրիզմա կամ քառակուսի: Հենասյուների ծայրերը զարդանախշ-փորագրված են տարբեր ձևերով՝ կոնաձև, նկարազարդ գնդի և ճիրանների նման: Վերին հարկերում լուսամուտներ են տեղակայված օդափոխության և ցերեկային բնական լույսի համար: Լուսամուտի ճաղավանդակը զարդարված է հաջողություն բերող նախշերով, ինչպես, օրինակ, դեպի արևը թռչող զույգ փյունիկներ, սալորենիների վրա երգող կաչաղակներ, գնդեր գլորող առյուծներ, կամ ծաղիկների նախշերով, ասենք՝ քաջվարդ, քամելիա, քրիզանթեմ. այս ամենն ամբողջ *դյանցզյան* շինությանը արտասովոր, նրբագեղ, գեղեցիկ և գործնական տեսք է տալիս:

3. Տեսակներ և առանձնահատկություններ

Տուցզյա ազգության *դյանցզյա*ն շինության կառուցման բազմաթիվ տեսակներ կան: Բնական միջավայրի և շինության տեղակայման տարբերությունների պատճառով ձևավորվում են կառուցման տարբեր տիպեր, որոնք կարող են բաժանվել հետևյալ երեք տեսակների՝

<u>Դյանցզյան շինություններ հարթավայրում</u>

Դյանցզյան շինության այս տեսակը կառուցվում է հարթավայրում: Քանի որ գետինը հարթ է, ամբողջ տունը միշտ կառուցվում է գետնի վրա, և տունը կախովի ձևով կառուցելու անհրաժեշտություն չկա: Այս դյանցզյան տունը կառուցելու համար նախագծողներն օգտագործելու են փայտե

հենասյուներ, որպեսզի պահեն երկու թևային սենյակները գլխավոր տան երկու կողմերում՝ հողի մեջ խոր թաղված հենասյուներով: Այսպիսի տներ կառուցելիս՝ հենասյուներով պահվող հատակը միշտ զուգահեռ է գլխավոր տան գետնին, և թևային սենյակներն ավելի բարձր են, քան գլխավոր սենյակը:

Դյաոցզյաո շինություններ ջրի եզրին

Ջրի մոտ կառուցվում է *դյաոցզյաո* շինության հատուկ մի տեսակ, հիմնականում՝ գետի եզրին: Տեղանքն ու միջավայրն իրենց ազդեցությունն են թողնում կառույցի վրա: Տունը պահելու համար օգտագործվում են փայտե հենասյուներ: Հարկերի համար ավելի շատ տարածք ստանալու նպատակով՝ տնամերձ տարածքը պետք է հնարավորինս շատ ձգվի դեպի գետը, ինչը պահանջում է ամուր հիմքեր: Միշտ քարեր են դրվում, որպեսզի ամուր հիմքեր պատրաստվեն, իսկ հենասյուները խորությամբ տեղակայվում են գետի մեջ, և հեծաններ են օգտագործվում, որպեսզի միացվեն գետի ափի պատերի հենարանները: Սրանք բոլորը միասին պահպանում են տան հավասարակշռությունը՝ այնպես, որ տան առջևի մասը կանգնած մնա գետնի վրա, իսկ ետնամասը կախված մնա գետի վրա: Այդպիսի տներում միշտ միջանցքներ կան ու քիվեր են դրվում, և շատերի բացվող լուսամուտները ճաղաշարերով են: Ե՛վ միջանցքները, և՛ սենյակները կախված են ջրի վրա՝ միաձուլվելով շրջակա լեռների և ջրի հետ, որպեսզի ձևավորեն անզուգական մի տեսարան:

Դյաոցզյաո շինություններ զառիվայր իջնող դաշտերի վրա

Դյաոցզյաո շինությունների այս տեսակը կառուցվում է զառիվայր իջնող դաշտերի վրա՝ հիմնականում կառուցման նույն սկզբունքներով, ինչպիսի սկզբունքով որ կառուցվում են ջրի եզրի *դյաոցզյաո* շինություններ-

ը: Զառիթափ տեղանքի պատճառով շատ անհրաժեշտ են պահող հենարանները: Այդ իսկ պատճառով գլխավոր տունը կառուցվում է մեծածավալ հողի վրա, մինչդեռ երկու թևային տների միայն մեկ կողմն է հենվում ամուր գետնի վրա՝ միանալու համար գլխավոր տանը, իսկ մյուս երեք կողմերը կախված են օդում՝ հենվելով գետնի մեջ ամրացված հենասյուներին: *Դյաոցզյաո* շինությունների այս տեսակը հաճախ կարելի է տեսնել լեռնային շրջաններում:

4. Սովորույթներ և արգելքներ

Տեղի ընտրության համար բազմաթիվ արգելքներ կան: Եթե տեղանքի շուրջը խոր փոսեր ու հեղեղատներ կան, կանխարգելիչ միջոցներ պետք է ձեռնարկվեն, օրինակ, բամբուկ աճեցնել, թևային տներ սարքել և խոզաբներ կամ ախոռներ կառուցել: Ավելին, տեղանքի դիմաց եթե սպիտակ ժայռեր են, դա համարվում է ընտանիքի ժառանգների վրա տիրապետող վատ ազդեցություն, և նշանակում է, որ ժառանգները գորշամազ ու ալեհեր կլինեն: Կա այսպիսի մի ասացվածք. «Տան առջևում ու ետևում դատարկությունը կարող է հանգեցնել կնոջ կամ ամուսնու մահվան»: Այդ իսկ պատճառով արգելված է նաև այնպիսի տեղանք ընտրել, որտեղ առջևում կամ ետևում դատարկ տարածություն գոյություն ունի:

Դյաոցզյաո շինությունների տեղանքի ընտրության մի քանի եղանակներ կան, և սովորաբար գաղտնի կերպով հրավիրվում է երկրագուշակ, որպեսզի մյուսներին օգնի՝ կանխելու տեղանքի սխալ ընտրությունը: Տներ կառուցելու համար համապատասխան վայրի ընտրությունը նշանակում է այն քեզ համար հարմար դարձնել: Լեռան աստվածությանը զոհաբերություն կատարելուց հետո երկրագուշակը կողմնացույց է դնում՝ տան դիրքը որոշելու համար: Տուցզյա ազգության բարբառով դա կոչվում է «վիշապի ատամների տեղորոշում»: Նպատակն այն է, որ նախ գնահատվի տեղանքը, և ապա բարենպաստ դիրք ընտրվի՝ դարպասի ուղղությունը որոշելու համար: Տեղն ընտրելուց հետո տանտերը պետք է սկսի ծառեր կտրել, որպեսզի պատրաստի շինանյութ ունենա: Նախքան կտրելը պետք է զոհաբերություն կատարվի Լու Բանին՝ հյուսների ու ատաղձագործների նահապետին, քանի որ *դյաոցզյաո* շինությունները փայտե կառուցվածք ունեն և հիմնականում կառուցվում են ատաղձագործների կողմից: Զոհաբերությունից հետո սկսում են կտրել, որը տուցզյա ազգության կողմից կոչվում է «կանաչ լեռներ կտրել»: Կտրվելիք ծառերն առավելապես կարմրածառեր և տուպելո (անտառային նիսսա) ծառեր են, քանի որ չինարենում այդ երկու ծառերի արտասանությունը հնչում է այնպես, ինչ-

պես «գարուն» և «որդի» բառերի արտասանությունը, իսկ դա նշանակում է «մշտատև գարուն և հազարավոր ժառանգների ծնունդ»:

Կտրելուց հետո ատաղձագործներն սկսում են տան մասերի բաղադրիչների պատրաստումը՝ խաչկապ հեծանները, հենասյուները, քառակուսի սյուները. այս գործընթացը կոչվում է *ցզիաղամա*: Ութ դիագրամ-գծապատկերները, տիեզերքի գծապատկերը, լոտոսի և լոտոսի սերմերի պատկերները նկարվում են վերին խաչկապ հեծանների վրա՝ որպես օրհնություններ, որպեսզի պահպանեն տունը, և այն հուսալի ու հաստատուն լինի: Ապա ատաղձագործները մշակված հեծանասյուները միացնում են երիթներին: Տարբեր մասերը կառուցելով՝ այնուհետ կատարվում է վերջին քայլը՝ «տան կառուցումն ու հենասյուների կանգնեցումը»: Տանտերն ընտրում է բարենպաստ մի օր և համագյուղացիներին խնդրում է շնորհ անել: Նախքան հենասյուների կանգնեցումը պետք է տեղի ունենա հենասյուներին երկրպագելու արարողությունը: Ապա բոլորը միասին աշխատում են տարբեր մասերը կառուցել, ինչպես նաև ճայթռուկներ պայթեցնել, իսկ հարևանները շնորհավորանքի ընծաներ են տալիս: Տան կառուցումից և սյուների կանգնեցումից հետո *դյացոցյաո* շինությունների համար պետք է պատրաստվեն զարդարանքներ, ինչպես նաև ավարտվեն տանիքի հենքը մեխելն ու պատրաստելը, կղմինդրապատելը և փայտե միջնորմները տեղադրելը: Մեծահարուստ ընտանիքները նաև կառուցում ու զարդարում են դեպի երկինք ձգվող որոշ քիվեր և փորագրանկար վիշապներ ու փյունիկներ՝ ճաղաշարերի վրա:

Ի ԿԱՄ ՅԻ ԱԶԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Բոլոր 56 էթնիկ խմբերից ի կամ յի ազգությունը նրանցից է, որոնք երկարատև պատմություն և մշակութային խոր հիմքեր ունեն: Նրանք սկիզբ են առել և սերնդեսերունդ ապրել Չինաստանի հարավարևմտյան տարածաշրջանում, որտեղ խորդուբորդ տեղանքում մեկը մյուսից ավելի բարձր, ուղղաձիգ լեռնագագաթներ են վեր խոյանում, և խաչաձևվող ու միախառնվող գետեր են հոսում: Մարդկային և բնական անզուգական միջավայրը ծնունդ է տալիս ի ազգության սքանչելի մշակույթին և ուրույն ոճով նրա կացարաններին:

1. Զարգացման պատմությունը



Ի ազգության՝ դարերով սրբագրված կացարանների ծագումն ու զարգացումը մոտավոր կարելի է բաժանել չորս փուլի: Դրանք սաղմնավորվել են դեռ նախնադարյան համայնական հասարակությունում: Ի ազգության աշխատասեր նախնիները երկար ժամանակ համատեղ ապրել են վիթխարի լեռներով շրջապատված բնական քարանձավներում: Գյուղատնտեսության մեջ արտադրության տեխնիկայի զարգացման հետ նրանց նախնիները դուրս ելան քարանձավներից դեպի գյուղական միջավայր և սկսեցին ապրուստ վաստակել անասնաբուծությամբ: Նրանք սովորեցին օգտագործել ծառերի ճյուղերը, կեղևները, ծղոտները և այլ նյութեր, որպեսզի կառուցեն վրաններ անասնաբուծության համար՝ խուսափելու քամուց, անձրևից և վայրի կենդանիների հարձակումներից: Ի ազգության կացարանները ձևավորվել են Ցին և Հան գահատոհմերի ժամանակաշրջանում: Սոցիալական արտադրողական ուժերի զարգացման

հետ ի ազգության հասարակությունը մտել էր պատմական նոր փուլ: Նախնիների կենսակերպը փոխվեց վաչկատուն վիճակից կացարաններում նստակյաց վիճակի, այդ կացարաններն էլ ի վերջո փոխվել էին պարզ անասնապահական վրաններից վերածվելով այլ ձևերի, ինչպես, օրինակ, ծղոտե տանիքով տունն է: Ի ազգության կացարաններն արագ զարգացան Տան և Սուն գահատոհմերի օրոք: Ֆեոդալական կայսրերի կողմից սահմանամերձ տարածքները հետախուզելու հետ կենտրոնական հարթավայրերի մշակույթը ներթափանցեց էթնիկ շրջաններ: Ընդունելով և շարունակելով այլ ազգությունների կենսակերպը՝ ի ազգության նախնիները սկսեցին ստեղծել կառույցներ՝ իրենց սեփական տարբերակիչ էթնիկ առանձնահատկություններով: Մին և Ցին գահատոհմերի գահակալության ժամանակները մի շրջան են, երբ ի ազգության կացարանները հասան կատարելության: Գանլան ոճի հիման վրա այդ ժամանակի տները ներառեցին շինարարական այնպիսի ձևեր, ինչպես, օրինակ, հեծանների բարձրացումն ու շերեփաձև կամարները: Աղյուսների և կղմինդրերի նման շինանյութերը սկսեցին լայնորեն կիրառվել՝ շենքի հենքի վերջնական կառույցում:

2. Շինության կառուցվածքը

Ի ազգության բնակատեղը որպես կանոն ուղղանկյունաձև է, երբեմն ալիքաձև գծերով կամ դարպասանման: Երիթ-փորակային ձևով ամրացված փայտե կառուցվածքն է կիրառվում շինարարության ժամանակ, և ընդհանուր տեսարանը ներդաշնակ ու բնական է: Ինչ վերաբերում է արտաքին տեսքին, ի ազգության բնակատեղերի մեծ մասը քառակուսաձև է՝ իր սեփական մուտքով ու ներքնաբակով, ընդհանուր առմամբ երեք դարպասով, առանց ետնադարպասի: Պարսպի մեջ տեղակայված առաջին դարպասը, որ նաև արտաքին դարպասն է, հիմնականում նախատեսված է տնային տն-



տեսությունների բաժանման, մուտքի և պաշտպանության համար: Իջեցվող դուռն ու ցանկապատի դարպասը տեղակայված են գլխավոր սենյակի մոտ, որն արտաքին դարպասի հետ նույն առանցքային գծի վրա է: Դարպասները հիմնականում ներսուդուրս ելումուտ անելու հարմարության համար են, ցերեկային լուսավորության և ընտանի թռչունների՝ տարածքից դուրս ելնելը կանխելու համար: Ընդհանուր առմամբ՝ ի ազգության բնակատեղի պարիսպը մոտ 2.7-ից 3 մետր բարձրություն ունի և 5 մետր երկարություն՝ կառուցված սև քարով և քարաբեկորներով ու գլաքարերի շերտերով սալարկված հենապատով, որն այն ամուր ու դիմացկուն է դարձնում: Բնակատեղերի մեծ մասի պարիսպը կառուցված է տոփանած հողով, սակայն տեղանքի տարբերության պատճառով անխուսափելի տարբերություններ կան:

Ինչ վերաբերում է պատի արտաքին զարդարմանը, ի ազգության ներկայացուցիչները, որոնց գյուղը գտնվում է հեռավոր վայրում, նախընտրում են գործածել սովորական գույները՝ առանց նկարազարդման, մինչդեռ նրանք, որոնց գյուղը քաղաքին մոտ է տեղակայված, սովորաբար գործածում են ցեխի ու խոտի խառնուրդը, որպեսզի հարթեն պատի երեսը, և կրից շերտ են քսում: Փոքր բացվածքով քառակուսի լուսամուտը, 0.4 մետր լայնությամբ և 0.6 մետր բարձրությամբ, հաճախ տեղադրվում է պատի մեջ համեմատաբար բարձր՝ այն ծածկող՝ մի քանի շերտ փայտե կամ բամբուկե ճաղերով: Ցերեկային լույսը հիմնականում ներս է թափանցում լուսամուտից կամ դարպասից: Տանիքն ընդհանրապես թեքահարթ է՝ 25-ից 30 աստիճան թեքությամբ: Տանիքի կառուցման նյութերը մեծ մասամբ հայթայթվում են տեղում: Հիմնականում տանիքները բամբուկով և կղմինդրով են ծածկված:

Ինչ վերաբերում է ներքին հարդարմանը, ի ազգության բնակատեղը ներկայացնում է երեք սենյակների տարածական տեղաբաշխում՝ կենտրոնական սենյակ և և երկու կողմնային սենյակներ: Կենտրոնական սենյակը

ի ազգության բնակատեղի հիմնական կենտրոնն է: Բուխարին, որ ի ազգության բարբառով կոչվում է նաև գա, տեղակայված է դարպասի ձախ կողմում, մոտ երեք մետր հեռավորության վրա ձախ անկյունից և ետևի անկյունից: Դրան որպես հենարան են ծառայում երեք կտոր քարեր: Համարվելով ընտանեկան օջախի խորհրդանիշ՝ բուխարին ի ազգության մարդկանց համար ընտանեկան գործունեություն ծավալելու և միջոցառումների հիմնական տարածքն է: Այստեղ են կերակուր պատրաստում, տաքանում, ընդունելություն կատարում և քննարկումներ անցկացնում, ինչպես նաև կրոնական գործունեություն ծավալում: Ի ժողովուրդը հավատում է, որ բուխարին, հատկապես կրակը բուխարու մեջ, սերտորեն կապված է իրենց ընտանիքի անդամների ճակատագրի հետ: Որքան կրակն ուժգին է, այնքան ավելի լավ կլինի ընտանիքի համար, այդ իսկ պատճառով կրակը բուխարու մեջ տարին բոլոր վառ են պահում՝ երբեք չթողնելով, որ այն մարի:



Շինության ձևավորումն ու զարդարումը կարևոր է. դա ցույց է տալիս ի ազգության բնակատեղի առանձնահատկությունը: Բնակատեղի համար ընդունված է տանիքի սև գույնը, իսկ գագաթագիծն ու եզրերն ուրվագծելու համար օգտագործում են կրաքար: Դարչնակարմիրն օգտագործվում է սյուների, քիվերի և դարպասների համար, կարմիրի, դեղինի և սևի խառնուրդն ընդունված է երեսպատման տախտակների համար, որն առանձնացնում է ներքին տարածքը՝ անհրաժեշտ պահանջմունքի համաձայն, որ տարածական իմաստ ունի: Ի ազգության մարդիկ սիրում են դարպասի և ճակատաքարի վրա գծանկարել արև, լուսին, աստղեր, ծաղիկներ, թռչուններ և գազաններ, այդպես աղոթք հղելով արևի և լուսնի աստվածություններին, որպեսզի նրանք միշտ պաշտպանեն իրենց ընտանիքի անդամներին: Շատ դեպքերում քիվերին փորագրվում են «գանձ բռնած երկու վիշապների», «մարգարտի հետ խաղացող երկու վիշապների» և «վիշապի ու փյունիկի կողմից բերվող բարգավաճման» զարդանկար

նախշերը: Մեծահարուստ ընտանիքում սյուների վերնամասում տեղադրվում են փայտից փորագրաքանդակած չորս թութակներ: Քանի որ թութակը ի ազգության կողմից համարվում է կախարդական թռչուն, փայտից փորագրաքանդակած թութակները տեղադրվում են, որպեսզի նրանց աղոթք հղեն իրենց օրհնության համար: Բացի այդ, պարսպի վերին չորս անկյուններում կանգնեցված են չորս երկնային շներ՝ ցույց տալով, որ պաշտպանում են ընտանիքը սատանայի ներխուժումից: Բնակատեղի սյուներին փորագրված են նաև նրբագեղ երկրաչափական պատկերներ:

3. Սովորույթներ և արգելքներ

Ի ազգության մարդկանց կարծիքով՝ նոր տներ կառուցելը սուրբ գործ է: Եվ աստվածներն ու սատանաները խիստ ուշադիր են ու սերտորեն հետևում են ամեն մի ընթացակարգի: Դրա համար էլ մարդիկ հույս ունեն խաղաղություն ու հովանավորություն ձեռք բերել և խուսափել չար ոգիներից: Ի ազգության մարդկանց համար՝ նոր տուն կառուցելու ընթացակարգերը հիմնականում ներառում են սկիզբը (որ չինարեն արտասանվում է *դոնթու*), դարպասի շրջանակի տեղադրումը, տանիքը կապելը և տուն մտնելը:

Սկիզբը, որ ի ազգության բարբառով կոչվում է նաև չժացզիդուո, նշանակում է բարենպաստ օր ընտրել շինարարությունն սկսելու համար: Այն տարին, երբ ընտրում են շինարարությունն սկսելու համար, պետք է տանտիրուհիների տարիքը կենտ թիվ լինի, իսկ դարպասի ուղղությունը պետք է որոշվի տարիքային դիրքորոշման ուղղությունից ելնելով: Սովորաբար ի ազգության բնակատեղի դարպասը նայում է դեպի արևմուտք: Սկզբում ի ազգության մարդկանց համար տաբու՝ արգելք էր տան հիմքից ոսկորներ, սև ածուխներ կամ այլ տարօրինակ առարկաներ փորել հանելը: Եթե վերը նշվածներից որևէ բան էր հայտնաբերվում, դա նշանակում էր, որ տեղն անբարենպաստ է, և տունը կառուցել ավարտելը շատ անհարմարություններ կբերի տանտիրոջը: Հետևաբար, հարկ է ընտրել մեկ այլ հիմք: Հիմքը գցելուց հետո պետք է կանգնեցվեն փայտե չորս սյուներ չորս անկյուններում՝ որպես նշաններ, և այնտեղ պետք է հսկեն մարդիկ՝ կանխելու, որ թշնամիները հիմքի մեջ կեղտ ու աղտեղություն չթաղեն: Ապա կառուցվում են պատերը: Երբ ամբողջական պատը հասնում է 2 մետրի, սկսում են դարպասի շրջանակը տեղադրել, որ ի ազգության բարբառով կոչվում է նաև *վեյմենրեն* կամ *վեյկեու*: Ի ազգության մարդիկ հավատում են, որ դարպասի շրջանակը մարդկանց և ընտանի կենդանիների համար ամենօրյա անցատեղ է: Դրա համար էլ ընտրվում է տեղադրման համար բա-

րեհաջող օր: Այս կերպ, աստվածները կարող են ապահովել, որ ընտանիքի անդամներն ունենան քաջառողջություն, և ընտանի կենդանիները բոլորը բազմանան: Այնուհետև տանիքը կապելը պետք է իրականացվի, որ կոչվում է նաև իսեցզի կամ տիլուոցզի: Նախ՝ հեծանի վրա ակոս է փորվելու, այդտեղ տեղադրվելու են արծաթի կտորներ, ինչպես պահանջվում է, և կարմիր շորի մի կտոր է պետք կապել հեծանին՝ այսպիսով ազդարարելով ատաղձագործի նուրբ ու ճշգրիտ վարպետությունը, ինչպես նաև՝ տանտիրոջ խաղաղությունն ու բարգավաճումը: Այնուհետեւ մի մեծ կարմիր աքաղաղ է կապվելու հեծանին, և գուշակություններ են արվելու՝ կախված այն բանից, թե ո՛ր ուղղությամբ է ընկնում աքաղաղը: Եթե աքաղաղն ընկնում է դարպասի ուղղությամբ և բարձր ձայնով կանչում, դա բարի նշան է: Հակառակ դեպքում, չար ոգիներից պաշտպանվելու համար, պետք է կատարվի դրանց դուրս քշելու արարողություն: Տան շինարարությունն ավարտելուց հետո մարդիկ կարող են ներս մտնել. ի ազգության բարբառով դա կոչվում է *յեու*: Նախ բարենպաստ օր պետք է ընտրվի՝ դարպասից կախելով ցուլի կամ խոյի եղջյուր, որպեսզի չար ամեն բան լռեցվի ու ճնշվի: Նախքան տանտերը ներս կմտնի՝ քարի փոքրիկ մի կտոր պետք է այրի բուխարու մեջ՝ ձեռքին բռնած կորիարիայի ճյուղ: Տանտերը տուն մտնելիս պետք է պատին գինի ցողի և հմայախոսքեր վանկարկի: Վերջապես կորիարիայի ճյուղը տեղադրվելու է ճակատաքարին՝ խուսափելու համար չար ոգիներից: Հարստության համար աղոթելու նպատակով տանտերը նաև պետք է անասուններին ներս քշի տուն՝ հանգիստ ու հարմարավետ կյանքը վայելելու վերաբերյալ խոսքեր արտաբերելով: Ապա բուխարու կողքին հրավառություն պետք է կատարել: Որպեսզի նոր տան շինարարության ավարտը տոնվի, և հարևանների ու հարազատների կողմից արված օգնությունը գնահատվի, տուն տեղափոխվելու օրը տանտերը պետք է խոզեր և ոչխարներ մորթի, իսկ հարևանները պետք է հատուկ պատրաստված բրինձ և տոֆու (սոյայից պատրաստված կաթնաշոռ - ծ. թ.) ուղարկեն՝ տոնակատարության համար:

ՈՒՅՂՈՒՐՆԵՐԻ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԸ ԽԱՂՈՂԻ ՎԱԶԵՐԻ ՏԱԿ

Գտնվելով Չինաստանի արեւմտյան սահմանամերձ շրջաններում՝ Սինցզյանը՝ հնագույն Մետաքսի ճանապարհի պատմականորեն կարեւոր ուղին, աչքի է ընկնում այնպիսի լանդշաֆտ-բնատեսարաններով, ինչպիսիք են Տյանշանի լեռները և մեծ անապատները: Սինցզյանում բազմաթիվ ազգություններ են բնակվում, որոնց թվում՝ ույղուրները մեծամասնություն են կազմում: Ույղուրների կողմից իսլամին հավատարիմ կառչած մնալը, աշխարհագրական և կլիմայական առանձնահատուկ միջավայրի ու պայմանների հետ զուգորդված՝ ույղուրական կացարաններին յուրահատուկ տևական հմայք է հաղորդում:

1. Զարգացման պատմությունը

Շույի (գիշերազգեստ) կոչվող կացարանները վաղ ժամանակների քաղաքացիական կառույցներ են: Այժմ, սակայն դրանք վերածվել են բետոնե և աղյուսե կառույցների: Ույղուրական կացարանները զարգացման չորս փուլ են անցել: Վաղ ժամանակներում ույղուրների նախահայրերն ապրել են լյոսային քարանձավներում պարզունակ պայմաններում և շատ հաճախ տուժել են բնական աղետներից: Կարախանական գահատոհմի խանությունը 9-րդ դարում, որի տիրապետության ժամանակ ույղուր ազգության մեջ լայն տարածում գտավ իսլամական մշակույթը, և կրոնական մշակույթի տարրերը ներառվեցին ույղուրական քաղաքացիական շինություններում, ույղուրական կացարանների ձևավորման ժամանակաշրջանն էր: Այս ժամանակաշրջանի կացարանները պատկանում էին այգու ոճի բնակարաններին՝ դեպի հարավարևմուտք նայող դարպասով և ներքնաբակում տանիքով կամ առանց

տանիքի ձեղնահարկով: 15-րդ դարում Սայեդների գահատոհմի իշխանության ժամանակաշրջանը ույղուրական կացարանների ձևավորման շրջանն էր, որի ժամանակ ներքնաբակը դարձավ կենտրոն, և նախագծում ընդունվեց սիհեյուանի ճարտարապետական ձևը՝ առավել տարածված լինելով քաղաքացիական շենքի կառուցվածքը: Շինության կառուցվածքի հիմնական առանձնահատկությունն այն է, որ պատը կառուցելիս օգտագործվում էին փայտե հենասյուներ, որպեսզի կառույցն ամուր լինի: 17-րդ դարը, երբ հիմնավորապես հաստատվեցին կացարանների ոճն ու կառուցվածքը, ույղուրական կացարանների հասունացման ժամանակաշրջանն էր: Երևան եկավ քառակուսի որմնախորշը՝ շուրջբոլորը խեցեգործական կավի զարդարանքով, որ իսլամի սուֆիզմի ազդեցությունն էր կրել:

2. Շինության կառուցվածքը



Ույղուրական կացարանների կառուցման ժամանակ ավանդաբար օգտագործվում է աղյուսի և չթրծված աղյուսի խառնուրդ, սակայն աղյուս-բետոնե կառուցվածքն այսօր ավելի ու ավելի է տարածվում, և տանիքի փայտե կմախքը կոնաձև է կամ եղևնաձև: Ընդհանրապես ույղուրական կացարանների հատակագիծը փոքր-ինչ ազատ է: Կան շատ տեսակներ, օրինակ՝ ուղղանկյուն տեսակ, L-աձև տեսակ, գոգավոր տեսակ և այլն... Ույղուրական երկհարկ կացարանները սովորաբար բարձր, հանդիսավոր և գեղեցիկ տեսք ունեն: Ներքնաբակը շրջապատված է պարսպով, որի մեջ հազվադեպ են պատուհաններ տեղադրվում, և այդպիսով ստեղծվում է ներփակ տարածք: Քանի որ Սինցզյանը գտնվում է բաց անապատում, և տարվա ընթացքում ջերմաստիճանը մեծ տարբերություններ է ունենում, քոչվորական յուրտ հիշեցնող լուսամուտները սովորաբար տեղադրվում են տանիքում՝ այդպիսով բնակչին հեռու պահելով արևի երկա-

ռատև ճառագայթահարումից և բարենպաստ պայմաններ ստեղծելով նրա առողջության համար: Միաժամանակ, որպեսզի լավ հարմարվեն Սինցզյանի անձրևոտ և ձյունառատ կլիմային, շինության մակերևույթը ծածկում են երկաթյա թիթեղներով, այնպես որ՝ ավելի ուժեղանա ջերմության պահպանման գործառույթը, ինչը հնարավորություն է տալիս ամռանն ապահովել զով, իսկ ձմռանը՝ տաք պայմաններ:

Երբ նայում ենք ներքին դասավորությանը, տեսնում ենք, որ ույղուրական կացարանները բաղկացած են ննջասենյակներից, ընդհանուր սենյակներից, անասնագոմերից, մառաններից, ներքնաբակերից և այլն... Բոլոր սենյակները կապված են սրահ-միջանցքներով, իսկ ավելի մեծ ույղուրական կացարաններում բազմակի ներքնաբակեր են ստեղծված: Ընդհանուր առմամբ ճարտարապետական երկու ձևեր կան՝ ծածկապատշգամբի գաղութային ոճը և *այվան* տեսակը: Ույղուր ժողովուրդը սիրում է ներքնաբակում աճեցնել ամեն տեսակի ծաղիկներ և պտղատու ծառեր, մասնավորապես խաղող: Որթատունկը կապված է միջանցքի և նախասրահի հետ և ամբողջովին ծածկված է կանաչ տերևներով՝ ամբողջ շինությունը կանաչով շրջապատելով և մարդկանց աչքի համար ստեղծելով թարմացնող բնության զգացողություն:

Ույղուրական կացարանները ձևավորման ու զարդարանքի առանձնահատուկ հմայք ունեն: Առաջին հերթին՝ դրանք շատ բան են յուրացրել արաբական շինարարական արվեստի ձևերից: Երկրորդ՝ ույղուրական կացարանները ժառանգել են մզկիթի ճարտարապետական ձևը՝ ցուցաբերելով խիստ կրոնական առանձնահատկություններ: Երրորդ՝ ներքին ձեւավորումը բավականին յուրահատուկ է: Դռների ճակատաքարին փորագրաքանդակներ կան, և դռները երկփեղկ ոճի են, ինչպես պատուհանները: Դռների փեղկերին ու պատուհաններին կան նաև բույսերի և երկրաչափական պատկերների նախշեր: Կացարանի ներքին հարդարման և ձևավորման մեջ իրոք բացառիկ է որմնախորշի ձևավորումը: Հիմանականում օգտագործվելով բնակատեղի զարդարման և այն գեղեցկացնելու համար՝ տարբեր ձևերի որմ-

նախորշերը, ինչպես, օրինակ, ուղղանկյուն, սրագագաթ կամարով, տարբեր են նաև չափով և խորությամբ: Որոշ մեծ որմնախորշեր կարող են նույնիսկ տեղավորել կահույք և անկողնային պարագաներ: Որպես ույղուրական կացարանների հստակ տարբերակիչ առանձնահատկություն ունեցող բաղադրիչ, բուխարին ի սկզբանե օգտագործվում էր ձմռանը տաքանալու համար, իսկ ավելի ուշ դարձավ ույղուրական կացարանների դեկորատիվ մաս: Բուխարու որոշ խխունջաձև և եռանկյունաձև անցքեր, այդ անցքերի վերնամասում գաջով պատրաստված քանդակների հետ զուգորդված, գեղեցկացրել են սենյակի ներսը:

3. Տեսակներ և առանձնահատկություններ

Ույղուրական կացարանները կարող են դասակարգվել չորս տեսակի՝ ըստ դիրքերի տարբերության:

<u>Հոթանի կացարաններ</u>

Բոլոր ժամանակներում հանրահայտ հոթանյան կացարանները, որ պատկանում են ճարտարապետական այն ձևին, որի մեջ հիմնական բաղադրիչը *այվան* բնակատեղն է, տարածված են հարավային Սինցզյանի շրջանում, որի կենտրոնը Հոթանն է: Միահարկ շինությունն իրենից ներկայացնում է ներքնապես շրջափակված տարածք: Դրսում ոչ մի անցք չեք գտնի, այլ միայն դուռն է: Հարթ տանիքներին լուսամուտներ են՝ լույսն ապահովելու համար: Բոլոր սենյակները լինում են երկու տեսակի՝ ամռան սենյակներ և ձմռան սենյակներ:

<u>Կաշիի կացարաններ</u>

Ընկած լինելով Սինցզյանից արևմուտք և մյուս շրջաններից հստակ առանձնանալով իր բնական միջավայրով՝ պայծառ կանաչ ներքնաբակեր են կառուցվել այդտեղ՝ մի քանի *այվան* բնակատեղերով: Սենյակների պատուհանները բացված են դեպի ներքնաբակ, որտեղ աճում են փթթուն ծաղիկներ ու ծառեր, իսկ սանդուղքները տեղակայված են տան դրսում՝

ստեղծելով խիստ մասնավոր ապրելակերպ: Ապակե լայն լուսամուտները սենյակում տեղադրված են լույսի համար, ինչը խիստ եզակի բան է համարվում: Սենյակները մի գծով միանում են սյունասրահի միջոցով՝ ձևավորելով բնակտարածքի մի խումբ, որը տեղի ժողովուրդն անվանում է *միմահանա*: Դրա համար էլ կաշի կացարանները կոչվում են նաև *միմահանա* կացարաններ:



Տուրֆանյան կացարաններ

Հյուսիսային Սինցզյանի Տուրֆանի կացարանները հայտնի են իրենց հողե կամարներով կառույցներով: Տուրֆանյան կացարանը սովորաբար ունի մեկ կամ երկու հարկ, ներփակ ներքնաբակով: Դրանց մեծ մասը մեկ և երկու հարկերի համադրություն է: Մեկ հարկանի բնակատեղը, որ կառուցված է հողե կամարով, ամբողջ շինության օժանդակ մասն է: Երկու հարկանի բնակատեղը հիմնական մասն է, որի վերին հարկը հյուրասենյակն է և ընդհանուր սենյակը, իսկ ներքևի մասը՝ նկուղը կամ կիսանկուղը, օգտագործվում է ամռանը կամ՝ որպես մառան: Այդպես կառուցված լինելը պայմանավորված է ամռան շոգ կլիմայով:

Յիլիի կացարաններ

Ույղուրական կացարանները Յիլիում բավականին տարբեր են հարավային Սինցզյանի կացարաններից: Թեք իջնող տանիքներով տները քաղաքացիական կառուցվածք ունեն, և պտղատու այգին ու ներքնաբակը միատեղ են: Ամենամեծ առանձնահատկությունը ընդհանուր միջավայրի ստեղծումն է: Նախագավիթը, խոհանոցը, առջևում որթատունկը համատեղված են, իսկ դրսից կանաչ միջավայր է, որ ձևավորում է խաղաղ, զով ու հարմարավետ կենսապայման:

4. Սովորույթներ և արգելքներ

Ույղուրական ավանդական կացարաններում շատ տաբու-արգելքներ և սովորույթներ կան: Եվ ամենաընդարձակ ու նրբագեղորեն զարդարված սենյակը սովորաբար պատրաստվում է հյուրերին ընդունելու համար: Ույղուրների սովորույթի համաձայն՝ հյուրերը պետք է նստեն *կանգի* վրա և իրենց կոշիկները հանեն դրանից առաջ: Ամենաընդունված դիրքը ծալապատիկ նստած դիրքն է: Իսկ երբ մեկն իր ոտքերն առաջ է մեկնում և թույլ է տալիս, որ դրանք ձգվեն դեպի մյուսները, հասարակական վայրերում դա ույղուրների կողմից համարվում է ոչ հարգալից ու ոչ քաղաքակիրթ: Սովորաբար այդտեղ որոշակի հատուկ գործվածք-սփռոց կա սեղանի համար, որի վրա հյուրի համար ուտելիք է դրվում, և երբեք չեն կարող ոտքերը դնել կամ նստել սեղանի սփռոցի վրա: Միաժամանակ պետք է խուսափել մյուս հյուրերի առջևից անցնելուց:

Ույղուրներն ունեն ընտանիքի մասին հատուկ պատկերացում և ըմբռնում: Ընտանիքին և հայրենի հողին կապվածությունն ու նվիրվածությունը ույղուրների կենդանի մշակույթի ու կենսակերպի հիմնական մասն է: Դրա համար էլ ույղուրների կյանքում ձևավորվել է ապրելակերպի կենդանի սովորույթ՝ «բաժանված ընտանիքներ, որ ապրում են միասնական ու անբաժանելի բակում»: Ավագների հանդեպ շատ մեծ հարգանք կա, երբ ույղուրական ընտանիք մի հյուր է գալիս, մարդիկ պետք է նստեն ըստ տարիքի, որպես կանոն՝ շատ տարեց, հարգված մարդը նստում է մեջտեղում:

Քանի որ ույղուրներն իսլամին են հավատում, նրանց կյանքն էլ արտացոլում է կրոնական մշակույթի առանձնահատկությունը: Ույղուրական կացարաններում արևմտյան կողմում դուռ չէ, այլ պատ է, քանի որ երբ աղոթում են, մուսուլմանները պետք է շրջվեն դեպի արևմուտք՝ Մեքքայի ուղղությամբ *(Չինաստանը Մեքքայից արևելք է ընկած - ծ. թ.)*: Արևմուտքում դուռ չկա, որպեսզի այդ կերպ ցուցադրվի Ալլահի հանդեպ մարդկանց հավատարմությունը: Ույղուրական կացարանների սենյակներում չի թույլատրվում միհրաբի *(Մեքքայի ուղղությունը ցույց տվող որմնախորշ, խորան - ծ. թ.)* պատերին կենդանիների կամ մարդկանց նկարներ կախել, և սովորաբար դրանք զարդարված են ծաղիկների ու խոտերի նախշերով կամ Ղուրանի խոսքերով, որ մասսայականացնում են իսլամը և բավարարում մարդկանց բազմատեսակ գեղագիտական պահանջարկը:

Որպեսզի ցույց տան իրենց հարգանքն իսլամի հանդեպ, պպզելիս չի թույլատրվում դեմքով նայել դեպի արևմուտք՝ Մեքքայի ուղղությամբ: Զուգարանը պետք է լոգարանից տարանջատված լինի, քանի որ մարդիկ պետք է մաքուր տեղի կարիք ունենան Ալլահին աղոթելու, երբ լողանում են:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՒՅ ԱԶԳՈՒԹՅԱՆ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԸ

Իսլամադավան հույ ազգության ներկայացուցիչներն ապրում են ամբողջ Չինաստանում: Նրանց կենսակերպն ու սննդակարգը կրում են իսլամի կրոնական հավատի ազդեցությունը: Եվ տարբեր տարածաշրջաններում գտնվող կացարաններն այնպիսի ճարտարապետական ոճով են, որ համապատասխանում են նրանց ազգային առանձնահատկությանը:

1. Զարգացման պատմությունը

Երկրում հույ ազգության հիմնավորվելը հանդիսանում է ամբողջ Չինաստանի միասնականության խորհրդանիշը: Այդ ազգությունը միավորվել է բազմաթիվ ազգությունների հետ: Հույ ազգության պատմության նման նրա բնակելի կացարանն էլ զարգացման չորս փուլ է անցել: Տան և Սուն գահատոհմերի իշխանության ժամանակաշրջաններն այդ կացարանի ձևավորման շրջանն են, երբ երկիրն ապրում էր տնտեսության ու մշակույթի աննախադեպ բարգավաճում, և իշխանությունները որդեգրել էին բաց դռների քաղաքականություն: Արաբ և պարսիկ գործարարները Մետաքսի ճանապարհով, և՛ ցամաքով, և՛ ծովով գալիս էին Չինաստան իրենց գործերը հոգալու: Այդ մեծահարուստ մուսուլման գործարարները լավ կենսապայմաններում էին ապրում: Նրանց կառուցած տները հիմնականում կղմինդրածածկ են: Արտաքին տեսքը, կառուցվածքը և հարմարությունները ոչ մի բանի ոչնչով չեն զիջում: Յուան գահատոհմի գահակալության տարիները այդ ամենի զարգացման ժամանակաշրջանն են, երբ մարդիկ Կենտրոնական Ասիայից, Արևմտյան Ասիայից, Պարսկաստանից ու Արաբստանից տեղափոխվում էին Չինաստանի լայնարձակ տարածքներ՝ պատերազմների պատճառով և առևտրական գործարքներ ծավալելու համար: Նրանք միախառնվեցին տեղի ժողովրդի հետ, և ի վերջո ձևավորվեց հույ ազգությունը: Կենցաղի պահանջարկները բավարարելու համար նրանք Չինաստան բերեցին իրենց հայրենի քաղաքի շինարարական կառույցները, որ իրենց մեջ ներառան հան ազգության ավանդական կացարանների տարրերը, և այդպիսով զարգացրին հարուստ բովանդակություն ունեցող՝ տարբեր ոճերի շինությունների կառուցումը: Մին և Ցին գահատոհմերի իշխանության շրջանը դրանց զարգացման ու հասունացման ժամանակաշրջանն է: Տուժելով պատերազմներից՝ հույ ազգության

շատ ներկայացուցիչներ ստիպված էին տեղափոխվել հեռավոր սահմանամերձ բնակավայրեր: Նրանք իրենց կացարանների կառուցման նախագծում ներառեցին ուղիղ անկյունը, եռակողմ բակը կամ սիհեյուանի բակը: Դրա համար էլ ձևավորվեցին հույ ազգության կացարանները՝ խիստ տարածաշրջանային կոլորիտով: Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնադրումից հետո, ժամանակակից շինությունների ազդեցությունը կրելով, հույ ազգության ներկայացուցիչները ձևափոխեցին հին կացարանները և նորովի խթանեցին իրենց ժամանակակից կացարանների շինարարությունը:

2. Շինության կառուցվածքը

Հույ ազգության կենցաղային սովորույթներն ու ավանդույթները մեծապես կրել են հան ազգության ազդեցությունը: Հետևաբար նրանց կացարանը ձևով նման է հան ազգության կացարանին: Ինչ վերաբերում է արտաքին տեսքին, հույ ազգության կացարանը հարավահայաց է, հարթ տանիքով: Պատերը հիմնականում կառուցված են տախտակի շրջանակների միջև լցված ցեխով, չթրծած աղյուսով և աղյուսածածկ ցեխով: Տանիքը փոքր-ինչ թեքված է մի կողմի վրա և ծածկված է փոքրիկ գորշ կղմինդրերով: Հույ ազգության կացարանների ամենամեծ առանձնահատ-

կությունը նրա հուբաոտոու դասավորվածությունն է, որ տարածված է լայնորեն: Կացարանի միջնամասը տան խորության 1/3 - ի չափով դեպի ներս է խորացած: Մարդիկ կարող են ամռանը սենյակի տարածքի ներսում վայելել զով օդը, իսկ ձմռանը տարբեր գործունեություն ծավալել: Բացի դա, այն պաշտպանում է մարդկանց ցուրտ ու սառը քամուց՝ ամբողջ տարին մարդկանց համար լավ ու հարմար տեղ լինելով: Երբ ներսից ենք նայում հատակագծին, տեսնում ենք, որ հույ ազգության կացարանները դասակարգվում են տարբեր ձևերով, օրինակ՝ չինական «—» կամ «二» խորհրդանիշերի նման, ուղիղ անկյան, եռակողմ բակի կամ սիհեյուանի բակի տների ձևի: Պատերը միացնում են հիմնական սենյակները և թևերի սենյակները՝ կազմելով պատիո՝ ներփակ ներքնաբակ: Առջևի դարպասը սովորաբար տեղադրված է բակի հարավարևելյան անկյունում: Իսկ հիմնական սենյակի ու թևային սենյակի միջև կան կողմնային սենյակներ՝ որպես խոհանոց և նպարեղենի սենյակ: Հույ ազգության շինությունների ներքնաբակում ճանապարհը սովորաբար ձևավորված է խաչի նման՝ ներքնաբակը բաժանելով չորս հատվածի: Բացի բնակատեղի հիմնական մասերից, ինչպիսիք են՝ ներքնաբակը, ընդհանուր սենյակը, խոհանոցն ու ննջասենյակը, եթե տանտերը միջոցներ ունի և կարող է թույլ տալ իրեն, ապա պատրաստվում է նաև փոքրիկ մի սենյակ՝ աղոթելու համար: Իհարկե, անհրաժեշտ է նաև լոգասենյակը՝ կաթսայով, տակառներով և լոգանքի համար նախատեսված այլ պարագաներով: Նինսյայի և Գանսուի նման վայրերում, հույ ազգության ներկայացուցիչներն ունեն «բարձր սենյակ»՝ կառուցված իրենց տների հենց կողքին՝ այդտեղից դուրս նայելու և իրենց ներքնաբակերն ու տները պաշտպանելու նպատակով:

Հույ ազգության ներկայացուցիչների բնակատեղի դասավորությունն

ու ձևավորումը տարբեր է հան ազգության ներկայացուցիչների բնակատեղի դասավորությունից ու ձևավորումից: Դրա առանձնահատկությունը գույների կիրառման մեջ է, որոնց մեծ մասը պարզ է ու բնական, խառն կամ շլացուցիչ գույնը չի խրախուսվում: Կանաչը նրանց սիրելի գույնն է: Նրանք կանաչ գույնը կիրառում են դռների, լուսամուտների և կահույքի համար, որպեսզի ստեղծեն խաղաղ, կենդանի և հարմարավետ մթնոլորտ: Իսկ մաքուր, պայծառ ճերմակը, որ սովորաբար օգտագործում են հույ ազգության մարդիկ, կիրառվում է պատերի և առաստաղների համար:

Ըստ կիրառման՝ հույ ազգության կացարաններն առհասարակ տարբերակվում են դասակարգման երկու տեսակով՝ ապրելու համար նախատեսված և խառը՝ գործարարության ու ապրելու համար նախատեսված: Պարզ կիրառման համար պատրաստված՝ ապրելու համար նախատեսված կացարանը հիմնականում օգտագործվում է առօրյա կյանքում: Ըստ դիրքերի տարբերության՝ այն կարող է ենթադասակարգվել երկու տեսակի՝ քաղաքային կացարաններ և գյուղական կացարաններ:

Հույ ազգության մարդկանց մեջ լավ է զարգացած գործարարությունը: Այդ պատճառով էլ գործարարության ու ապրելու համար նախատեսված կացարանի տեսակը հիմնականում օգտագործվում է և՛ գործարարական աշխատանք ծավալելու, ապրանքներ բաշխելու, արտադրանքի նախնական մշակման, և՛ ապրելու համար: Գործարարության տեսակների տարբերությանը համապատասխան՝ կացարանները կարող են դասակարգվել հետևյալ կերպ՝ խանութի տեսակ և արհեստանոցի տեսակ:

3. Սովորույթներ և արգելքներ

Հույ ազգության մարդիկ այնպիսի էթնիկ խմբի են պատկանում, որը հոգ է տանում մաքրության և շրջապատի գեղեցկության մասին: Նրանց կացարանների մի առանձնահատկությունն էլ այն է, որ սովորաբար բակերում բույսեր ու ծառեր կան: Նրանց պատկերացումներով՝ բույսեր տնկելը իմաստալից գործողություն է, որ նշանակում է հետևել սուրբ կանոններին: Տեղային պայմաններից ելնելով՝ այդ ընտանիքներից շատերը բակում պարտեզ ունեն, որտեղ աճեցնում են աքաղաղի կատար կոչվող ծաղիկներ, քաջվարդեր, նռնենիներ կամ դափնեվարդեր:

Տանիքի հեծանը տեղադրելիս, տունը կառուցելիս կամ նոր տուն տեղափոխվելիս հույ ազգության ներկայացուցիչները Ղուրան կարդալու հանդիսավոր արարողություն են կազմակերպում: Երբ տան կառուցումն ավարտում են, տանտերը բարեկամներին հրավիրում է ճաշկերույթի, և դա կոչվում է «ցեխը լվանալ»:

Քանի որ հույ ազգության ներկայացուցիչները բոլորն էլ իսլամադավան են, իսկ իսլամի սուրբ քաղաքը՝ Մեքքան, Չինաստանից արևմուտք է ընկած, նրանք արևմուտքը համարում են հարգանքի արժանի և այնպես են անում, որ ավագներն ապրեն արևմտյան սենյակներում, իսկ երիտասարդներն ապրում են արևելյան սենյակներում: Միաժամանակ, չինական ավանդական մշակույթի ազդեցությամբ, այն սենյակը, որտեղ ապրում է տարիքով ավագը, ավելի բարձր է, քան թևային սենյակներն ու բոլոր նախագծերով կառուցված կացարանների ցածր սենյակը: Ընդ որում՝ այն նայում է դեպի հարավ: Ինչ վերաբերում է ընտանիքներին, որտեղ եղբայրներ են ապրում, ավագն ապրում է արևմտյան կողմի սենյակում, որ արևելք է նայում, և ավելի ցածրադիր է, քան հիմնական տունը, բայց ավելի բարձր է, քան այն սենյակը, որտեղ ապրում է կրտսեր եղբայրը: Կրտսեր եղբայրը պետք է ապրի արևելյան սենյակում, որը նայում է դեպի արևմուտք, կամ հարավայինում, որը նայում է դեպի հյուսիս, ցուցաբերելու համար կրտսերների և ավագների միջև գոյություն ունեցող վարվեցողության համապատասխան պատշաճ կարգը:

Հույ ազգության ներկայացուցիչների տներում հազվադեպ են դիմանկարները, կենդանիների նկարները, մինչդեռ փոխարենը հաճախ կարելի է տեսնել լեռնային տեսարաններ, ծաղիկների նկարներ կամ երկրաչա-

փական պատկերներ, ինչպես նաև բույսերի նկարներ: Իսլամն այնպիսի կրոն է, որ պաշտում է միայն մեկ աստծո՝ Ալլահին: Աստվածապաշտ մուսուլմանական ընտանիքում արաբերեն և չինարեն կենտրոնական գալարափաթեթը բացառիկ զարդարանք չէ: Պատի օրացույցը, որ նույնպես սովորական բան է հույ ազգության ընտանիքում, սովորաբար տպագրվում է մահմեդական տարեցույցով: Մուսուլմանական և գրիգորյան օրացույցները երկուսն էլ կան՝ տեղյակ լինելու համար: Այդ ընտանիքներում շատ ընդունված է խնկարկումը: Ամեն ընտանիք պատրաստ ունի խնկի զոհասեղան և բուրվառ: Տունը մաքրելուց հետո մարդիկ մի քիչ խունկ են այրում, որպեսզի օդը թարմ ու հանգստավետ դառնա: Հույ ազգության ներկայացուցիչների կացարաններում ամենատարածված ու հայտնի զարդարանքները հորիզոնական գրված տախտակներն են և գալարափաթեթը՝ արաբերեն կամ պարսկերեն, որն այսպես կոչված *դուվան* է, որ նշանակում է աղոթել: Տանտերը *դուվան* կախում է դռան ճակատաքարից, որպեսզի ցույց տա, որ ինքը մուսուլման է և աղոթում է խաղաղության ու երջանկության համար: Հատկապես հարսանիքների օրերի, գարնան փառատոնի ժամանակ, նոր տուն տեղափոխվելով, մարդիկ խնդրում են իմամին երջանկության աղոթքի նամակներ գրել 0.3 մետր երկարությամբ կարմիր թղթի վրա և դա կախում են աչքի ընկնող տեղում:

ՇԱՐԺԱԿԱՆ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՅՈՒՐՏԵՐԸ՝ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Բազմաթիվ վաչկատուն, քոչվոր ցեղեր են ապրում հյուսիսային Չինաստանի լայնարձակ արոտավայրերում: Որպես չին ազգի մի մաս՝ նրանք ստեղծել են ինքնատիպ ու յուրօրինակ արոտավայրային մշակույթ, որը հազվագյուտ մի երևույթ է Չինաստանի պատմության մեջ: Մոնղոլական յուրտը մոնղոլների և չինական մյուս վաչկատուն ժողովուրդների համար տիպիկ կացարան է: Ունենալով պարզ կառուցվածք և խիստ գործնական կիրառություն՝ այն անհրաժեշտություն է արոտավայրերում ապրող քոչվոր ժողովուրդների առօրյա կյանքում:

1. Զարգացման պատմությունը



Մոնղոլական յուրտը, որն անցել է ձևավորման ու զարգացման պատմության երկարատև փորձառություն, ստեղծվել է արոտավայրում ապրող քոչվոր ժողովրդի համար: Ցին գահատոհմից առաջ ընկած ժամանակաշրջանը՝ դրա ձևավորման շրջանը, այնպիսի մի ժամանակ է, երբ նրանց նախնիներն զբաղվում էին որսորդությամբ և ձկնորսությամբ, որպեսզի պահպանեն իրենց գոյությունը: Նրանք ապրում էին կլոր հիմքով սրագագաթ հյուղակում: Կառուցված լինելով թեք և այնպես, որ առանցքը ծառայի որպես հենարան, ինչը հեշտությամբ հնարավոր էր կատարել, այն կարելի էր հեշտ հավաքել և քանդել: Դրսից այն ծածկվում էր կեչու կեղևով, որը պաշտպանում էր ցուրտ քամուց, ուժեղ արևից և հորդ անձրևից: Հյուսիսային և Հարավային Վեյ-Ցզին գահատոհմերի իշխանության ժամանակները, որ յուրտի զարգացման ժամանակներն էին, այնպիսի ժամանակաշրջան էին, երբ արտադրության եղանակը քոչվորի կենսակերպից անցում էր կատարում

հողագործության, և յուրտերը լայնորեն օգտագործվում էին: Եվ անիվների վրա գտնվող յուրտեր կարելի էր տեսնել այս ու այնտեղ, որոնք կարևոր դեր ունեին քոչվորների ապրելակերպի համար: Յուան գահատոհմի գահակալման տարիները դրա հասունացման ժամանակաշրջանն են: Քանի որ Յուան գահատոհմը հիմնադրվել էր մոնղոլների կողմից, վրանը շարունակում էր մնալ նրանց հիմնական կացարաններից: Այս շրջանում մոնղոլական յուրտերի արտադրության արհեստը հասավ բարձր մակարդակի: Շքեղ ու կատարելագործված յուրտի բարձր գագաթին մի անցք կա և դրսից ծածկելու թաղիք: Մին և Ցին գահատոհմերի տարիները յուրտի շարունակական զարգացման տարիներն են: Մին գահատոհմի հիմնադրումից հետո մոնղոլ իշխանավորները ետ գնացին դեպի *Մոբեյ* (հյուսիսային անապատ), և մոնղալական յուրտերը կատարելագործվեցին ու դարձան գեղեցիկ և գործառական: Հեշտ տեղադրվող և հավաքվող յուրտը առաջացավ հատկապես Ցին գահատոհմի ժամանակ՝ նոր խթան հաղորդելով մոնղոլական յուրտի զարգացմանը:

2. Շինության կառուցվածքը

Մոնղոլական յուրտերը հիմնականում կառուցված են երեք մասից՝ փայտե շրջանակ-կմախք, թաղիք (ծածկելու հիմնական նյութը), պարանի գոտի: Փայտե շրջանակ-կմախքը հիմնականում ներառում է *տաոնաոն* (վերևի անցքը, երդիկը), *վունին* (տանիքի հենքը), դուռն ու հենասյունը և այլն: *Տաոնաոն* փայտե շրջանակ-կմախքի գլուխն է և գտնվում է մոնղոլական յուրտի գագաթի կենտրոնում: Կլոր ձև ունի և բաղկացած է սկավառակից, որի վրա վեր խոյացող կամար կա: Դա ծխից ազատվելու, օդափոխման և լուսավորության համար է:

Վունին, որ սովորաբար տանիքի հենքին են ասում, բարակ ու երկար ձող է՝ ձվաձև կամ շրջանաձև կտրված մակերեսով: Յուրտը կրող *վունին* յուրտի հովանոցաձև ծածկը կազմող հիմնական մասն է, որ յուրտը կան-

գուն պահելու ժամանակ կավարի ու հեծանի դեր է կատարում: *Հանան* յուրտի խաչաձև շրջափակող պատը, կառուցվում է ուռենու փայտի՝ իրար միացված բարակ շերտերից: Դուռը, որ բաղկացած է շրջանակից, փեղկից, շեմից և վերադրակից, յուրտի միակ մուտքն է: Թաղիքային մասը բաղկացած է գագաթի թաղիքից, առաստաղից, շրջապատող թաղիքից, ընդգրկող թաղիքից, ներքևի պատի թաղիքից, վարագույրի թաղիքից և այլն:

Մոնղոլական յուրտի ձևավորումը չափազանց յուրահատուկ է: Գագաթի թաղիքը, առաստաղը, շրջապատող թաղիքի կողքերն ու հատակը բոլորը կարված են ուղտի մազից կամ ձիու մազից ու ձիու պոչից հյուսված թելերից և նրբաճաշակ ու գեղեցիկ տեսք ունեն: Կաշեփոկերից պատրաստված համապատասխան նախշերն օգտագործվում են յուրտի գագաթը շրջանակելու համար, որպեսզի խուսափեն քամուց: Մոնղոլական յուրտն առանձնահատուկ է իր թաղիքով, շուրջբոլորն արված՝ բոլոր տեսակի ծաղիկների նախշերով, և կենտրոնով, որ բոլոր տեսակի համապատասխան նախշեր ունի և ամպերի պատկերներ: Մոնղոլական յուրտի ներսի ձևավորումն ու կահավորումն արտացոլում է էթնիկ առանձնահատկությունը: Եվ յուրտի ներսում ամենուր ծաղիկների բոլոր տեսակի ու այլ նախշերով թաղիքներ են: Կահույքը նույնպես մոնղոլական յուրտում զարդարանքի մի տեսակ է, որ կարող ենք տեսնել Բուդդայի արձանի որմնա-

խորշից մինչև մգդակած վերմակների սեղանը (որտեղ մգդակած վերմակներ են դրված), սնդուկը, պահարանը, ամանների ու սպասքների դարակը, որոնք բոլորն էլ գունագեղ ու կենդանի պատկերներով են, ինչպես, օրինակ, ծառս լինող ձիեր, թռչուններ ու ծաղիկներ, նաև եղջերուներ ու եղնիկներ և այլն:

Յուրտի զարգացման ընթացքում կառուցվածքի մեջ կատարվող փոփոխությունները հանգեցրին տեսակների տարբերության: Ըստ տեսակի դրանք երկուսն են՝ մեքենայով տեղափոխվող և տեղում ամրակայված: Ըստ ձևի յուրտը կարելի է դասակարգել երկու տիպի՝ մոնղոլական և ղազախական: Ըստ ծածկող նյութի՝ յուրտը կարող է դասակարգվել հետևյալ կերպ: Սովորական յուրտերը ծածկվում են թաղիքով: Ալաշանում և Օրդոսում պատերի համար օգտագործում են մոնղոլական ուռենի (salix mongolica) և վարդագույն ուռենի: Տումոտեում մարդիկ օգտագործում են բամբուկ կամ փայտ: Չինաստանի հյուսիսարևելյան տարածաշրջանում, հատկապես Հեյլունցզյան նահանգում, մարդիկ օգտագործում են կեչի կամ ուռենի *հանա* պատրաստելու համար:

3. Սովորույթներ և արգելքներ

Մոնղոլական յուրտում բոլոր տեսակի հարմարանքներն ու պարագաները խստորեն հետևում են յուրատեսակ կանոնների: Կերակուր եփելու կրակի համար փոսը գտնվում է յուրտի կենտրոնում: Մոնղոլների մոտ ընդունված սովորույթի համաձայն՝ Բուդդայի արձանի որմնախորշը պետք է գտնվի հյուսիս-արևմուտքում, քանի որ դա Բուդդային կամ նախնիներին երկրպագելու գերագույն տեղն է: Յուրտի հատակին բարձ է դրվում: Իրերը պետք է ցուցադրվեն տարբեր տեղերում՝ ըստ դրանց տերերի սեռի: Տղամարդկանց պարագաները, ինչպես, օրինակ, որսորդական կամ մարտի գործիքներն ու զենքերը և ձիու գլուխ ունեցող երաժշտական գործիքը պետք է զբաղեցնեն մի կողմը՝ հյուսիսից արևմուտք: Թամբերը պետք է ցուցադրվեն հարավ-արևմուտքում: Կանանց պարագաները, օրինակ՝ հագուստները, արդուզարդը, հարդարանքի առարկաները և այլն, պետք է ցուցադրվեն հյուսիսից արևելք ընկած կողմում: Քանի որ բոլոր պարագաները դրվում են որոշակի ձևով, դրա գործնականությունը կարող է լավագույնս ապահովվել յուրտի սահմանափակ տարածության մեջ:

Մոնղոլների նախնիները սովոր էին վաչկատուն կյանքի և հավատում էին շամանիզմին ու տիբեթյան բուդդայականությանը, դրա համար էլ մշակել են իրենց յուրատեսակ սովորույթներն ու մշակույթը: Նախ՝ մոնղոլը հատուկ դիրք ունի յուրտում: Հյուրերը սովորաբար ցած են իջնում ձի-

ուց մոնղոլական յուրտից դուրս՝ հարավ կամ հարավ-արևմուտք ընկած սյան առջևում: Երբ հյուրը յուրտ է մտնում, նա պետք է անցնի յուրտի արևելյան դռնով, եթե փայտե դուռ կա: Դեռ հետևում են հին սովորույթին, երբ մարդիկ անցնում էին յուրտի ետնամասի թաղիքե դռան միջով: Տանտերը բարձրացնում է դռան վարագույրն աջ ձեռքով, իսկ հյուրերը պետք է դռան վարագույրը բարձրացնեն արևելքից և ներս մտնեն շեմի արևելյան կողմից: Անհրաժեշտ է հետևել նստելու խիստ կարգին, որի համաձայն՝ սովորական հյուրերն ու կրտսերները չեն կարող նստել *Տաոնաո* գլխավոր մատյանից դեպի հյուսիս, իսկ հյուրը կարող է նստել հյուսիս-արևմուտքում կամ արևմուտքում, բայց չի կարող տեղավորվել Բուդդայի արձանի համար սահմանված որմնախորշի առջևում: Երկրորդ՝ մոնղոլները շատ են հարգում ավագներին: Երբ ավագը գալիս է, տանտերը պետք է նրա ժամանելուն սպասի սյան առջևում, օգնի նրան իջնել ձիուց և ձին կապել: Եթե այցելության ժամանակ ավագին ուղեկցում են երիտասարդներ, նրանք թողնում են, որ առջևից ավագը գնա և առաջինը նա մտնի յուրտ: Եթե հյուրը պատրաստվում է հեռանալ, կրտսերները չեն կարող հեռանալ, մինչև որ նա առաջինը վեր չկենա: Բացի այդ ամենից, մոնղոլներն ուշադրություն են դարձնում իրենց արտաքինին: Անկախ նրանից, թե սոցիալական ինչ կարգավիճակ ունի հյուրը, նա պետք է ուղղի իր գլխարկը, կոճակները կոճկի, գոտին ճիշտ կապի և այլն: Ուրիշների տուն կարմիր գլխարկով այցելելը համարվում է շատ լուրջ անպատվություն: Երբեք չի կարելի հագուստի թևքերը կամ խալաթը վեր բարձրացնել: Ձիու կապը, առասանը, սանձը կամ նման պարագաներ հյուրերը պետք է դնեն յուրտից դուրս, ոչ թե կապեն գոտուն կամ ձեռքում պահեն: Վերջապես՝ տղամարդկանց և կանանց համար միանգամայն տարբեր ծեսեր են: Երբ կանայք այցելություն են կատարում, նախքան ձիերից իջնելը պետք է ձիերը քշեն հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևելք, փոխանակ ձիերից ցած իջնելու հարավում կամ արևելքում, ինչը կապված է այն սովորույթի հետ, որ մոնղոլի նախնին հարգում է ձիուն: Մոնղոլական յուրտում տեղ գրավելիս կանայք պետք է հետևեն այն կանոնին, որ պետք է նստեն արևելքում, այն պատճառով, որ կաթի թիթեղամանը, խոհանոցի

պահարանը և կենցաղային այլ պարագաներ այդ կողմում են ցուցադրվում: Տղամարդիկ պետք է նստեն արևմուտքում, որտեղ գտնվում են անասնապահական և որսորդական գործիքներն ու հարմարանքները, և սա համապատասխանում է արևմուտքի ու աջ կողմի նրանց կողմնորոշմանը:

Յուրտում ապրելու համար շատ արգելքներ կան: Մոնղոլների համար արգելված է, որ նրանց հյուրերը ոտքը դնում են շեմի վրա: Յուան գահատոհմի ժամանակ մահապատժի էին ենթարկում, եթե մեկը ոտքը դնում էր *օրդուի*, այն է՝ պալատի շեմի վրա: Մոնղոլական ընտանիքները մոլեռանդորեն երկրպագում են կրակին, քանի որ նրանց համոզմամբ օջախի կրակով կերակուր են պատրաստում, և այդ կրակը ջերմություն ու լույս է բերում, միաժամանակ նրանք օջախի կրակը համարում են ընտանիքի գոյատևման ու բարգավաճման խորհրդանիշ: Նրանք նաև հավատում են, որ կրակի մեջ կեղտ գցելը կամ կրակը սրով բորբոքելը պատճառ կդառնա ընտանիքի նվազման և ցրվելու: Յուրտի ներսի տարածությունը բաժանված է երեք օրհնված շրջանների, և իրերի տեղադրումը պետք է կատարվի ըստ նստելու տեղերի ութ դիրքերի չափանիշների: Օջախի կրակը յուրտում տեղադրվող իրերի մեջ գերագույն համարումն ունի: Որպեսզի որոշեն յուրտի կենտրոնը, որտեղ կրակի տեղը պիտի լինի, մարդիկ մի ծանր առարկա են կապում ընկնող գոտու մեջ և սպասում, մինչև որ այն ուղղահայաց դիրք է ընդունում հատակի վրայի մի կետի հետ, և այդ կետն էլ հենց կենտրոնն է, որտեղ պետք է լինի օջախի կրակը: Յուրտի հյուսիս-արևմուտքում եղող որմնախորշը տանը կառուցված տաճար է: Մոնղոլները երկրպագում են որմնախորշը և հաղորդակցվում են Բուդդայի հետ ամեն օր, քանի որ նա կրում է իրենց աղոթքն ու ակնկալիքները, և ահա թե ինչու տանտիրոջ և հյուրերի գլուխները, այլ ոչ թե ոտքերը պետք է ուղղված լինեն դեպի որմնախորշը, երբ նրանք քնում են:

Մոնղոլական յուրտում քնելիս պետք է ուշադրություն դարձնել շատ սովորույթների: Սովորաբար տանտերը քնում է հյուսիսում, իսկ ընտանիքի տարեցը քնում է արևմուտքում: Սակայն ավագների սենյակը բավականաչափ ընդարձակ չէ և այն պետք է փոխարինել արևելյան սենյակով, և կանայք կարող են քնել այդտեղ: Հյուրերը քնելու են հյուսիսում կամ արևմուտքում, որոնք համարվում են ամենալավ տեղերը: Քնած ժամանակ չպետք է ձեր ոտքերն ուղղեք մյուսների գլխի կողմը կամ որմնախորշի և կրակի ուղղությամբ: Արևմուտքում քնող մարդիկ պետք է իրենց գլուխը դեպի հյուսիս ուղղեն, մինչդեռ հյուսիսում քնողն իր գլուխը դեպի արևմուտք պետք է ուղղի, իսկ արևելքում քնողն էլ դեպի հյուսիս պիտի ուղղի:

ՑՅԱՆ ԱԶԳՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՇԵՆ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԸ

Ցյան էթնիկ խումբը Չինաստանի հնագույն ազգություններից է: Քանի որ այս ազգությունն ապրել է հեռու լեռներում և խոր անտառներում, պատմության մեջ քիչ գրառումներ կան նրանց մասին: Նրանք հիմնականում պարզ ու համարձակ մարդիկ են: Իրենց ճարտարապետական մշակույթը նույնպես շատ ինքնատիպ է: Սահմանափակված լինելով բնական և սոցիալ-մշակութային պայմանների բազմաթիվ գործոններով՝ ցյան ազգության կացարանները հարուստ են տեղային առանձնահատկություններով և դարձել են չինական հրաշալի ճարտարապետական մշակույթի անբաժանելի մասը:

1. Զարգացման պատմությունը

Ցյան ժողովրդի զարգացումն ու նրանց բնակատեղի զարգացումը սերտորեն կապված են: Ցին գահատոհմի գահակալությունից առաջ ընկած ժամանակաշրջանում, ցյան ազգության կացարանների ձևավորման ժամանակաշրջանում կենսապայմանները բավականին վատ էին, և մարդիկ թաքնվում էին լեռներում ու ապրում էին բնական քարանձավներում: Հաճախ ուտելիքն ու հագուստը չէին բավականացնում, և արտադրողականությունը շատ ցածր էր: Ցին և Հան գահատոհմերի ժամանակը, ցյան ազգության կացարանների զարգացման շրջանը, մի ժամանակաշրջան էին, երբ կենտրոնական կառավարությունն ամրապնդում էր իր իշխանությունը սահմանամերձ շրջաններում: Հարմարված լինելով տարածաշրջանի բնական պայմաններին ու միջավայրին՝ ցյան ազգության մարդիկ ապավինում էին բնական շինանյութերին և սկսեցին ստեղծել էթնիկ առանձնահատկություն ունեցող յուրահատուկ ու ինքնատիպ բնակելի շինություններ:

Տան և Սուն գահատոհմերի գահակալման ժամանակաշրջանը ցյան ազգության կացարանների վերջնական ձևավորման ժամանակաշրջանն էր: Տան և Սուն գահատոհմերի բարգավաճման և Կենտրոնական Հարթավայրի ու սահմանամերձ շրջանների միջև կապի ու հաղորդակցման աճի հետ՝ հան ազգության մշակույթն աստիճանաբար ներմուծվեց սահմանամերձ շրջաններ: Շինարարական առաջավոր տեխնոլոգիաների ներդրման հետ՝ ցյան ազգության կացարանների ճարտարապետական ձևի մեջ և կառուցման տեխնոլոգիայում զգալի առաջընթաց ու զարգացում տեղի ունեցավ: Մեծ քանակով հան ազգության մարդիկ տեղափոխվեցին ցյան

ազգության մարդկանց բնակելի շրջաններ: Միաժամանակ հան ազգության մշակույթը ներմուծվեց ցյան ազգության մշակույթի մեջ, ինչը շատ մեծ ազդեցություն ունեցավ ցյան ազգության բնակելի կացարանների ձևավորման վրա:

2. Շինության կառուցվածքը

Ցյան ազգության կացարանները, որ պատրաստվում են տարածաշրջանի տեղական բնական շինանյութերի պաշարներից, պարզ են իրենց կառուցվածքով, ունեն հաստ պատեր և փոքրիկ լուսամուտներ: Ցածր դուռը, որ պատրաստված է փայտե կլոր սյուներից, փայտե քառակուսի հեծանները և կենտրոնում փայտե հարթ դռները, կացարանի առաջին հարկի միակ բացվածքն է: Ցյան ազգության կացարանների դռները տարբեր են լինում, և հան ազգության կացարանների չույիուա դուռը ամենատարածվածներից է: Դռան վերևում կախված քարե սալը ծառայում է որպես անձրևից պաշտպանող ծածկ: Ցյան ազգության կացարանների շուրջ պատերը հիմքից մինչև գագաթ կառուցված են քարի կտորներով, հանքախորշի ավազով ու կավով: Բացի պատի միջի փոքր չափի սակավաթիվ բացվածքերից, լուսամուտի փոքրիկ մի անցք կա նաև տանիքում, որ բարելավում է ներքին միջավայրը. այն ունի փայտե շրջանակ մուտքի շուրջը, որը ծածկվում է փայտե տախտակով և սալաքարով, երբ անձրև է գալիս: Ցյան ազգության շինություններն արտաքինից քարակերտ են, իսկ ներսում փայտե կառուցվածք ունեն: Չմշակված փայտից սյուները, հեծանները, սալերը աստիճանները խնամքով հավաքված են՝ առանց նուրբ փորագրման ու քանդակման, և ունեն փոքր-ինչ պարզ ու հասարակ տեսք: Ամբողջ շինության միակ հիմնական ձևավորումն ու զարդարումը պատի մեջ գտնվող փոքր չափի բացվածքներն են և տանիքի քիվերի վրայի սպիտակ քարերը:

Ցյան ազգության կացարաններն, ընդհանուր առմամբ, որպես կանոն՝

եռահարկ շինություններ են: Ներքևում գտնվող ցածր դռնից կացարան մտնելուց հետո կարող եք տեսնել ընտանի անասուններին և կենցաղային սենյակը: Ոչ մի լուսամուտ չի տեղադրված՝ պաշտպանական անհրաժեշտության պատճառով, և տարածությունը համեմատաբար փոքր է՝ շրջապատված մերկ քարաժայռերով: Սյուներն ու հեծաններն օգտագործվում են ծանրությունը պահելու համար, փայտե շերտերով հատակը և փայտե միջնորմը՝ տարածքը բաժանելու համար, որ նույն արդյունքին է հասնում, ինչ ընդարձակ ու հարմարավետ բաժանված տարածքն է ունենում ժամանակակից կացարաններում: *Տանգվուն* և ննջասենյակը տեղակայված են երկրորդ հարկում: Սովորաբար հայտնի լինելով *տանգվու* անվամբ՝ ընդարձակ կենտրոնական սենյակը՝ ցյան ազգության կացարանների կենտրոնը, ցյան ժողովրդի համար գործունեության ամենակարևոր տեղն է: Դա մի տեղ է, որտեղ և՛ սնվում են, և՛ կրոնական հարցերով զբաղվում, և՛ ազատ ժամանակ անցկացնում, և՛ հյուրեր ընդունում, և՛ գործնական հարցեր քննարկում, որը ձևավորում է հիմնական սենյակի հատակագծի օրինակը՝ կենտրոն ունենալով բուխարին:

Ըստ շինանյութերի և ճարտարապետական ոճերի տարբերությունների՝ ցյան ազգության կացարանները բաժանվում են երեք տեսակի, դրանք են՝ քարե կացարանները, տախտակե տները և *դյաոլոու* կացարանները:

Լինելով առավել գերիշխող տեսակը՝ քարե կացարանները հայտնի են նաև որպես հավաբուն: Այն սովորաբար բաժանվում է երեք հարկի՝ յուրաքանչյուր հարկում միանման տարածությամբ ու առանձնահատկություններով: Առաջին հարկը սովորաբար օգտագործվում է ընտանի անասուն-

ներ պահելու համար և կիտված վառելափայտը համեմատաբար ցածր է: Երկրորդ հարկը՝ ապրելու և գործունեություն ծավալելու հիմնական վայրը, գլխավորապես բաղկացած է հիմնական սենյակից և ննջասենյակից: Երրորդ հարկի տափակ տանիքը և *չժաղլոուն* օգտագործվում են ուտելիք չորացնելու համար: Քարե կացարաններն ավելի փոքր են վերնամասում և ավելի մեծ են ներքնամասում՝ երկրաչափական սեղանի ձև կազմելով և ապահովելով կայունության զգացում:

Տախտակե տները՝ ցյան ազգության գանլան-ոճի քաղաքացիական տները, բնորոշ են իրենց եղևնաձև տանիքով, չուանդոու տիպի փայտե շրջանակով՝ որպես տան ներսի հիմնական շրջանակ, շուրջը՝ փայտի տախտակի ցանկապատ, և տան դրսից՝ քարաշեն պատ: Տախտակե տների ամենաուշագրավ առանձնահատկությունը հեծան-սյուն փայտե շրջանակը ծանրություն պահող համակարգի վերածելն է:

Դյաոլոու կացարանները ամենաբնորոշ ազգային տներն են ցյան ազգության կացարանների մեջ: Ցյան ժողովուրդը միավորում է դյաոլոուի կառուցվածքային առանձնահատկություններն ու իրենց ազգային ճարտարապետությունը՝ ստեղծելով երկուսի միացյալ ճարտարապետության հրաշքը: Հեռու տարածությունից նայելիս՝ տունն ամուր կցված է վեր խոյացող *դյաոլոուին*, որն ամբողջովին միաձույլ է ու համակցված:



3. Սովորույթներ և արգելքներ

Որպես հնագույն ազգություն՝ ցյան ժողովուրդը խիստ յուրահատուկ կենցաղային սովորույթներ ունի: Որպես կանոն՝ երբ ցյան ազգության մարդիկ սկսում են իրենց կացարանները կառուցել, դա նաև նշանակում է, որ նրանք աճում, բազմանում են: Նրանք ամուսնանալու են և ապրելու առանձին տան մեջ:

Ցյան ազգության մարդկանց համար մի շարք առանձնահատուկ սովորույթներ ու ծեսեր կան, երբ նրանք կառուցում են իրենց կացարանները: Բնակարանաշինության գործընթացը լավ նախապատրաստված է ցյան ազգության մարդկանց մոտ: Որպես կանոն՝ շինարարությունից երկու կամ երեք տարի առաջ սկսում են նախապատրաստել շինանյութերը, գումար հավաքել, միս և ուտելիք կուտակել, ապա նայելով օրացույցին՝ կախարդգուշակն ընտրում է բարեհաջող ամսաթիվը: Հաջողակ ամսաթիվը որոշելուց հետո գալիս է համապատասխան վայրն ընտրելու ժամանակը: Ընտրության հիմնական սկզբունքն է՝ «կանաչ բլուրներին նայող դռներ, ամբարին նայող գերեզմաններ»: Հան ազգության կացարանների ազդեցության հետևանքով՝ հետագայում, համապատասխան տեղն ընտրելիս, ցյան ազգության մարդիկ հակված են արդեն այնպիսի դիրք ընտրել, որ դուռը նայի դեպի արևելք: Այդ կերպ նրանք կարողանում են որոշել ոգիների հուշատախտակի դիրքը տան կառուցումն ավարտելուց հետո: Դրա-

նից հետո նրանք սկսում են կառուցել կացարանի հիմքը: Շինարարության սկիզբը պետք է լինի զույգ թվերով օրերին՝ ըստ լուսնային օրացույցի, սկսվելու է զոհաբերությամբ՝ կարմիր աքաղաղներ մորթելով, կամ էլ ոչխարների կամ խոշոր եղջերավոր անասունների արյունը ցողելով անկյունաքարին: Այնուհետև գուշակը և գլխավոր շինարարը բարեպատեհ խոսքեր պիտի ասեն նախքան խրամատներ փորելն ու քարը դնելը: Վերջապես, հրետանու որոտից հետո, մարդիկ սկսում են կառուցել պատը:

Կառուցման գործընթացում տանիքի հեծանի բարձրացման արարողությունը ամենահանդիսավոր արարողություններից է: Արարողության ամսաթիվը, երբ հեծանի բարձրացումը պիտի տեղի ունենա, սովորաբար ընտրվում է կախարդի կողմից: Արարողությունը գլխավորում է տանտիրոջ հորեղբայրը: Արծաթով, թեյով և բրնձով լի թղթե պարկեր պետք է դրվեն հեծանում ատաղձագործների կողմից բացված անցքի մեջ, այնուհետև կարմիր շորի կտոր պետք է կախվի հեծանի երկու կողմերից: Միևնույն ժամանակ Տայ Ցզի գծապատկեր-դիագրամ պիտի գծվի հեծանի կենտրոնում՝ երկու կողմերում սիմետրիկ, համաչափ կերպով չինարեն հիերոգլիֆներով գրված բառերով, որ նշանակում են «ճոխություն, հարստություն և պատիվ, և ոսկու ու նեֆրիտի սրահ»: Մարդիկ զոհեր են մատուցում Լու Բանին *(չին արհեստավորների և շինարարների համար աստվածություն դարձած հովանավոր — ծ. թ.)*, իսկ ատաղձագործը հմայության խոսք է մրմնջում, ապա հեծանի վրա կանգնած երիտասարդը վեր է ձգում պարանին կապված հեծանը: Այսպիսով կացարանի փայտակերտվածք կմախքի կառուցումն ավարտվում է: Սովորաբար ցյան ազգության կացարանների կառուցման աշխատանքը մոտ երկու տարի է տևում: Առաջին տարում կառուցվում են մեկ կամ երկու հարկ, իսկ ավելացվող հարկը պետք է կառուցել հաջորդ տարվա մեջ:

Ցյան ազգությունը պանթեիստական՝ համաստվածային հավատալիքներ ունի: Հետևաբար՝ ամենուր աստվածություններին երկրպագելու նշաններ կան: Նրանք տարբեր աստվածությունների են երկրպագում իրենց կացարաններում: Օրինակ՝ Հանչուանում նրանց կացարանների տանիքներն օգտագործվում են հինգ գլխավոր աստվածություններին՝ Երկնքին, Երկրին, Լեռներին, Թագուհուն և Տիրոջը երկրպագելու համար, որոնք խորհրդանշված են սպիտակ քարերով: Լի նահանգում ինն աստվածություններ կան, որոնք են՝ Երկնքի, Երկրի, Բաց Ճանապարհի, Լեռների, Ճարտարապետության, Նախահայրերի, Երկնի Դարպասների, Արհեստների, Դժոխքից Փրկչի և Հովանավորի աստվածությունները: Որպես կանոն, ցյան ազգության աշխարհագրական դիրքի տարբերությունը հանգեցնում է նաև նրանց պաշտամունքի առարկայի տարբերության ու փո-

փոխման: Ժամանակակից ցյան ժողովուրդն անասունի գլուխը նույնպես դնում է տանիքին՝ սպիտակ քարերի հետ, որպես զոհաբերություն: Շատ ընտանիքներում մարդիկ կակտուսներ են աճեցնում տանիքում և դրանք տեղադրում են առանցքի վերևում, որովհետև երկրպագում են այնպիսի մշտադալար բույսերի, որոնք դիմացկուն են, դիմանում են ցրտին ու երաշտին և իրենց բնույթով անթերի են:

Հան ազգության բնակարանային մշակույթը խոր ազդեցություն է գործել ցյան ազգության կացարանների զարգացման վրա: Ինչպես ցյան ազգության ասացվածքում է՝ «Դարպասը չափազանց ծանր է, մինչդեռ կացարանի հիմքը՝ ոչ», հան ազգության բնակավայրերի հարևանությամբ ապրող ցյան ազգության մարդիկ ընդօրինակելու են հան ազգության չույհուա դարպասը՝ կառուցելու համար իրենց սեփական դարպասը, քանի դեռ բավականին գումար ունեն: Միաժամանակ Թայ լեռան *շի-կան-տանը*, որն օգտագործվում է չարից խուսափելու համար, տեղադրվում է դռան կողքին: Որոշ վայրերում ցյան ազգության ներկայացուցիչների չույհուա դուռն իր տեսքով, կառուցվածքով ու զարդարանքով ճիշտ նույնն է, ինչ հան ազգության ներկայացուցիչների տան դուռը: Եվ դրա հավանական պատճառը դարպասի գործառույթն ու սիմվոլիկան են: Ցին Շուբաո և Յուչի Գոնգ դարպասի աստվածությունները երկուսն էլ երկրպագված և ընդունված են հան և ցին ազգությունների կողմից՝ արտահայտելով այն իմաստը, որ ատելությունը չարի հանդեպ յուրաքանչյուր ազգությանը ներհատուկ ընդհանրական բնույթ ունի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լյոսային բարձրավանդակի քարանձավային ժայռափոր կացարանները.....5
1. Քարանձավաբնակության (տրոգլոդիտիզմի) առաջացումը.....5
2. Շենսյանի քարանձավը.....7
3. Տեսակներ և առանձնահատկություններ.....9
4. Կենցաղային տաբու-արգելքներ.....10
Սիհեյուանը Յան Չժաո հարթավայրում.....12
1. Սիհեյուանի պատմությունը.....12
2. Սիհեյուանի կառուցվածքը.....14
3. Սովորույթներ և արգելքն.....17
«Զուրը չորս ուղղություններից հոսում է դեպի սրահ». Հույչժոուի քաղաքացիական շենքերը.....19
1. Հույչժոուի քաղաքացիական շենքերի ձևավորումը.....19
2. «Զուրը չորս ուղղություններից հոսում է դեպի սրահ». Հույչժոուի քաղաքացիական շենքերը.....21
3. Սովորույթներ և արգելքներ.....25
Կորեական ազգային կացարանները. հսկայական ջեռուցվող կանգը.....28
1. Զարգացման պատմությունը.....28
2. Շինության կառուցվածքը.....29
3. Տեսակներ և առանձնահատկություններ.....32
4. Սովորույթներ և արգելքներ.....33
Լիննանի Sotto Portico ծածկապատշգամբը առևտրական և բնակելի կիրառության համար.....35
1. Զարգացման պատմությունը.....35
2. Շինության կառուցվածքը.....37
3. Տեսակներ և առանձնահատկություններ.....38
4. Սովորույթներ և գործառույթներ.....39
Կայպինի դյաոլոուն՝ չինական և արևմտյան տարրերի ներդաշնակ համադրություն.....41
1. Զարգացման պատմությունը.....41
2. Շինության կառուցվածքը.....43
3. Տեսակներ և առանձնահատկություններ.....45
4. Սովորույթներ և արգելքներ.....46
Դայ ազգության բամբուկե տներն անտառում.....48

1. Զարգացման պատմությունը.....48
2. Շինության կառուցվածքը.....40
3. Տեսակներ և առանձնահատկություններ.....52
4. Սովորույթներ և արգելքներ.....53
Տուցզյա ազգության դյաոցզյաո շինությունը՝ լեռան ներքո և գետի մոտ.....55
1. Զարգացման պատմությունը.....55
2. Շինության կառուցվածքը.....56
3. Տեսակներ և առանձնահատկություններ.....58
4. Սովորույթներ և արգելքներ.....60
Ի կամ յի ազգության բնակելի տները լեռներում.....62
1. Զարգացման պատմությունը.....62
2. Շինության կառուցվածքը.....63
3. Սովորույթներ և արգելքներ.....66
Ույղուրների կացարանները խաղողի վազերի տակ.....68
1. Զարգացման պատմությունը.....68
2. Շինության կառուցվածքը.....69
3. Տեսակներ և առանձնահատկություններ.....71
4. Սովորույթներ և արգելքներ.....72
Իսլամական առանձնահատկություններ ունեցող հույ ազգության կացարանները.....74
1. Զարգացման պատմությունը.....74
2. Շինության կառուցվածքը.....75
3. Սովորույթներ և արգելքներ.....77
Շարժական մոնղոլական յուրտերը՝ արոտավայրերում.....80
1. Զարգացման պատմությունը.....80
2. Շինության կառուցվածքը.....81
3. Սովորույթներ և արգելքներ.....83
Ցյան ազգության քարաշեն կացարանները.....86
1. Զարգացման պատմությունը.....86
2. Շինության կառուցվածքը.....87
3. Սովորույթներ և արգելքներ.....90

ԴՈՆԳ ՔԻԱՆԳ

ԿԱՑԱՐԱՆՆԵՐ

Թարգմանիչ՝
Խորեն ԳԱՍՊԱՐՅԱՆ

Չինարենից անգլերեն թարգմանությունը՝
GU SIYAO

Ստեփանակերտ 2017

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեւոսյան
Էջադրումը՝ Մ. Ավանեսյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա. Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 70x108 $^{1}/_{16}$: Ծավալը՝ 6.25 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան, 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից»- 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը. մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը. Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ(հատոր 1) - 2016
Յու Ջիան. «Անձրևից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Փախուստ դրախտից» - 2016

Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Զենչկի. «Երիտասարդ վանականի սիրո պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն. ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան» (անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձիյե Թան. «Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը, դաոսիզմը, քրիստոնեությունը և չինական մշակույթը»- 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ(հատոր 2 և 3) - 2016

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +37497252323